


1553

250  
3K23  
—  
3.95



(47) 3232.1906

ԿՅԾ

Հ. Կ Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# Վ. Լ. ԵՆԻՆ ՀՈՒՆ ՎԱՐԻ



Կ Արուստյան 25

300  
658-ԼԵ

ԵՎԱՆ

1 9 2 6

10 .09. 2013

26 MAY 2005

Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

14 NOV 2009

300  
2658-ԼԵ

Ն. Ի. ԼԵՆԻՆ

3K23

Z-95

պ.

# ՀՈՒՆՎԱՐԻ

1006  
26314




«ԿՈՄՈՒՆԻՍՏ»-Ի ԳՐԱԳՐԱՐԱՆ № 7

7553

008  
33-4238

Տարված է «ԼԻՆՈՏԻՊՈՎ»



Ներկա գրքույկում հավաքված են Վլադիմիր Իլյիչ Լենինի այն հոդվածներն ու նկատողությունները, վոր գրել է նա 1905 թ. հունվարի 22 (9)-ի նախորդին ու անմիջապես հետո, և վորոնք տպված են 1905 թվին ժրնեվում լույս տեսնող «Вперед» թերթի նո. նո. 3-5-ում:

Վլադիմիր Իլյիչը միայն առաջնորդող հոդվածներ չէր գրում նա կատարում էր և սև աշխատանք. թարգմանում էր արտասահմանյան թերթերի տեղեկությունները և միացնում մի փոքրիկ հոդվածի մեջ, տալիս էր հունվարի 22 (9)-ի դեպքերի մասին Ռուսաստանից ստացած թղթակցությունների համագումարը (СВОДКА), ըստ վորում վերջին նյութերի մի մասը գրել է Մ. Ուլմինսկու հետ միասին:

Այս նյութերի մեծ մասը Վ. Ի. Լենինի «Աշխատությունների լիակատար ժողովածուի» մեջ չի ղետեղված:

Տպագրական տրեստի առաջին տպարան

Գրառեսպիս 282 ր.      Պատվեր 1519      Տիրաժ 3000

## ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Գործադուլը, վոր սկսվել է հունվարի 3-ին Պուտիլովի գործարանում, դառնում է բանվորական շարժման ամենահոյակապ արտահայտություններից մեկը: Մեր տեղեկությունները կազմում են առ այժմ արտասահմանյան և ռուսական լեզալ թերթերի հաղորդագրությունները: Բայց այդ հաղորդագրություններն էլ կասկած չեն թողնում, վոր գործադուլը դարձել է արդեն հսկայական կարևորություն ունեցող քաղաքական դեպք:

Գործադուլի սկզբնավորությունը յեղել է զուտ տարեբային: Աշխատանքի և կապիտալի շարունակ կրկնվող ընդհարումներից մեկը այժմ անգամ տեղի յե ունեցել այն պատճառով, վոր գործարանի վարչությունն արձակել է չորս բանվորի: Բանվորները համերաշխության վողով լցված, ապստամբել են, պահանջելով, վոր արձակվածները յետ ընդունվեն: Շարժումը արագորեն ամրապնդվել է: Շարժմանը մասնակցում է «Ռուսական Փարբ.—գործարանային բանվորների» լեզալ ընկերությունը, և գործադուլը մտնում է իր հետևյալ բարձր փուլի մեջ:

Բանվորական լեզալ ընկերությունը զուբատովցիների առանձին ուշադրության առարկան էր: Յեվ ահա զուբատովյան շարժումը զուրս է դալիս իր շրջանակներից և, հոգուտ վոստիկանություն, հոգուտ միապետությունը աջակցելու և բանվորների քաղաքական գիտակցությունը այլասերելու համար վոստիկանության սկսած այդ շարժումը՝ դառնում է միպետության դեմ, դառնում է պրոլետարական դասակարգային պայքարի պայթյուն:

Սոցիալ-դեմոկրատները վաղուց արդեն մատնանչել են, վոր մեր զուբատովչիների անխուսափելիորեն տալու յն այդպիսի հետևանքներ: Բանվորական շարժման լեզալիզացիան, —ասում է յին նրանք,—անպայման ոգուտ կր բերի մեզ՝ սոցիալ-դեմոկրատներ-

րիս, նա շարժման մեջ կը քաշի բանվորները մի քանի, առանձնապես հետամնաց շերտերը. նա կողնի թափահարել նրանց, վորոնց վոչ չուտ, գուցե և, յերբեք չթափահարեր սոցիալիստ ազիտատորը: Իսկ մի անգամ արդեն շարժման մեջ առնված և իրենց վիճակի խնդրով շահագրգռված բանվորները կերթան առաջ: Բանվորական լեզալ շարժումը կը լինի միայն նոր, ալիլի լայն հիմք սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման համար:

Անկասկած է, վոր բանը հենց այսպես էլ յեղել է Պետերբուրգում:

Յերկու հանգամանք ողնել են շարժման առանձնապես ընդարձակվելուն. 1-ը՝ հարմար մոմենտը տնտեսական պայքարի համար (կառավարութունը կարիք է դրում՝ ուղղական և ծովային մի-նիստրութունների պատվերների շտապ կատարման), 2-րդ՝ սահմանադրական շարժումը հասարակութան մեջ: Գործադուլը սկսելով առանձին հեռացված ընկերներին պաշտպանելու համար բանվորները դիմել են տնտեսական լայն պահանջների: Նրանք պահանջել են 8-ժամյա բանվորական օր, նվազագույն վարձատրութուն (տղամարդուն 1 ռուբլի, կնոջը՝ 70 կոպեկ), վերացումն պարտադիր արտաժամյա աշխատանքների (և դրանց կրկնակի վարձատրութունը, սանիտարական պայմանների և բժշկական ոգնութան բարելավում և այլն): Գործադուլն սկսել է դառնալ ընդհանուր:

Արտասահմանյան ուրբաթ օրվա, հունվարի 8 (21)-ի թերթերը հաղորդում են, վոր անգամ ուսական պաշտոնական տեղեկութունների համաձայն—աշխատանքը կանգ է առել 174 դործարանում, Փարբիկայում և արհեստանոցում, վորոնց բանվորների թիվը հասնում է մոտ 96,000-ի:

Մեր առջև է պրոլետարների ձեռներդրող դասակարգի՝ իր թշնամիների հետ կատարվող մեծ ընդհարումներից մեկը, ընդհարումներ, վորոնք իրենց հետքերը թողնում են յերկար տարիներ:

Բայց բանը տնտեսական պահանջներով չսահմանափակվեց: Եարժումն սկսեց ընդունել քաղաքական բնույթ. փորձել են շարժմանը մասնակցել (թեև տակավին շատ թույլ) տեղական սոցիալ-դեմոկրատները: Մի քանի հազար հոգուց բաղկացած բանվորական հսկայական ժողովներում ընկնել են քաղաքական պահանջներ և քվեարկվել են բանաձևեր՝ հոգուտ քաղաքական ազատութան: Հաղորդում են, վոր բանվորների մշակած պետիցիան բաժանվում

և յերեք մասի: Առաջինը՝ իրավունքի պահանջ է դնում ժողովրդի համար: Յերկրորդը՝ ժողովրդի չքավորութան դեմ պայքարելու միջոցներ: Յերրորդը՝ միջոցներ կապիտալի կողմից աշխատանքը ճնշելու դեմ: Առաջին մասի պահանջներն են—անձի անձեռնմխելիութուն, խոսքի, ժողովների և խղճի ազատութուն, պարտադիր զարոցական ուսում պետութան միջոցներով, ժողովրդի ընտրովի ներկայացուցիչներին մասնակցութուն որենադրութան մեջ, հավասարութուն որենքի առաջ, մինիստրներին պատասխանատվութուն, փրկանքների վերացում, մատչելի վարկ, պետական հողերի հետզհետե բաժանումը ժողովրդին, յեկամտային հարկ: (Յեթե այս հաղորդագրութունը ձիշտ է, նա չույց է տալիս ուրեմն, թե ինչ հետաքրքրական բեկում է ունեցել սոցիալ-դեմոկրատների ծրագիրը մասսայի կամ նրա սակավ գե-տակից ղեկավարների դիմում): Անգլիական «The Standard» թերթի թղթակիցը հաղորդում է, վոր հունվարի 5(18)-ին յեղել է յերեք ժողով (մեկը չորս հազար հոգուց, մյուսը՝ 2000), և վոյ ընդունվել են քաղաքական այսպիսի պահանջներ. 1) Անմիջապես գումարել ընդհանուր ձայնատվությամբ ընտրված հիմնադիր ժողով, 2) Պատերազմի դադարեցում, 3) Քաղաքական ազատւոյաների և բանադրկայների լիակատար ներում, 4) Մամուլի և խղճի ազատութուն, 5) Ազատութուն ժողովներին և միութուններին: Արտասահմանյան՝ հունվ. 8-ի (21) թերթերը հաղորդում են, վոր հունվ. 9-ին(22) պատրաստվում է ցույց Չմեռային պալատի առջև, ուր և պիտիցիա յե ներկայացվելու «Իրան, թագավորին»: Բանվորները հայտարարում են՝ ազատութուն կամ մահ: Մոսկվայից և Լիբավայից բանվորական պատվիրակներ են դնում Պետերբուրգ:

Սրանք են այն սահմանափակ և տակավին չստուգված տեղեկութունները, վոր ունենք ներկա մոմենտին: Հավանորեն շարժումը տակավին չի հասել զարգացման բարձրագույն աստիճանին և պետք է սպասել դեպքերի՝ կատարվածը լիակատար գնահատելու համար: Աչքի յե ընկնում այն, վոր շարժումը զարմանալիորեն գուտ-տնտեսականից փոխվել է քաղաքականի, աչքի յե ընկնում տասնյակ և հարյուր հազար պրոլետարիատի ահազին համերաշխութունը և յեռանդը, չնայած գիտակից սոց.—դեմ. ներգործության բացակայության կամ աննշան ներգործության: Այն պրիմիտիվ սոցիալիստական հայուցները, վոր ունեն շարժման ղեկավարներից մի քանիսը և այն միամիտ հավատը, վոր ունեն բանվոր

դասակարգի մի քանի տարրերը դեպի թաղավորը, — չեն պակասեցնում, այլ ավելի շուտ ուժեղացնում են պրոլետարիատի մեջ յեղած հեղափոխական բնազդի նշանակությունը: Առաջավոր ճշնչված դասի քաղաքական բողոքը և նրա հեղափոխական յեռանդը հորդում — անցնում են բոլոր պատմեցները — և՛ արտաքին, վարկանդնած են վոստիկանական արգելքների ձևով, և՛ ներքին, վարգոյություն ունեն դեկավարներից վոմանց անդարդացած և հետամնաց գաղափարների ձևով: Սոցիալ-դեմոկրատիայի աշխատանքը վերջին տասնամյակի ընթացքում և բանվորական շարժման դասերը այն ժամանակաշրջանում ավել են իրենց պտուղները սացիալիզմի և քաղաքական պայքարի գաղափարները հոսել են ամենալայն հուններով: Պրոլետարիատը գործով ցույց է տալիս, վարկուսաստանի քաղաքական շարժման ասպարիզում միայն յերկու ուժեր չեն (միապետություն և բուրժուական հասարակություն), ինչպես վաքրոդությունը պատրաստ էլին մտածել վոմանք: Պրոլետարիատը մեզ ցույց է տալիս իսկապես հեղափոխական դասակարգային ուժերի մոբիլիզացիայի բարձր ձևեր. մոբիլիզացիան նման է, պարզ է, վոչ թե վարեե քաղաքային գումայի մեջ կատարված յերկրորդական ցույցերին, այլ այն մասսայական շարժումներին, ինչպիսին երկուստովի ցույցը և հարավային գործադուլները 1903 թվին: Յեվ պրոլետարիատի հեղափոխական ուժերի այս նոր և բարձր մոբիլիզացիան յոթնամդոն քայլերով տանում է մեզ ավելի ևս վճռական, ավելի ևս գիտակից յերույթի — միապետություն դեմ կովելուն:

## Ն. ԼԵՆԻՆ

ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ  
 ՀԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ՈՐԵՐ  
 ԳՎԱՐՑՈՎԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ  
 ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿՈՎԻ ԾՐԱԳԻՐԸ  
 ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԳԻ ԴԵՄ  
 «ՀԱՅՐ-ԹԱԳԱՎՈՐԸ» ՅԵՎ ԲԱՌԻԿԱԴՆԵՐԸ

«Вперед» № 1  
 31/18 հունվարի 1905.



ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՌՈՒՍԱՍՏԱՆ-  
ՆՈՒՄ 1905 Թ.

Ժրմև, չորեքշաբթի, 25 (12) հունվարի

Մեծազույն պատմական անցքեր են կատարվում Ռուսաստանում: Պրոլետարիատն ապստամբել է ցարիզմի դեմ: Պրոլետարիատին ապստամբության հասցրեց կառավարութունը: Այժմ հաղիվ թե կարելի լինի կասկածել այն բանում, վոր կառավարութունը դիմամբ է թույլ տվել, վոր գործադուլային շարժումը զարգանա համեմատաբար անարգել և սկսվի լայն դեմոնստրացիա, կամենալով բանը հասցնել զինվորական ուժի գործադրության: Յեվ նա բանը հասցրեց այդտեղ: Հաղարավոր սպանվածներ և վիրավորներ—սրանք են Պետերբուրգի արյունոտ կիրակի որվա, հունվարի 9-ի հետևանքները: Զորքը հաղթեց անդեն բանվորներին, կանանց և յերեխաներին: Զորքը հաղթեց թչնամուն, պնդակահարելով հողի յերեսին պառկած բանվորներին: «Մենք նրանց լավ դաս տվինք», անվորակելի ցինիզմով ասում են այժմ ցարի սպասավորները և նրանց յեվրոպական լաքեյները՝ պահպանողական բուրժուազիայի շրջանից:

Այո՛, դասը մեծ էր: Ռուս պրոլետարիատը այդ դասը չի մտնանա: Բանվոր դասակարգի ամենանպատրաստ, ամենահեռամնաց շերտերը, վոր միամիտ հավատ ունեյին թագավորի վրա և անկեղծորեն ցանկանում էյին խաղաղ կերպով «իրան, թագավորին» հանձնել տանջված ժողովրդի խնդիրքը, նրանք բոլորը դասառան զինվորական ուժերից, վորոնց ղեկավարում էր թագավորը կամ թագավորի հորեղբայրը՝ մեծ իշխան Վլադիմիրը:

Բանվոր դասակարգը քաղաքացիական կռվի մեծ դաս առավ պրոլետարիատի հեղափոխական դաստիարակութունը մի որվտ մեջ այնպիսի քայլ արավ, վոր չեր կարող անել գորչ, առորյա, մոռացված կյանքի ամիսների և տարիների ընթացքում: Պետերբուրգի հերոսական պրոլետարիատի լողունը՝ «մահ կամ ազատութուն»—արձագանքով տարածվում է այժմ վողջ Ռուսաստանում: Դեպքերը զարգանում են զարմանալի արագությամբ: Ընդհանուր գործադուլը Պետերբուրգում աճում է: Արդյունաբերական, հասարակական և քաղաքական ամբողջ կյանքը անդամալուծվե է: Յերկուշարթի, հունվարի 10-ին, բանվորների ընդհարումները գորքի հետ դառնում են ավելի կատաղի: Հակառակ կառավարական սուտ հաղորդադրության—արյուն է թափվում մայրաքաղաքի շատ մասերում: Վտոքի յեն յենում Կոլպինի բանվորները: Պրոլետարիատը զինվում է և զինում է ժողովրդին: Ասում են՝ բանվորները գրավել են Սեստրորեցկի զինապահեստը: Բանվորները վերցնում են ատրճանակներ, իրենց գործիքներից շինում են հրացաններ, ձեռք են բերում ուժերը՝ ազատության համար կատաղի պայքար մղելու: Ընդհանուր գործադուլը տարածվում է դավառներում: Մոսկվայում 10,000 մարդ արդեն թողել են աշխատանքները: Վաղը (հինգշաբթի, հունվարի 13-ին) նշանակված է ընդհանուր գործադուլ Մոսկվայում: Ապստամբութուն է բռնկել Ռիգայում: Բանվորները ցույցեր են անում Լոժում, պատրաստվում է Վարչավայի ապստամբությունը, պրոլետարիատի դեմոնստրացիաներ են կատարվում Հելսինգֆորսում: Բաղվում, Ողեսայում, Կիևում, Սարկովում, Կոպնոյում և Վիլնայում աճում է բանվորների խմորումը և լայնանում է գործադուլը: Սևաստոպոլում վառվում են ծովային վարչության պահեստներն ու զինանոցը (արսենալ), և զորքը հրաժարվում է կրակ բանալ ապստամբած նավատիների վրա: Գործադուլ է Ռեևոյում և Սարատովում: Ռազոմում գորքի հետ զինված ընդհարվում են բանվորներն ու պահեստի զինվորները:

Հեղափոխությունը տատանվում, ծավալվում է: Կառավարությունն արդեն դեռ ու դեն է ընկնում: Նա արյունոտ հարածանքի քաղաքականությունից փորձում է անցնել տնտեսական զիջումների և ազատվել վողորմությամբ կամ ինը ժամյա բանվորական սրվա խոստումով: Բայց արյունոտ որվա դասը չի կարող իզուր անցնել: Պետերբուրգի ապստամբած բանվորների պահանջը—հիմ-

նադիր ժողովի անմիջապես դուժարում՝ ընդհանուր, ուղղակի, հավասար և զաղտնի ընտրական իրավունքի հիմունքով,—պետք է դառնա բոլոր բանթող բանվորների պահանջը: Անմիջապես տատարել կառավարությունը—հա այն լողունը, վորով հունվարի 9-ի սպանդանոցին պատասխանեցին անգամ ցարին հավատող՝ Պետերբուրգի բանվորները, պատասխանեցին իրենց առաջնորդի՝ քահանա Գյորգի Գապոնի չրթունքներով, վորն այդ արյունոտ որից հետո ասաց. «Մենք այլևս թաղավոր չունենք: Արյուն գետը թաղավորին բաժանում է ժողովրդից: Կեցցե՛ ազատության համար տարվող պայքարը»:

Կեցցե՛ հեղափոխական պրոլետարիատը,—կասենք մենք: Ընդհանուր գործադուլը վտոքի յե հանում և մորիլիզացիայի յե յենթարկում բանվոր դասակարգի և քաղաքային չքավորների հետոհետե ավելի լայն մասսաներ: Ժողովրդի զինումը դառնում է հեղափոխական մոմենտի մոտակա խնդիրներից մեկը:

Միայն զինված ժողովուրդը կարող է իսկապես հենարան լինել ժողովրդական ազատության: Յեվ վորքան շուտ աջողվի պրոլետարիատին զինվել, վորքան յերկար մնա նա իր բանթող-հեղափոխականի ռազմական դիրքում, այնքան ավելի կը գտնվեն մարդիկ զինվորների չրջանում, վորոնք կը հասկանան, վերջապես, թե ինչ են անում իրենք, վորոնք կը կանգնեն ժողովրդի կողմը ընդդեմ հրեշների, ընդդեմ բռնակալի, ընդդեմ անգն բանվորներին, նրանց կանանց և յերեսխաներին սպանողների: Ինչպես էլ վերջանա այժմյան ապստամբությունը Պետերբուրգի մեջ, համենայն դեպս, նա անխուսափելիորեն և անվրեպ կերպով կը դառնա տաղքին աստիճանը ել ավելի լայն, ավելի գիտակից, ավելի պատրաստված ապստամբության: Կառավարությանը, գուցե, աջողվի հետաձգել դատաստանի ժամը, բայց այդ հետաձգումն ավելի հոկայական կը դարձնի հեղափոխական գրոհի հետագա քայլը: Հետաձգումից կողավի միայն սոցիալ-դեմոկրատիան կազմակերպված մարտիկների շարքերը խտացնելու և Պետերբուրգի բանվորների նախաձեռնության մասին լուրեր տարածելու համար: Պրոլետարիատը, թողնելով Փարբիկներն ու գործարանները, կը միանա պայքարին և զինվելու պատրաստություն կը տեսնի: Քաղաքային չքավորների չրջանում, միլիոնավոր գյուղացիների չքջանում պետք է ավելի լայն, ընդարձակ տարածում ստանան ազատության պայքարի լողունները: Հեղափոխական կոմիտեներ պի-

տի հիմնվեն յուրաքանչյուր Փարբիկում , քաղաքի յուրաքանչյուր  
օսյոնում , յուրաքանչյուր աչքի ընկնող գյուղում : Ապստամբած  
ժողովուրդը կսկսի տապալել ցարական միապետութեան բոլոր և  
ամեն տեսակի հիմնարկները , հայտարարելով հիմնադիր ժողովի  
անմիջապես գումարում :

Բանվորների և ընդհանրապես բոլոր քաղաքացիների անմի-  
ջապես զինում , հեղափոխական ուժերի պատրաստութիւն և կազ-  
մակերպում՝ կառավարական իշխանութիւնը և հիմնարկները  
վոչնչացնելու համար ,—ահա այն գործնական հիմունքը , վորի  
վրա կարող են և պետք է , ընդհանուր հարվածի համար , միանան  
բոլոր և ամեն տեսակի հեղափոխականները : Պրոլետարիատը միշտ  
պետք է գնա իր ուրույն ճանապարհով , չթուլացնելով իր կապը  
սոց .-դեմոկրատական կուսակցութեան հետ , հիշելով իր մեծ ,  
մարդկութիւնը ամեն տեսակի շահագործումից ազատելու վերջ-  
նական նպատակները : Բայց սոցիալ-դեմոկրատական պրոլետա-  
րական կուսակցութեան այդ ուրույնութիւնը յերբեք չի ստիպի  
մեզ մոռանալ ընդհանուր հեղափոխական գրոհի կարևորութիւնը  
ներկա հեղափոխութեան մոմենտին : Մենք՝ սոցիալ-դեմոկրատ-  
ներս , կարող ենք և պետք է գնանք բուրժուական դեմոկրատիայի  
հեղափոխականներից անկախ , պահպանելով պրոլետարիատի դա-  
սակարգային անկախութիւնը , բայց մենք պետք է ձեռք-ձեռքի  
աված ընթանանք ապստամբութեան ժամանակ , ցարիզմին ուղղակի  
հարվածներ հասցնելու միջոցին , զորքին յետ մղելու ժամանակ ,  
ամբողջ ուս ժողովրդի անիծյալ թշնամու՝ Բաստիլիայի վրա հար-  
ձակվելու ժամանակ :

Այժմ վողջ Ռուսաստանի պրոլետարիատին է նայում ամբողջ  
աշխարհի պրոլետարիատը՝ տենդային անհամբերութեամբ : Յա-  
բիզմի տապալումը Ռուսաստանում , վոր հերոսաբար սկսել է մեր  
բանվոր դասակարգը , կը լինի անկյունաքարձ բոլոր յերկրների  
պատմութեան մեջ , ամեն ազգի բոլոր բանվորների գործի թեթե-  
վացում՝ բոլոր պետութիւններում , յերկրազնդի բոլոր ծայրե-  
րում : Յեվ թո՛ղ յուրաքանչյուր սոցիալ-դեմոկրատ , թո՛ղ յուրա-  
քանչյուր զիտակից բանվոր հիշի , թե այժմ համաժողովրդական  
պայքարի ինչպիսի մեծագույն խնդիրներ են ծանրացած իր ուսե-  
րին : Թող չմոռանա , վոր ինքը ներկայացնում է ամբողջ գյուղա-

ցիութեան , ամբողջ աշխատավոր և շահագործվող մասսայի , ամ-  
բողջ ժողովրդի կարիքներն ու շահերը ընդդեմ համաժողովրդա-  
կան թշնամու : Ի ոլորի աչքի առջև է այժմ Պետերբուրգի հերոս  
պրոլետարների օրինակը :

Կեցցե՛ հեղափոխութիւնը :

Կեցցե՛ ապստամբած պրոլետարիատը :



# ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԵՐ

Ի՞նչ է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Սոցիալիստական թե հեղափոխություն: Այսպես են դնում հարցը յեվրոպական ժուրնալիստները և լրագրողները (ընդհանրապեսները), վոր հաղորդում են ամբողջ աշխարհին Պետերբուրգի դեպքերի մասին և փորձում են տալ նրա դնահատականը: Սոցիալարանքը են թե ապստամբներ այդ տասնյակ հազարավոր պրոլետարները, վորոնց դեմ հաղթանակորեն յեյալ ցարական զորքը: Յեվ արտասահմանյան թերթերը, վոր ավելի հնարավորություն ունեն դեպքերը «կողքից», տարեգրողների անաչառությունը, դիտելու, դժվարանում են պատասխանել այս հարցին: Նրանք շարունակ մի տերմինը չփոխում են մյուսի հետ: Յեվ զարմանալի չէ: Իզուր չեն ասում, թե հեղափոխությունը հաջողված խոտվություն է, իսկ խոտվությունը չաջողված հեղափոխություն: Ո՞վ ներկա յե մեծ և հակայական դեպքերի սկզբնավորության, ո՞վ հնարավորություն ունի լուրջ լրիվ, անստույգ և յերրորդ ձևով իմանալ վորևե բան տեղի ունեցող դեպքերի մասին, նա, պարզ է, դժվարանում և վորոչալի արտահայտվել առ այժմ: Բուրժուական թերթերը, վորոնք ըստ հնույն խոստում են խոտվության, ապստամբության, անկարգության մասին, չեն կարող չտեսնել, սակայն, նրանց համազգային, անզամ միջազգային նշանակությունը: Յեվ հենց այդ է, վոր դեպքերին տալիս է հեղափոխության ընույթ: Յեվ խոտվության վերջին որերի մասին գրողները կամաց-կամաց դառնում են հեղափոխության առաջին որերի խոսքերին: Ռուսաստանի պատմության շրջակետը հասել է: Դա չի ժխտում և յեվրոպական ամենափթած պահպանողականը, վոր հիացմունք ու խանդաղատանք ունի համառուսական միապետության հզոր, անկոնտրոլ իշխանության հանդեպ: Միապետության և ժողովրդի հաշտության մասին խոսք անզամ լինել չի կարող: Հեղափոխության մասին խոսում են վոչ միայն մուլի մարդիկ, վոչ միայն «նիհիլիստները», ինչպես տակավին անվանում է Յեվրոպան ոռու հեղափոխականներին, այլ բոլորը և ամեն վոք, վոր փոքր ի շատ ընդունակ է համաշխարհային քաղաքականությունը հետաքրքրվելու:

1006  
2694

Ռուսական բանվորական շարժումը մի քանի սրվա մեջ հասալքարձրագույն աստիճանի: Մեր աչքերի առջև նա աճում-դառնում է համաժողովրդական ապստամբության: Հասկանալի յե, վոր մեզ համար այստեղ, ժնևում, մեր անիծյալ հեղափոխությունից անչափ դժվար է հետևել դեպքերին: Բայց քանի վոր մենք տակավին դատապարտված ենք այս անիծյալ տարադրություն մեջ տատակելու, մենք պետք է աշխատենք հետևել նրանց, ծայրը ծայրին բերել, յեզրակացություններ հանել, այստեղից պատմության վորձից դատեր քաղել, վորոնք պետք կը գան վաղը, մի ուրիշ տեղ, ուր այժմ տակավին «լուծ է ժողովուրդը», և ուր մտա ապագայում այս կամ այն ձևով կը բռնկի հեղափոխության հրդեհը: Մենք պետք է անենք հրատարակախոսի մշտական գործը—գրել արդիականության պատմությունը և գրել այնպես, վորպեսզի մեր կենցաղագրությունը ըստ շարիտ կարողություն ունենալ բերի շարժման անմիջական մասնակիցներին և հերոս-պրոլետարներին այնտեղ, գործողության վայրում, —գրել նյութես, վորպեսզի ոժանդակենք շարժման ծավալումին, պայքարի միջոցների, ձևերի և մեթոդների զիտակից ընտրության, վոր կարողանան ուժերի նվազագույն վատնումով դալ ամենամեծ և ամենահաստատուն հետևանքները:

Հեղափոխության պատմության մեջ դուրս են բարձրացնում տասնյակ տարիներով և դարերով հասունացող հակասություններ: Կյանքը դառնում է անսովոր կերպով հարուստ: Վորպես տեղի մարտիկ՝ քաղաքական բեմ է յեղնում մասսան, վոր միշտ կանգնած է յեղել սովերում և հաճախ, այդ պատճառով, անդիտացվել կամ մինչև անզամ արհամարհվել և մակերեսային դիտողներից: Այդ մասսան սովորում է գործնականում, բուրբի աչքի առջև փորձնական քայլեր անելով, ուղին շոշափելով, անելիքները նիշելով, ստուգելով իրեն և իրա բուրբ իդյուրողների թեորիաները: Այդ մասսան հերոսական ճիգեր է անում բարձրանալու՝ պատմության կողմից իր վզին փաթաթած համաշխարհային վիթխարի խնդիրների բարձունքը: Գործան էլ չմեղեցիկին մեզ արյան վտակները և հազարավոր զոհերը, վոչինչ և յերբեք չի համեմատվի իր նշանակությամբ այն անմիջական դաստիարակության հետ, վոր ստանում են մասսաները և դասակարգերը իրա՝ հեղափոխական պայքարի ընթացքում: Այդ պայքարի պատմությունը պետք է չափել որերով: Յեվ իզուր չէ, վոր արտասահմանյան մի քանի թեր-



վեր արդեն սկսել են «ուսական հեղափոխութեան սրագիր» : Այդ-  
պիսի սրագիր սկսենք և մենք :

**ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ**

Կայծը, վոր հրդեհ առաջացրեց, աշխատանքի և կապիտալի  
ամենասովորական ընդհարումներէ մեկն էր—գործազույ մի գոր-  
ծարանում : Հետաքրքրական է, սակայն, վոր 12,000 պուլտերովյան  
բանվորները գործազույր, վորն սկսեց յերկուշաբթի, հունվարի  
5-ին, ավելի շուտ գործազույ էր հանուն պրոլետարական համե-  
քաշխութեան : Առիթը յեղով չորս բանվորի արձակումը : «Յերբ  
նրանց վերադարձնելու պահանջը չբավարարվեց,—գրում է մեզ մի  
հնկեր Պետերբուրգից, հունվարի 7-ից :—գործարանը կանգ առավ  
հանկարծ, շատ համերաշխ : Գործազույր կրում է միանգամայն  
կարգապահ բնույթ : Բանվորները մի քանի մարդ ուղարկեցին մե-  
քենաները և այլ գույքը պահպանելու վորեն հնարավոր փչացու-  
մից, վոր կարող է լինել սակավ գիտակիցների կողմից : Այնուհե-  
տե նրանք պատգամավորութեան ուղարկեցին ուրիշ գործարան-  
ներ՝ իրենց պահանջները հայտնելու և միանալու առաջարկ անե-  
լու» : Հազարավոր և տասնյակ հազարավոր բանվորներ սկսեցին  
միանալ շարժման : Զուրառոյցան յեղայ բանվորական ընկերու-  
թեյունը, վոր հիմնված է կառավարութեան անկողնի վրայ—պրո-  
լետարիատին սխտեմատիկ միապետական պրոպագանդայով աշ-  
խատելու նպատակով, քիչ ծառայութեան շնորհից շարժման  
կազմակերպութեանը նրա սկզբնական շրջանում և յայնորեն ուռ-  
ձանալուն : Պատահեց այն, ինչ վաղուց արդեն մատնանշում է յին-  
տոցիալ-դեմոկրատները, ասելով զուրառոյցիներին, թե բանվոր  
զատակարգի հեղափոխական բնագործ և նրա համերաշխութեան վո-  
զին կը հաղթանակի փոստիկանական ամեն տեսակի մանր խորա-  
մանկութեաններին : Ամենահետամնաց բանվորները, զուրառոյ-  
ցիները կողմից կը միացվեն շարժմանը, իսկ այնուհետե արդեն  
ինքը ցարական կառավարութեանը կը հոգա բանվորներին առաջ  
մղելու, ինքը կապիտալիստական շահագործութեանը առաջ կը  
մղի նրանց՝ խողաց և մինչև ուղն ու ծուծը կեղծավոր զուրա-  
ռոյցչինայից գեպի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան : Պրո-  
լետարական կյանքի և պրոլետարական պայքարի գործնականը  
փոստակախ կանի պարտնաք զուրառոյցիները թուր «թեորիանե-  
րը» և բոլոր ճիգերը :

Այդպես էլ յեղով : Մի ընկեր բանվոր, Ռուս. Սոց.—Դեմ.  
Ման. կուսակցութեան Պետերբուրգի կոմիտեյի անդամ, հետևյալ  
ձևով է հայտնում իր տպավորութեանն այն նամակում, վոր  
ուղարկել է մեզ հունվարի 5-ից :

«Գրում եմ հենց նոր, Նեվսկի գաստավի այն կողմը տեղի ու-  
նեցած Ամբաստանի վործարանի բանվորները ժողովի թարմ  
տպավորութեան տակ : Բայց նախ և առաջ յերկու խոսք այն տրա-  
մադրութեան մասին, վոր տիրում է Պետերբուրգի բանվորները  
մեջ : Ինչպես հայտնի է, վերջին ժամանակներս այստեղ սկսել են  
ձմունդ առնել կամ ավելի լավ է, վերածնվել «զուրառոյցան»  
կազմակերպութեանը Գազոն քահանայի ղեկավարութեամբ :  
Նազմակերպութեանը շատ կարն ժամանակում շատ բազմազան  
և ուժեղացան : Այժմ արդեն գոյութեան ունեն այսպես կոչված  
«ուսական գործարանային բանվորների ժողովների» 11 բաժան-  
մունք : Ինչպես և կարելի է յայտնել այդ ժողովների հետևանք-  
ները պիտի լինելին այնպիսի, ինչպիսին յեղան հարավում :

«Այժմ վստահորեն կարելի է ասել—յայն գործաշուլային  
շարժում է սկսվում Պետերբուրգում : Գրեթե ամեն ոք լավում է  
նոր գործադուլի մասին. վոր տեղի է ունենում մեկ այս, մեկ այն  
գործարանում : Յերկու ոք է ահա, ինչ գործադուլ է արել Պուտի-  
լովի ծործարանը : Յերկու շաբաթ առաջ գործադուլ էր արել  
Շաուի մանարանը՝ վրորոցսկայա ստարանայում : Գործազույր  
շարունակվեց չորս ոք : Բանվորները մոշինչ ձեռք բերել չկարողա-  
ցան : Այսօր—վաղը այդ գործազույր նորից կը նորոգվի : Տրամա-  
դրութեանն ամենուրեք բարձր է, բայց չի կարելի ասել, թե հո-  
գուտ սոցիալ-դեմոկրատիայի : Բանվորների մեծ մասը կողմնա-  
կից է գուտ տնտեսական պայքարի և հակառակ է քաղաքականին :  
Սակայն, պետք է սպասել և հուսալ, վոր այդ տրամադրութեանը  
կը փոխվի և բանվորները կը մրտեն, վոր առանց քաղաքական  
պայքարի ձեռք չեն բերի տնտեսական վոչ մի բարելավում : Այսօր  
գործազույր արավ Նեվսկի նավաշինարարական ընկերութեան  
(Ամբաստանի վոր) գործարանը : «Ռուսական գործարանային բան-  
վորների ժողովը» տեղական բաժանմունքը փորձում է հանդես  
գալ վորպես սկսվող գործազույրի ղեկավար, բայց դա նրան, և  
հարկ է չի աջողվի : Ղեկավարը կը լինի սոցիալ-դեմոկրատիան,  
չնայած վոր նա այստեղ շատ թույլ է :

«Լույս տեսան Պետերբուրգի կամիտեյի թուղթիկները. յերկուսն ուղղված Շաուրի մանածագործարանին և մեկը Պուտիլովի բանվորներին: Այսոր յեղով Նեվսկի նավաշինարարական գործարանի բանվորների ժողովը: Հավաքվել էր մոտ 500 բանվոր: Առաջինը հանդես յեկան «Ժողովի» տեղական բաժանմունքի անդամները: Նրանք հրաժարվում էին քաղաքական պահանջներից և առաջադրում էին, գլխավորապես, տնտեսական պահանջներ: Բաղմության միջից լսվեցին հավանություն չստուգ ձայներ: Բայց այստեղ հանդես յեկավ «Русская газета»-ի աշխատակից Սարոնը, վոր մեծ հարգանք է վայելում Պետերբուրգի բանվորներին մոտ: Սարոնը առաջարկեց մի բանաձև, վորը, ինչպես հայտարարեց, մշակել է յին ինքը և սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները: Այդ բանաձևը թեև ընդդրում է պրոլետարիատի և բուրժուազիայի դասակարգային շահերի հակադրությունը, բայց անբավարար: Սարոնից հետո խոսեցին սոցիալ-դեմոկրատ ընկեր բանվորները, վորոնք պաշտպանեցին այդ բանաձևը սկզբունքով ընդգծելով, սակայն, նրա սահմանափակ և անբավարար լինելը: Այստեղ սկսվեց իրարանցում—մի բանիսը դժգոհ էին սոցիալ-դեմոկրատների ձայներից և ուղեցին ժողովը խափանել. ժողովը, ձայների մեծամասնությամբ դեմ արտահայտվեց նախագահին, վորը զանվում էր ժողովը խափանողների թվում, և ընտրեց նոր նախագահ, սոցիալիստի: Բայց «ընկերության» (գուրառույթյան) անդամները չէին լուծում և շարունակում էին քայքայել ժողովը: Թեև ժողովի ահազին մեծամասնությունը (90 տոկոս) սոցիալիստների կողմն էր, բայց ժողովը, վերջ է վերջն, ցրվեց վոչինչ շարժ և վորոշումը հետաձգեց վաղվան: Համենայն դեպս, կարելի չէ ասել, վոր սոցիալ-դեմոկրատներին աջողվեց բանվորների արամագրությունը թեքել հոգնա իրենց: Վաղը սպասվում է մեծ ժողով, հնարավոր է, վոր յերկու յերեք հազար մարդ լինի: Այս րերս պետք է սպասել մեծ դեմոնստրացիայի, նման 1903 թվի հուլիսին հարավում յեղածին: Գործադուլ է արել Չրանա-Ռուսական կրնկերության գործարանը—մոտ 4—5 հազար մարդ: Հայտնում են, վոր գործադուլ է սկսվել Շախդիցի մանվածքի Փարբիկում—մոտ հինգ հազար: Սպասվում է գործադուլ Որուխովի գործարանում—հինգից-վեց հազար»:

Հակադրելով սոցիալ-դեմոկրատիայի, տեղական կամիտեյի անդամի, (վորը, պարզ է, կարող էր սաույգ իմանալ Պետերբուր-

գի փոքր մասի դեպքերի մասին) այս տեղեկությունները արտասահմանյան, հատկապես անգլիական թերթերի տեղեկությանց, մենք պետք է յեզրակացնենք, վոր այս վերջինները աչքի չեն ընկնում իրենց շատ զգալի ճշգրտությամբ:

Գործադուլը աճել է որե-ցոր գլխապտույտ արագությամբ: Բանվորները կազմակերպել են բազմաթիվ ժողովներ և մշակել իրենց «քարտիան» \*), իրենց տնտեսական և քաղաքական պահանջները: Թե մեկը, թե մյուսները, չնայած գուրառույթինքի ղեկավարության, հանդում էին ընդհանուր ամամբ սոցիալ-դեմոկրատական կուսակցական ծրագրի պահանջներին մինչև—ընդհանուր, ուղղակի, հավասար և զարմնի ընտրական իրավունքի հիմունքով հիմնադիր ժողով գումարելու լուզունքը: Իր շափերով շտեմնված գործադուլի տարերային աճումը ալելի առաջընթաց էր, քան կազմակերպված սոցիալ-դեմոկրատների մասնակցությունը շարժման մեջ: Բայց խոսքը ամսք իրենց՝ սոցիալ-դեմոկրատներին:

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՍՈՅԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ՆՍՄԱԿԸ**

Հունվարի 7-ից մի ընկեր գրում է. «Դեմ առ դեմ դալով գործադուլային տարերայնորեն արտահայտվող տենդայնության, վոր այսորվանից ընդդրկել է դրեթի բոլոր գործարանները, Ֆարբիկները և մինչև անգամ մանր արհեստանոցները, միայն այսոր մենք կարող ենք հաջի անել կուսակցության ամբողջ քայքայվածությունը: Գրա հետևանքն այն է, վոր մենք՝ Պետերբուրգի կազմակերպությունը, միանգամայն անգոր ենք բանվորական տարերային շարժման առաջ: Բավական է դուրս գալ փողոց և նայել, թե ի՞նչ է կատարվում չուրջը, վորպեպզի հասկանալի լինի, թե վորքան անգոր ենք մենք: Չե՞ վոր այժմ անհրաժեշտ են հազար, ստանյակ հազար թուղթիկներ, անհրաժեշտ են բանվորական կազմակերպված ժողովներ, անհրաժեշտ են պատրաստված, վորձված հետադրներ, վորոնք կարողանային բանվորների բաղմությունները Գրապոն քահանայից դրավել մեր կողմը: Իսկ մենք ի՞նչ կարող ենք անել: Բայց թողնել մի քանի հարյուր թուղթիկ, վորոնք բա-

\*) 1905 թ. տակավին չկար բայելիկ անունը, բայելիկներն ասին ժամանակ կոչվում էին մեծամասնություն:

ուացիւրեն կը մնան աննկատելի, ուղարկել մի քանի հստոր, թողնելով նրանց իրենց բարտին...

«Նախանցյալ որը և յերեկ Վրբորգսկի ուսյունում կայացան բանվորների ժողովներ՝ մոտ 500 մարդուց: Դրանցից մեկում, նախ քան նախագահի գալը, հանդես յեկավ մի ինչ վոր բանվոր և արտասանեց միանգամայն սոցիալ-դեմոկրատական ճառ, վորին լսարանը վերարեբեց շատ լավ, վարձաբերով հստորին ծափահարությամբ: Այդ նույն ժողովում հանդես յեկան կազմակերպիչ փաճ բանվորներ. մեծամասնության \* ) կողմից մտավորականներ շեյային: Արժե հիշատակել մի միջնագեպ, վոր տեղի ունեցավ այդ ժողովում: Ինչ-վոր մի բանվոր պատից վար բերեց Նիկոլայի պատկերը: Ժողովի նախագահը փորձեց հաստատել, վոր դա արավ հարրած մի բանվոր, վոր պատահարը զիպով պատկերին, բայց ժողովի մի մասը յեռանդուն բողոքեց դեպքը կոծկելու այդ փորձի դեմ: Վերջ ի վերջո, ընդունվեց մի բանաձև, միանգամայն պուսիլովյանի նման, այսինքն այսօրվանից հայտնի Գապոն քահանայի ղեկավարությամբ կազմված:

«Ել ավելի հսկայական մի ժողով յեղավ Պետերիոֆի շուսյի վրա, ուր հավաքվել էին մի քանի հազար բանվորներ: Այդ ժողովի վերարեբմունքը դեպի սոցիալ-դեմոկրատները բոլորովին այլ էր. ինչպես մեր, այնպես էլ փոքրամասնության \* ) թուոցիկները պատովեցին. սկզբում ներկայացուցիչները քիչ էր մնում հրաժարվելին 500 ոսուրին վերցնելուց, վոր հատկացրել էր կամիտեն գործադուլավոր բանվորներին:

«Սոցիալ-դեմոկրատական ճառեր չեղան (այդ բանում մեզավոր ենք մենք, բայց դարձանային այն և, վոր այդ ժողովում ընդունված բանաձևն այնպիսի չէ, վորի տակ սոցիալ-դեմոկրատը համարձակորեն կարող է ստորագրել: ասում են, վոր այդ բանաձևը կազմել է մի սոցիալ-դեմոկրատ, վորն ազդեցություն ունի Գապոն քահանայի վրա: Յերկար ժամանակ մենք չեյինք կարողանում պարզել, թե ինչ է ներկայացնում իրենից այդ քահանան. նրա սկզբնական վարքը (մինչև գործադուլը) ստիպում էր մեզ յենթադրել, վոր մենք գործ ունենք նոր դպրոցի գուրտտոսկանի հետ, բայց գործադուլը սկսվելու մոմենտից արդեն այդ հայացքը պիտի թողնել: Ինձ թվում է, վոր մեր առջև մի ինչ-վոր

\* ) Մենչևիկները.

միամիտ իդեալիստ է: Յեթե քահանային նայենք այնպես, ինչպես նայում էյինք առաջ, այդ դեպքում, չե՞ վոր, միանգամայն անհնարին կը լիներ բացատրել նրա վարքը յերեկվա ժողովում. նա հայտնեց, վոր կիրակի սրը բոլոր բանթող բանվորները կերթան դեպի պալատ՝ Նիկոլային ներկայացնելու իրենց պետիցիան՝ բանվորների անհետաձգելի կարիքների մասին (հիմնադիր ժողովի պումարում և այլն), և յեթե թագավորը հրաժարվի ընդունել այդ պետիցիան կամ վոստիկանությունը խանգարի հավաքվելուն— նշանակում է՝ թագավորը մինիստրների հետ և, և ուրեմն, «կորչեն մինիստրները» լողունդին անհրաժեշտ և ավելացնել՝ «կորչի՛ թագավորը»: ուստի բանվորները, դեպի պալատ գնալիս, պետք է պատրաստեն դրոշակներ «կորչի՛ թագավորը» մականորությամբ և զինվեն: Նա կոչ արավ ժողովին յերգվել, վոր հավաքվածներին՝ մոչ մեկը չի հրաժարվի այդ վորոշումից, անգամ յեթե հարկ լինի զորքի հետ կովելու: Այժմ, լուրերի համաձայն, վոստիկանությունը վորոնում է Գապոնին, բայց նա թագնվում է մինչև կիրակի:

«Վասիլևսկի ոստրովում յերեկ տեղի ունեցան ժողովներ— ընդունվեց ընդհանուր գործադուլ: Այսօր առավոտից բանվորական խմբեր են չըջում փողոցներում, կանոնեցնում են գործարանները, աշխատել ցանկացողներին թույլ չեն տալիս աշխատանքի գնալու: Վորպես լուր հաղորդում են, վոր վարպետներն իրենք համոզում են բանվորներին՝ դադարեցնել աշխատանքները: Թոսում են այն մասին, թե կապիտալիստները միանգամայն համբերատար վերարեբում ունեն դեպի գործադուլը, իսկ մի քանիսը մինչև անգամ նկատում են այն վորպես միջոց՝ վերջնականապես զլուխը կորցրած Նիկոլայից, բանվորների միջոցով, սահմանադրություն կորզելու: Բայց, ինչ վոր ասանձնապես դարձանայի յե—գա վոստիկանության վարմունքն է: Յես այսօր զխամամբ անցա քաղաքի զանազան մասերով և պնդում եմ, վոր քաղաքապահ վոստիկանները ավելի քիչ էյին, քան սովորական ժամանակ: Վասիլևսկի ոստրովի Մալի պրոսպեկտի վրա միայն, 5-րդ դժի մոտ, ուր ամբոխն այսօր առավոտյան (ինչպես պատմում են) ջարդել է քաղաքամասի վոստիկանատունը (участок) և ար—

«ակել կայանաւորներին (??) \*), կարելի չե տեսնել 4—5 ձիաւոր քաղաքապահ փոստիկան :

«Այսօր պետք է տեղի ունենան մեծ ժողովներ Ոստրովում, Վերրոգյան, Պետերբուրգի և Պետերձոֆի շաստեների վրա : Վերրոգի և Պետերձոֆի շաստեները ուղարկված են մեր ազիտատորները (3-ական մարդ) : Մյուս յերկու սայունի մասին չգիտեմ—յերկուսը և այդ սայունների մարդկանցից վոչ վոքի չեմ տեսել, թեև գիտեմ, վոր Պ. Պ. —ն ազիտատորների հետ յերեկ յեղել է կղզարձակներին\*) (островиан) ժողովում :

... «Գործարանները և ֆաբրիկաները միանում են գործադուլին զարմանալի արագութեամբ, մեկը մյուսի յետեից : Այսօր առավոտյան հաշվում էյին 40,000 գործադուլավոր, իսկ յերեկոյան դեմ հաշվում էյին արդեն 24 արտադրութուն և 82,000 գործադուլավոր : (Անգլիական յրագիրները բերում էյին 75,000 թիվ : եմբ.) :

«Ասում են, վոր իբր թե վայր կանգ են առնելու բոլոր ազգաբանները, փոքրը, մտավաճառանոցները և կոնկան... Իս դեռ կրտեսները, բայց այն, ինչ կատարվում է այժմ, ուղղակի վիթխարի բան է : Փողոցներում, վազոններում—ամենուրեք խոսք ու զրույց է : Նարվսկի գաւառավի այն կողմը բանվորները հալաբում են կամբերով, հանդես են գալիս ազիտատորներ և խոսում : Ամենուրեք սրինակելի կարգ կա : Յերեկոյան գնացի Նեվսկու ծայրամասերը—փողոցներում կատարյալ լուսթյուն է. առանձին հանդիպող բանվորները զուսպ են և փոշնչով չեն արտահայտում իրենց հուզումը, բայց նրանց դեմքին և նրանց ամբողջ արտաքինից զգացվում է զժվարութեամբ զսպած հուզմունքը : Յերեկ Մոսկուսկի գոլոցում յերեկույթ էր, —խոսեցին սոցիալիստ-հեղափոխական և սոցիալ-դեմոկրատ բանվորներ, —վերջիններից մեկը՝ զարմանալի խելացի և բովանդակալից : Պետք է խոսելին մեր ինտելիգենտները, բայց թյուրիմացութեան պատահեց. լուր էր տարածվել,

Ծանոթութուն. — Հարցական նշանները պատկանում են նամակի հեղինակին, վորը, հավանորեն, իրեն հաղորդածը համարում է սխալ կամ շատ չափազանցում :

ԽՄԲ.

\*) Այսինքն—Վասիլիակի Ոստրովում (կղզում) ապրողները՝ Վասիլիակի Ոստրովը Պետերբուրգի մի թաղն է :

Թե հատարութեանը չեն թողնում, —այն՝ պատճառով, վոր համարյա քաղաքի կեսը հավաքվել էր, —իսկ մերոնցից մի քանիսը այդ բնիկներին լուրջ, շղատարատվեցին և չզնային : Տրամադրությունը յերեկույթում շատ հուզումնալից էր. բանվորներից շատերը գինված էյին :

«Այժմ այդ շարժման տխուր կամ, համենայն դեպս, փոքր ինչ տարրինակ կողմի մասին : Յերկու-յերեք տարի յե գոյութեան ունի բանվորների բնկերութեան—գուրատովյան, և մի յերկրորդն էլ բոս յերեկույթին, նույնպես գուրատովյան, վորի գլուխ և կանգնած մի քահանա—խախտլ Գյորգի Չապոնը : Այդ քահանան գլուխ և կանգնել շարժման, և նա այժմ—սրվա հերոս է : Մի քանի որվա մեջ նա հանկարծ խոսեց քաղաքական տոնով, սկսեց գնել հիմնադիր ժողովի և բոլոր ազատութեանների պահանջ, մի խոսքով—ասհմանադրութեան. հավարում և անապին ժողովներ, ուր բացարձակ հանդանակութուն են անում գործադուլավորների համար : Այդ ժողովների մոտից քչում են փոստիկաններին : Նա՛ Գապոնը, իսաչը բարձրացնելով՝ հրավիրում է հասարակութեան ազգութեւ և ապա սկսում է խոսել : Խիստ գրգոսող ազգեցութուն է թողնում : Այժմ մտածել է՝ բոլորին կանչել—տանել դեպի Չեկոսլիս սլալատ մի պետիցիալով, վորի մեջ գրված են քաղաքական բոլոր պահանջները, և վորի տակը յեղած ստորագրութեանների թիվը այժմ հասել է մոտ 7,000-ի (բանվորները ստորագրում են անուն, ազգանուն, հասցե—ամբողջովին) : «Գնանք, —ասում է, —համագլենք, թե արդյոք, իսկապես, ոտս թաղավորը սիրում է իր ժողովուրդը, ինչպես ասում է : Յեթե կտա այս բոլոր ազատութեանները—նշանակում է՝ սիրում է, իսկ յեթե վոչ, ուրեմն դա սուտ է, և այն ժամանակ մենք նրա հետ կը վարվենք (sic!) , ինչպես մեր խիզճը կը թելադրի : Յերգվեցեք ինձ—«ասհմանադրութեան կամ մահ» : Յեկ բանվորները ձեռքները վեր բարձրացնելով՝ գոռում են խանդալատ. —«ասհմանադրութեան կամ մահ» : Բանվորներից փոմանք (զիտակիցներից) ասում են, թե նա խաբէրալէ, մյուսները յերգվում են, թե անկեղծ մարդ է. բայց, ինչ էլ լինի, մասսաները վազում են նրա յետեից : «Ժամանակ և դիմակը գեն շարտելու, —բացականչում է քահանան. —ժամանակ է թողնել ամեն տեսակի պատկանելութուն դեպի այս անարգ դասը (թափ է տալիս իր փարաջան), այսինքն դեպի այն դասը, վոր կողոպտում է ժողովրդին : «Պարոնայք սոցիալ-դեմոկրատներ, պարո-



նայք սոցիալ-Նեղափոխականներ, մենք ձեզ շատ ենք գնահատում, բայց ինդրում ենք—այժմ մեզ շխանդարել» (այսինքն՝ պետիցիայով դեպի պալատ գնալուն)։ Նրան առարկում են, թե թագավորը Ֆարսիոս Աելո-ում է... «Վոչինչ, կը կանգնենք կեռ ժամ, և նրան դուրս կը կանչեն, անպայման դուրս կը կանչեն արդեն»... Յեզի Ի՞նչ է լինելու մեզ մոտ կիրակի օրը»։

«Մերոնք (այսինքն կազմակերպված սոցիալ-դեմոկրատները) վոր սկզբում այս շարժմանը նայում էլին, փորպէս դուս դուրս տովյան շարժման վրա, այժմ տեսնում են, վոր այսպես թե այնպես, պետք է հաշվի առնել նրան, փորձում են ազդել քահանային, փորձում են գոնե մի քիչ դեկավարել նրան։ Սոցիալ-դեմոկրատները, վորքան էլ տխուր և խոտտովանել ալը բանում, նսեմացան այդ ուղղակի տարրերային շարժումից։ Բայց և այնպես թուռցիկները լույս են տեսնում. հունվարի 5-ին լույս տեսավ մի շատ լավ թուռցիկ՝ Պուտիլովի գործարանի բանձարներին ուղղված։ Վաղը պիտի լույս տեսնի մյուսը։

«Տարակուսում ենք—ինչով բացատրել քահանայի ձեռներեցութունը։ Յեթե այդ բոլորը ամբողջովին կառավարական բարդավանք և—առաջ բերել Նեղափոխական բռնկում, վորպէս զի ճնշի այն արյունոտ ձեռով—զուտ արդեն շափաղանց համարձակ բան և այժմյան պատերազմական ժամանակ. քահանան բանձարների պատգամավորներ և ուղարկում և Ռրանիներում, և կըրոնշտադը, ուր կան և ուժանկի ( ДИНАМИЧНЫИ ) և ամեն տեսակի արհեստանոցներ, —ինչպես իմանալ՝ ինչպես կը վերջանա։ Ի՞նչպես հույս գնել անդամ զինվորների վրա, յերբ յերեկ կրակ է արձակվել Չմեռային պալատի վրա, վորի մասին դուք գիտեք թերթերից»։

Այս յերկու նամակը մի հարց են դնում, վորը բուռն կերպով քննադատվում է արտասահմանյան մամուլի կողմից—ո՞վ է Գապոն քահանան, պրովակատոր է թե՞ բրիտաններիական սոցիալիստ։

**ԳԱՊՈՆ ԲԱՀԱՆԱՆ**

Վոր քահանա Գապոնը պրովակատոր է—հոգուտ այս յենթագրության խոտում և կարծես այն փաստը, վոր նա դուրստովյան ընկերության մասնակիցներից և պարազուլաներից մեկն է։ Այնուհետև, արտասահմանյան թերթերը, մեր թղթակիցների

Նման, ընգծում են այն փաստը, վոր փոտիկանությունը գիտմամբ թույլ և տվել, վոր գործադուլային շարժումը գարգանա շախուրեն և ազատորեն, վոր կառավարությունն ընդհանրապես (և մեծ իշխան Վլադիմիրը մասնավորապես) կամեցել է առաջ բերել և արյունոտ դատաստան տեսնել իր համար ավելի ձեռքնուտ սպաժաններում։ Անդլիական թղթակիցները նիշում են անդամ, վոր հենց դուրստովյաների յեռանդուն մասնակցությունը շարժման մեջ՝ պետք է վոր առանձնապես ձեռնուտ յեներ կառավարության համար իրերի այս դրությամբ։ Հեղափոխական ինտելիգենցիան և գիտակից պրոլետարները, վորոնք ավելի շատ, հավանորեն, զենքի պատրաստություն պիտի տեսնելին, չելին կարող հեռու շմալ դուրստովյան շարժումից, չելին կարող մի կողմ չբաշվել նրանից։ Կառավարությունն, այսպիսով, ուներ ազատ ձեռքեր և խաղում էր ապահով մի խաղ—ե՛հ, ցույցին կը գան ավելի խաղաղ, քիչ կազմակերպված ավելի թեղճ բանվորները. նրանց հետ հաշիվ տեսնելը վոչինչ բան և մեր գործի համար, բայց պրոլետարիատին մի լավ գաւ կը սրվի. փողոցում բոլորին և ամեն մեկին գնտակահաբեյու սքանչելի առիթ կը լինի. ուսակցիոն (կամ մեծ իշխանական) կուսակցության հազթանակը արքունիքում՝ յիբերայնների վրա—կը յենի յիսկատար և այդ բոլորին կը հետևի ամենադաժան հայտմանքը։

Թե անդլիական և թե գերմանական պահպանողական թերթերն ուղղակի, գործողության այսպիսի ծրագիր են վերադրում կառավարության (կամ Վլադիմիրին)։ Շատ հավանական է, վոր գա՛ ճիշտ է։ Հունվարի 9-ի արյունոտ սրվա գեպքերը գեղեցիկ կերպով հաստատում են այդ։ Բայց նման ծրագրի գոյությունը բնավ չի բացատում և այն, վոր քահանա Գապոնը կարող էր գառնալ ալգուլիսի մի ծրագրի անգիտակից գործիքը։ Վոր ուսական յերիտասարդ հողևորականության մի փոքրիկ մասի շրջանում կա ազատամտական, ուեֆորմիտական շարժում՝ յենթակա չե կասկածի։ Այդ շարժումն ունեցավ իր արտահայտիչները և կրոնափիլիսոփայական ընկերության ժողովներում, և յեկեղեցական գրականության մեջ։ Այդ շարժումն ստացել է մինչև անգամ իր անունը՝ «նոր ուղղափառական շարժում»։ Այդ պատճառով չի կարելի բացառել այն միաբը, թե քահանա Գապոնը կարող էր լինել անկեղծ բրիտաններիական սոցիալիստ և վոր հենց արյունոտ կիրակին գրգեց

նրան զեպի խնայական հեղափոխական ճանապարհը: Մենք հասկանում ենք զեպի այս յենթադրությունը մանավանդ, վոր Գաղտնի նամակները, վորոնք գրվել են հունվարի 9-ի սպանդից հետո այն մասին, թե «մենք թագավոր չունենք», նրա կոչը ազատության հասարակարկու և այլն, — այս բոլորը Փակտեր են, վոր խոսում են հողուտ նրա ազնվության և անկեղծության, քանի վոր պրովակատորի նպատակները մեջ արդեն վոչ մի կերպ չեն կարող մտնել մի այդպիսի հզոր ազխասցիա՝ ազնուամբությունը շարունակելու ոգովն:

Ինչ էլ ուզում է լինի, սոցիալ-դեմոկրատների տակտիկան նոր ատաճնորդի նկատմամբ վորոչևում էր ինքնին. անհրաժեշտ է պզույշ, սպասողական, անվտանգ վերաբերմունք զեպի դուրատովեցր: Անհրաժեշտ են, համենայն զեպս, յեռանդուն մանուկցություն բարձրացած (թեև գուրատովցու կողմից բարձրացրած)՝ գործազույս չարժմանը, յեռանդուն քարոզ սոցիալ-դեմոկրատական հայացքների և լոզունգների: Այդպիսի գործելակերպ են ունեցել, ինչպես յերևում է վերև բերված նամակներից, և մեր բնկերները՝ Ռ. Ս. — Գ. Կ. Պետերբուրգի կոմիտեյի անդամները: Հարջան էլ «խորամանկ» լինելին պայտասական սեպիցիոն քլեկի ծրագիրները, դատակարգային պայքարի իրականությունը և քաղաքական բողոքը պրոլետարները, վորպես ամբողջ ժողովրդի ամենագրգի, քաղաքական բողոքը շատ ավելի խորամանկ յեղով: Վոր վոտտիկանական և զինվորական ծրագիրները դարձան կառավարության զեմ, վոր գուրատովչիկայից, վորպես վուքրիկ առիթից, աճեց լայն, խոշոր, համառուսական շարժում — ցա Փակտ և: Բանվոր դատակարգի հեղափոխական յեռանդը և հեղափոխական լնազդը գուրս պտտիկային անդամադրելի ուժով, հակառակ ամեն անսակի քաղաքական վորոգայթների և խորամանկության:

ԱՐՅՈՒՆՈՏ ԿԻՐՍԿԻ ՈՐՎՍ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Շարժման ընթացքի մասին պատմելով՝ մենք կանդ պոսանք ենք բանի վրա, թե ինչպես Գաղտնի նախաձեռնությամբ կիրակի, հունվարի 9-ին, նշանակվեց բանվոր մասսայի յերթը զեպի Զմեռային պայտա՝ թագավորին — հիմնադիր ժողովի գումարման մասին «պետիցիա» ներկայացնելու համար: Գործազույր Պետերբուրգում արդեն շարաթ ուր, հունվարի 8-ին, դարձավ ընդհանուր: Մնազամ պաշտոնական տեղեկությունները գործազույս վորոնքի:

Թիվը հաշվում էլին 100-150 հազար մարդ: Ռուսաստանը տակավին չի տեսել դատակարգային պայքարի այդպիսի վիթխարի յարեկում: Վիթխարի, միլիոն ու կես բնակիչ ունեցող կենտրոնի վողջ արդյունաբերական, ստեարական, հասարակական կյանքն ընդարձացավ: Պրոլետարիատը իրապես ցույց տվեց, վոր ինքը, միայն ինքն և պահում ժամանակակից քաղաքակրթությունը, նրա աշխատանքով են ստեղծվում հարատու յունները և պերճանքը, նրա վրա յե ծանրանում մեր ամբողջ «կուլտուրան»: Քաղաքը մնաց առանց լրագրի, առանց լույսի և առանց ջրի: Յեվ այդ ընդհանուր գործազույր կրում էր վորոշակի արտահայտված քաղաքական բնույթ, հանդիսանալով անմիջական նախաբանը հեղափոխական զեպքերի:

Ահա ինչպես է մի տիանատես, մեզ ուզգած նամակում, նկարագրում պատմական սրվա նախորակը:

«Հունվարի 9-ին գործազույր Պետերբուրգում գարջավ ընդհանուր: Կանգ առան վոչ միայն բոլոր խոշոր գործարաններն ու ֆարրիկները, այլև շատ արհեստանոցներ: Այսոր, հունվարի 8-ին, լույս չտեսավ և վոչ մի յրագիր, բացի «Правит. Вестник»-ից և «Ведом. С.-Петербург. градоначальства»: Շարժման զեկավարությունը մինչև այժմս գտնվում է գուրատովչիկների ձեռքին: Մենք տեսնում ենք Պետերբուրգում շտեմված պատկեր, և մարգուտիրա կծկվում է յերկյուզից՝ անհայտության հանդեպ, — թե կարող կը լինի՞ արդյոք սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը, զոնե վորոչ ժամանակից հետո, իր ձեռքն առնել շարժումը: Իրությունը ծայր աստիճան յուրջ է: Բոլոր այս սրերին տեղի յեն տնկնում բանվորների ամենորյա մասսայական ժողովներ քաղաքի բոլոր սայոններում՝ «Ռուսական բանվորների միության» շենքերում: Այդ շենքերի առջև վողոցներն ամբողջ ուր լցված են հազարավոր բանվորներով: Ժամանակ առ ժամանակ սոցիալ-դեմոկրատները ձառեր են արտասանում և թուսցիկներ տարածում: Ընդունվում են դրանք ընդհանրապես համակրանքով, թեև գուրատովչիկները վորձում են սպարդիցիա սարքել: Յերը ձառը շոշափում է միապետությանը, նրանք բղավում են. «Իս մեզ հարկավոր չե. միապետությունը մեզ չի խանդարում»: Մինչդեռ այն ձառերում, վոր արտասանվում են «Միության» շենքերում, գուրատովչիկների կողմից, առաջադրվում են սոց. — դեմոկր. բոլոր պահանջները՝ սկսած Տ-ժամ յա բանվորական սրից մինչև ժողովրդա-

կան ներկայացուցիչների գումարումը՝ համառար, ուղղակի և հաղորդի բնորական իրավունքի հիմունքներով: Միայն գուրատու-ցիները պնդում են, թե այս պահանջների բավարարումը չի նշանակում միապետութան ապալում, այլ ժողովրդի մերձեցումը գեպի թագավորը, վոչնչացումն բյուրոկրատիայի, վորը թագավորին բաժանում է ժողովրդից:

«Մոց — դեմ. խոսում են նաև Միության շենքերում, և նրանց ճատերն ընդունելով են համակրանքով, բայց գործնական առաջարկների նախաձեռնությունը բղխում է գուրատուցիներից: Չնայած սոց — դեմակրատների առարկությունը՝ այդ առաջարկներն ընդունվում են: Գրանք հանդում են հետևյալին. — կիրակի, հուն-վարի Գին, բանվորները պետք է գնան դեպի Չմեռային պայտա և քահանա Գյորդի Գապոնի միջոցով թագավորին ներկայացնեն պետիցիա, թվելով բանվորների բոլոր պահանջները, վորը վերջանում է այս խոսքերով. «Տուր այս բոլորը մեզ, կամ մենք կը մեռնենք»: Ըստ վորում ժողովի գեկավարներն ավելացնում են. «Յեթե թագավորը չտա, այն ժամանակ մեր ձեռքերն ազատվում են. — նշանակում է նա մեր թշնամին և, և այդ ժամանակ արդեն մենք գուրս կը գանք նրա դեմ, կարմիր գրոշակ պարզած: Յեթե մեր արյունը թափվի, դա՛ նրա զլխին»: Պետիցիան ամենուրեք ընդունվում է: Բանվորները յերգվում են, վոր իրենք բոլորը կը գան հրապարակը՝ «կանանցով և յերեխաներով»: Այստար պետիցիան պիտի ստորագրվի առանձին օայտներում, իսկ ժամը 2-ին բոլորը պետք է հավաքվեն «Ժողովրդական Տուն»՝ վերջնական միտինգի:

«Այս բոլորը կատարվում է վոստրիկանություն լիակատար թողութայնությամբ, — նա ամեն տեղից քաշված է, թեև մի քանի շենքերի բակերում թագնված են ձիավոր ժանդարմներ:

«Այստար փողոցներում փակցվում են քաղաքապետի հայտարարությունները, վորով նա արգելում է խմբումները և սպանում է գինական ուժով: Բանվորները պոկում են դրանք: Զորքը չըջակայրից բերվում է քաղաք: Տրամիայի ծառայողներին (կանցուկաորներին և կառավարներին) կողակները մերկացրած սրերով ստիպելին գուրս գալ աշխատանքի»:

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱՆՈՒԼԱՎՈՐՆԵՐԻ ԳԵՏԻՅԻԱՆ ԹԱԳԱՎՈՐԻՆ**

Թագավոր:

Մենք, Պետերբուրգ քաղաքի բանվորներս, մեր կանայք, մեր յերեխաները և անողնական ծեր ծնողները, յեկել ենք քեզ մոտ, թագավոր, արդարություն և պաշտպանություն փնտրելու:

Մենք սղքատացել ենք, մեզ ճնշում են, ծանրաբեռնում են սո-ժից վեր աշխատանքով, մեզ ծաղրում են, մեզ մարդ չեն համարում, մեզ վերարերվում են, ինչպես թշնամիների:

Յեզ մենք համբերել ենք, բայց մեզ հետզհետե, ավելի ու ավելի հրում են սղքատություն, իրավազրկություն և տգիտություն ճահիճը, մեզ խեղդում են դեսպոտիզմն ու կամայականությունը, և մենք խեղդվում ենք: Այլևս ուժ չկա, թագավոր: Հատել է համբերության սահմանը:

Մեզ համար յեկել է այն սարսուփելի մոմենտը, յերբ մահն ավելի լավ է, քան անտանելի տանջանքների շարունակությունը:

Յեզ ահա մենք թողել ենք մեր աշխատանքը և հայտնել մեր տերե-րին, վոր չենք աշխատի, մինչև վոր նրանք չկատարեն մեր պահանջները: Մենք քիչ բան ենք պահանջել: Մենք ցանկանում ենք այն, առանց վորի մեր կյանքը կյանք չի, այլ տաժանակիր աշխատանք, մշտական տանջանք:

Մեր առաջին ինդիրն էր, վորպետի տերերը մեզ հետ միասին քնեն մեր կարիքները, բայց այդ էլ մերժեցին մեզ — մեր կարիքների մասին խոսելու իրավունքից, գտնելով, վոր որևեք մեզ այդպիսի իրավունք չի տալիս: Ապորինի գտնվեցին նույնպես մեր ինդրանքները՝ պակասեցնել բանվորական ժամերի թիվը մինչև 8-ր օրական և մեր աշխատանքի գինը վորոշվի մեզ հետ միասին և մեր համաձայնությունով, քննել մեր՝ գործարանի ստորին սղ-մինիստրացիայի հետ ունեցած թյուրիմացությունները: Ավել-լացնել սև աշխատանք կատարող բանվորների և կանանց վարձա-արությունը նրանց աշխատանքի համար մինչև մեկ ուլբի օրա-կան, վերացնել արտաժամյա աշխատանքները, բժշկել մեզ ուշա-դրությունով և առանց վիրավորանքի, արհեստանոցները սարքել այնպես, վորպետի նրանց մեջ կարելի լինի աշխատել և վոչ թե մահ գտնել այնտեղ սարսուփելի միջանցուկ քամիներին (СВОЗН-КОВ), անձրեից և ձյունից:

Ամեն ինչ դուրս յեկալ, մեր տերերի կարծիքով, սրենքի հա-  
 կառակ: Մեր ամեն մի խնդիրը—հանցանք է, իսկ մեր դրությունը  
 բարեկամելու ցանկությունը—հանդգնություն, մեր տերերի հա-  
 մար վերաժողական: Թագավոր, մենք այստեղ 300,000-ից ավելի  
 ենք, և այս բոլորը—մարդ են միայն տեսքով, միայն արտաքինով,  
 իսկ իրականում՝ մարդկային վոչ մի իրավունք չեն ճանաչում մեզ  
 համար, անգամ խոսել, մտածել, հավաքվել, մեր կարիքները  
 քննել, միջոցներ ձեռք աննել մեր դրությունը բարեկամելու:

Մեզինց ամեն մեկը, վոր համարձակվում է ձայն բարձրացնել  
 ի պաշտպանություն բանվոր դասակարգի շահերի, նետում են  
 բանտ, ուղարկում են աքսոր, և բարի սիրտ, զգայուն հոգի ունենա-  
 լու համար պատժում են, ինչպես հանցավորի: Աղճակ բանվորին,  
 կատարելագուս ասնջված մարդուն—նշանակում է կատարել ծանր  
 հանցանք: Թագավոր, մի՞թե սա համաձայն է աստվածային ու-  
 ղենքներին, վորոնց վողորմությամբ թագավորում ես դու: Ավելի-  
 լավ չե՞ արդյոք, վոր մենք բոլորս, վոյջ Ռուսաստանի աշխատա-  
 վոր մարզիկս մեռնենք: Թող սպրեն և վայելեն կապիտալիստներն  
 ու չինովնիկները: Ահա ինչ է սպասում մեզ, Թագավոր:

Յեւ այս բանն է, վոր մեզ հախաբել է քո պայտաի պատերի  
 մաս: Այստեղ մենք վնասում ենք վերջին փրկությունը: Ազնու-  
 թյունը մի մերժի քո ժողովրդին, հանիք նրան իրավագրկության,  
 ազրատության և արխատության զերեկմանից, ասուր նրան հնարա-  
 վորություն, վոր ինքն իր բախար վորոչի, վերցրու նրանից չի-  
 նովնիկների անասնելի լուծը, քանզի քո և քո ժողովրդի միջե-  
 յեղած պատը, և թող նա՞ ժողովուրդը յերկիրը կատավարի. քեզ  
 հետ միասին: Չե՞ վոր սահմանված ես դու ժողովրդի բախատվա-  
 րության համար, բայց այդ բախար չինովնիկները խլում են մեզ  
 ձեռքից, նա մեզ չի հասնում, մենք ստանում ենք վիշտ և ստորա-  
 ցում միայն:

Առանց դայրույթի, ուշագիր նայիր մեր խնդրանքներին,—  
 նրանք ուզողված են վոչ թե դեպի շարը, այլ դեպի բարին, ինչպես  
 մեզ համար, այնպես էլ քեզ համար, Թագավոր: Հանդգնությունը  
 չե, վոր խոսում է մեր մեջ, այլ դիտակցությունը բոլորի համար,  
 անտանելի կացությունից անհրաժեշտ յելք պանելու: Ռուսաս-  
 տանը չափազանց մեծ է, նրա կարիքները չափազանց բազմազան են  
 և բազմաթիվ, վորպեսզի միայն չինովնիկները կարողանային կա-  
 տավարել նրան: Անհրաժեշտ է, վորպեսզի ինքը ժողովուրդը ուզե

կրեն,—չե՞ վոր միայն նրան են հայտնի իր կարիքները: Մի վա-  
 նիք ուրեմն նրա ուղնությունը. ընդունիր այն, հրամայիր անմի-  
 ջապես, իսկույն և յեթ կանչել ներկայացուցիչներ ուս յերկրի  
 բոլոր դասերից ու դասակարգերից: Թող այդտեղ լինի և՛ կապի-  
 տալիստ, և՛ բանվոր, և՛ քահանա, և՛ բժիշկ, և՛ ուսուցիչ. թող ա-  
 մենքը, ուլ էլ լինեն նրանք, ընտրեն իրենց ներկայացուցիչները,  
 թող յուրաքանչյուրը հավասար և ազատ լինի ընտրական իրա-  
 վունքի մեջ,—իսկ դրա համար հրամայիր, վորպեսզի հիմնադիր  
 ժողովի ընտրությունները կատարվեն ընդհանուր, գաղանի և հա-  
 վասար ձայնավության պայմանով: Սա մեր ամենապիտան խն-  
 դիրքն է. նրա մեջ և նրա վրա յե սահմանված ամեն ինչ. դա—գըլ-  
 խափոր և միակ սոցիալանին է մեր վերքերի համար, ասանց վորի  
 մեր վերքերը հավիտյան կարյունեն և մեզ չուսուով մահ կը բերեն:

Բայց մի միջոցը, այնուամենայնիվ, չի կարող բուժել մեր բո-  
 լոր վերքերը. անհրաժեշտ են ուրիշները ևս, և մենք հաստատ և  
 բացարձակ, ինչպես հոր, ասում ենք քեզ, Թագավոր, դրանց մա-  
 սին:

Անհրաժեշտ են.

1. Միջոցներ ուս ժողովրդի ազխտության և իրավապրկու-  
 թյան դեմ:

ա) Անձի ազատություն և անձեռնմխելիություն. ազատու-  
 թյուն խոսքի, մտնույի, ժողովների և խղճի՝ կրոնական դորժե-  
 րում:

բ) Ընդհանուր և պարտապիր ժողովրդական կրթություն պե-  
 սության հաշվին:

գ) Մինիստրների պատասխանատվություն ժողովրդի առջև և  
 կառավարելու որինականության յերաշխիքներ:

դ) Բոլորի, ասանց բաաժնության, հավասարությունը որենքի  
 առջև:

յե) Անմիջապես վերադարձնել բոլոր, համոզմունքի համար  
 սուժածներին:

2. Միջոցներ ժողովրդի ազրատության դեմ.

ա) Վերացնել անուղղակի հարկերը և փոխարինել դրանք ուղ-  
 զակի պրոպրեսիվ յեկամտային հարկով:

բ) Վերացնել փրկանքը. եժան վարկ և հողը հեազհետ հանձ-  
 նել ժողովրդին:

3. Միջոցներ կապիտալի՝ աշխատանքը ճնշելու գեմ :

ա) Աշխատանքի պաշտպանութունը որենքի կողմից :

բ) Ազատագրական-արտադրական պրոֆեսիոնալ միությունների ազատութուն :

գ) Տնտեսական քաղաքական օր և արտաժամայա աշխատանքների կանոնադրում :

դ) Աշխատանքի՝ կապիտալի գեմ պայքարելու ազատութուն :

յե) Բանվորների մասնակցութունը՝ բանվորների պետական-ապահովագրությանը վերաբերող որինադիժը մշակելու մեջ :

զ) Մինիմալ աշխատավարձ :

Ահա, Թաղավոր, մեր գլխավոր կարիքները, փորձնցով մենք չեկի ենք քեզ մտա : Հրամայի՛ր և յերգվի՛ր կատարել գրանք, և դու Խուսառտանը կը դարձնես և՛ բախտավոր, և՛ փառավոր, իսկ քո անունը մենք կը դրոշմենք մեր և մեր սերունդների սրտին առ-միշտ, յեթե չհրամայես—մենք կը մեռնենք աշտակ, այս հրապարակում՝ քո պալատի ստշև : Մենք ե՛լ գնալու տեղ չունենք և ավելորդ և : Մենք միայն յերկու ճանապարհ ունենք—կամ գեպի ազատութուն և բախտավորութուն, կամ գերեզման : Յույց տուր, Թաղավոր, գրանցից փո՛րը կուղես,—մենք կերթանք առանց առարկելու, թեև դա յինի մասժան ուղին : Թող մեր կյանքը զո՛ճ դառնա տառապամ Խուսառտանի համար : Մենք չենք ավտուտմ աչք զո՛ճը, մենք սիրով կը զոհարերենք այն :

ԳԱՊՈՆԻ ՆԱՄԱԿԸ ԹԱԳԱՎՈՐԻՆ

Թաղավոր, մի կարծիր, թե քո մինիստրներն ասել են քեզ ամ-բողջ ճշմարտությունն արդի գրության մասին : Ժողովուրդն ամ-բողջ հավատում և քեզ նա փորոշել և վաղը, կեսորփա ժամը 2-ին դալ գեպի Չմեռային պալատ, փորպետոյի իր կարիքները ներկա-յայցնի քեզ :

Յեթե, անվճարական գրանվելով, դու չերեսա ժողովրդին, դու գը կտրես քո և քո ժողովրդի միջև գոյութուն ունեցող բարոյա-կան կապը : Վտասնությունը, փոր տաժում և նա գեպի քեզ՝ կը շքանա : Յեկ աչտակ քո և ժողովրդի միջև կը թափվի անմեղ արյուն : Ներկայացիր վաղը քո ժողովրդին և ընդունիր բաց սրտով մեր խոնարհ պետիցիան : Յես, բանվորների ներկայացուցիչս, և իմ արի ընկերները,—մենք յերաշխատորում ենք քո անձի անձևոն-միտելությունը :

ԱՐՅՈՒՆՈՏ ՈՐԸ

Խոսքը տանք ոտարերկրյա թղթակիցներին : Նրանք միայն չարոյ էլին հեռագրով հայտնել իրենց տեղեկությունները : Նրանք աչք բանի համար պատրաստվել էլին, ինչպես իսկական ոսպա-կան թղթակիցներ : «Մենք ուղղակի, կատարյալ իմաստով, սաղ-ճական թղթակիցներ էլինք,—ասում են նրանցից մի քանիսը,— մենք տեսանք ոսպական գործողություններ և ինքներս բազմիցս յենթարկիցինք սպանվելու փորանդին» : Այն մասին, թե փորքան ստույգ են արտասանժանյան թերթերի թղթակիցներե տեղեկու-թյունները, մենք արդեն վերը խոսեցինք :

«Պետերբուրգ, 22 (9) հունվարի : ԱյսօրՊետերբուրգը զարթ-նեց և իրեն տեսավ պաշարողական գրության մեջ : Անսովոր ու-րախ սր եր : Հինգ աստիճան ստոնամանիք եր : Ողբ պարզ և, կազ-դուրոյ, յերկինքը գրեթե անամպ : Յեկեղեցիների և տաճարների փոսկեպոճ գմբեթները և տների ճյուղով զարդարուն տանիքներն ու ճակատները (Փասագ), պայծառ արևով լուսավորված, կազ-մել էլին ճոխ տեսարան, յերբ յես հյուրանոցի լուսամուտից նա-լիցի դուրս, անհամբերությամբ սպասելով, թե ի՛նչ և բերելու ինձ նոր բացված բրբ՛ :

«Յես անցորդների մեջ նկատեցի բնորոշ փոփոխութուն : Մարդիկ, սովորականի պես, փոխանակ բարձրանալու Ինակեսկի տաճարի աստիճաններով, լուս թեքվում էլին գեպի Չմեռային պալատը՝ մենակ կամ փոքրիկ խմբերով : Միանալով բանվորների հոտանքին, յես Յովակարիթյան աչտու յերկարությամբ ուղղվեցի գեպի Չմեռային պալատ : Անկարելի յեր չնկատել անցորդներէ գեմքի աչքի զարնոյ ժուայլ արասհայտությունը : Անցնելով ան-կյունը՝ բոլորն իրենց հայացքներն ուղղում էլին գեպի Չմեռային պալատ, աշխատելով տեսնել, թե ի՛նչ և կատարվում աջտակ :

«Հալափոկել եր արդեն հազարներից բաղկացած ամբոխ : Հե-ծելագորքը չեր թողնում նրան հրապարակ : Ժողովրդական մաս-սաններն սկսեցին սպառնալից գրո՛ճ զորքի վրա : Հեծելագորքը բաց թողեց ձիերի սանձը, քշելով ժողովրդին աջ ու ձախ : Ետտ հեռա-

քրքիրներ զգուշութեանից սկսեցին դուրս գալ ամբոխի միջից (վաշ առանց գծվարութեան) և գնացին իրենց տները: Յես նույնպէս գնացի իմ գլխավոր շտաբը, սպասելով տեղեկութեաններ իմ ուսպարայորներից, վորոնց ուղարկել էյի յես քաղաքի բոլոր կարևոր կետերը:

«Ինկարերը հետևում էյին միմյանց մի այնպիսի գլխապատույտ արագութեամբ, վոր հասարակութեանը գրանցից հուզված եր աննկարագրելի: Մինչև ամենապերջին բուզնն վոչ-վոք չեր հաստատուց, թե տեղի ունեցած լինի վորեւ յուրջ բան: Այնպէս արար հաստատով մտրակի ուժին, բոլորն ել ուսերը թոթվում և ասում, թե ցուցարարներին հեշտ և ցրել յերկու, յերեք ՅԵՄԿԱ-ից հետո. այսքան:

«Մինչդեռ քաղաքը յերկու ժամ շարունակ գտնվում եր բացարձակ հեղափոխութեան գրութեան մեջ:

«Առաջին անկարգութեաններն սկսվեցին ժամը 11-ին, յերբ զորքը փորձեց յետ մղել պուտիլովյան մի քանի հազար դործադուրավորներին՝ կամուրջներից մեկի վրա, վորը տանում եր դեպի քաղաքի կենտրոնը: Նույնը, գրեթե միաժամանակ, տեղի ունեցավ մի քանի կամուրջների վրա, ուր ստիպված էյին կռվել բանվորների մշտական հոտանքի դեմ, վոր գնում էյին նշանակված հավաքատեղին՝ Չմեռային սպայատի մոտ: Կողակներն սկսեցին մտրակներով, անցան սրերի, վերջացրին կրակոցով:

«Գործադուրավորների առաջին շարքերը ծնկաչոք ապերսում էյին կողակներին՝ թողնել իրենց և հաստատացնում էյին, վոր թըշնամական վոչ մի գիտավարութեան չունեն: Բայց սարսափ կրակոցները չէյին վախեցնում բանվորներին և հրաման տրվեց հրացանները լիքը փամփուշտներ դնել:

«Յերբ, կրակոցներից հետո, ժողովուրդը տեսավ սպանվածներ և այստեղ ու այնտեղ՝ մայթերի արյունոտ ձյունների վրա, մեռնողներ, լսվեցին վրեժխնդրութեան կատաղի ազդակներ:

«Մինչ այդ գրութեանը Չմեռային սպայատի մոտ վաստարանում եր:

«Չորքերը, պետերի գեկուցման համաձայն, անկարգ յեղան ժողովրդի վրոհ ավոզ մասսաների առաջն տունը: Հարկ յեղավ աղնութեան ուղարկել, ու ժամը յերկուսին կրակելու հրաման տրվեց և այստեղ: Յուրաքանչյուր համազարկներից ընկնում էյին:

տղամարդիկ, կանայք և յերեխաներ: Նրանց բարձրացնում և սահնակներով տանում էյին ամբուլատորիաները: Բանը արդեն միայն բանվորներով չեր վերջանում: Չայրույթը և կատաղուգութեանը տիրել եր բոլոր դասակարգերին: Ուսանողները, առարականները, աղղարնակութեան բոլոր դասակարգերը միատեսակ կատաղած էյին: Այս մոմենտին, վոր յես գրում եմ, հրացանածուրթյուն և կատարվում քաղաքի բոլոր ծայրերում:

«Քահանա Գալոնը, վոր գնում եր բանվորների մի մեծ բազմութեան գլուխ անցած, խաչը ձեռին, վիրավորվեց ձեռքից և ուսից:

«Այն ավտոմոբիլը, վոր իմ հեռագիրները տանում եր հեռագրատուն (հեռագիրներն ուղարկվում էյին ամեն ժամ, յերբեմն յուրաքանչյուր 5—10 րոպեյում. ԽԱՔ.), բռնվեց և գործադրվեց վիրավորներ տեղափոխելու համար:

«Բանվորական յերկու խմբեր այժմ կտրված են մեկը մյուսից: Նրանք, վոր գտնվում են Նեվայի մյուս կողմը, գինվում թրեթով, դանակներով, հյուսնական և դարբնոցային գործիքներով: Արագորեն կառուցվում են բառիկատները:

«Մի քանի սպաներ Նեվսկի պրոսպեկտում յենթարկվեցին հարձակման: Նրանցից խլեցին թրերը, պոկեցին ուսադիրները: Խուճապն ու չփոթութեանն ամենուրեք ահազին է: Չորքերը գործում են անխնայ, կրակում աջ ու ձախ, հաճախ առանց վրեժի հարկի: Գործադուրավորները կանչում են նրանց. «Մի՞թե դուք ոտներ եք Ինչո՞ւ յեք դուք վարվում արնախուճների և դահիճների պես»: Յերբ տանում կամ փոխադրում են վիրավորներին և սպանվածներին՝ ամբոխը վերցնում և գլխարկները և, ի պատիվ ընկածների, կանչում. «Ուտա՛. փա՛ռք ձեզ»:

«Յես անցա վրորդի և Պետերբուրգի ստալանա-ներով: Չորք և գրված տարբեր կետերում. կենտրոնացած են գրանք առանձնապես Նեվայի կամուրջների վրա:

«Բանվորական հոծ խմբերը, վորոնց մեջ կան շատ կանայք և յերեխաներ, իրենց հանգիստ են պահում, չվազնում են միայն գործարարի առջևից գնացող սպաներին:

«Վերադառնալով Նեվսկի՝ յես ընկա մի ահապին բազմութեան մեջ, վորը կազմված եր հասարակութեան բոլոր դասակարգերի ներկայացուցիչներից: Անմանոթ մարդիկ գրգռված փոխանակվում էյին նորութեաններով և սպավորութեաններով՝ որվա դեպքերի

առթիվ, ընդհանուր վտանգով միացած : Բոլորն էլ հուզված , վրդ-  
զովված էլին այն սարսափելի գործերից , վար կատարում էլին  
զինվորները Պուտիլայի գործարանում , ուր խեղճական սպանւածաց  
եր : Բանվորներն այնտեղ , կրակելու սպանալիքից , պատկել էլին  
հողին և գորքը կրակում էր պտեհածների վրա :

«Նարվսկայա վարտաւյի գորքը կրակում էր այն ցու-  
ցարարներին , վորոնց առաջնորդում էլին քահանաներ Գալսնը և  
Լեքզելը , վորոնք զնում էլին խաչը ձեռներին , իկնալով և իւ-  
րավորի պատկերով : Պատկերը ծախծիվէց զնդակներէ կարկառից :  
Քահանա Սերգեյն սպանվեց :

«Նեկվայի կամուրջը պահպանող վտախկաններն ու զինվորնե-  
րը փորձեցին ավիններով յետ մղել ամբոխին , բայց ամբոխին ճրն-  
շումը չեր թուլացնում : Փողը վռնեց , և յերկու համազարկ ուղղվե-  
ցին ամբոխի վրա : Կան շատ սպանւածներ և վիրավորներ : Ազեր-  
սանքներ , անձ բներ , վրեժ ինդրութեան ճիշեր ևն լսվում սպանե-  
րի հասցեյին . . .

«Արևը մայր մտնելուց հետո կռիվը հանդարտեց : Յեա այցե-  
լեցի քաղաքի բոլոր գլխավոր կենտրոնները և ամեն ինչ գտա հան-  
գիստ . . . Իրեթե յուրաքանչյուր անկյունում , քաղաքի կենտրո-  
նում գորքեր ևն գրված . զինվորները հավաքվել են խարույկների  
շուրջը : Այստեղ ու այնտեղ հեծերագորի խմբեր ևն . . . Փողոցնե-  
րում անցորդներն ավելի յեն , քան կարելի յեր սպասել սրվա սար-  
սափելի զեպքերից հետո . . .

«Անկարգութեանների յերկուցից ֆարքիները պահպանվում  
են զինվորներով : Չորքերը կանգնած են Նարվսկի գաղտալայի  
մոտ , վորը տանում և զեպի Պուտիլայի գործարանը : Առաջնայան  
այնտեղ գորք և վտախկանութեան և ուղարկվել ողնութեան : Մի  
վաչա-զինվոր և դրված Նեկվայի նավաչինաւրանի մոտ :

«Առաջնայան ժամը 10-ի մոտ 15 հազար մարդ ուղղվեց զեպի  
Պետրբուրգ , բայց ժամը 11-ին յերկու հարյուրակ կազակ կանգ-  
նեցրին նրանց , կտրելով նրանց ճանապարհը : Կազակները յերեք  
անգամ կրակեցին դատարկ փամփուռաներով : Գործադուլավոր-  
ներից վոմանք զնացին Նեկվայի սասուցի վրայով , մնացյալները  
հրաժարվեցին վերադառնալ : Վաչտապետը պահանջեց ողնու-  
թեան և հրամայեց հրաջանները լիքը փամփուռաներ գնել : Կա-  
զակները , սակայն , ամբոխի վրա հարձակվեցին մարակներով և  
ցուցարարներին յետ քշեցին :

. . . «Առաջնայան ժամը 11-ին բանվորներն սկսեցին հա-  
վաքել վտախկանի ոտարովում : Ուրանները (վտախկանութեան  
չկար) կանգնած էլին Նիկոլայեվսկի կամրջի վրա : Հետևակ ցու-  
րախմբերը կանգնեցնում են բանվորներին : Փողոցային յերթե-  
կութեանն ընդհատված և : Գիտութեանց և Արվեստի Ակադեմիայի  
մոտ կանգնած և շատ գորք : Ուրաններ , հետևակ գորք ու կազակներ  
հավաքված են նաև վրբորգսկի ստարաւնայում : Բանվորները հա-  
վաքվում են զեպի Լիտեյնի կամուրջը տանող փողոցներում : Նը-  
րանց թողնում են 2—3 մարդով , բայց վոչ խմբերով : Բանվորներն  
իրենց հանդիստ ևն պահում :

. . . «Նարվսկի գաղտալի մոտ հեծերագորը վոչ վոքի չի թող-  
նում քաղաք : Վտախկանի ոտարովում մի բանվոր գիմեց ամբո-  
խին և կոչ արավ նրանց՝ զնալ զեպի Իվարցովի հրատարակը : Մի  
քանի հազար բանվորներ ուղղվեցին զեպի Նիկոլայեվսկի կա-  
մուրջը :

«Կեսրվա ժամը 1-ն և : Վտախկանի ոտարովից յեկկո ամբո-  
խը կանգնեց վեց հետևակ զինվորների , ուրանների և կազակների  
ուժեղ գորախմբի կողմից : Գործադուլավորների առաջնորդները  
զիմում են զինվորներին , կոչ անելով՝ չկրակել իրենց յեղբայրնե-  
րէ վրա : Հետևակ զինվորներն իջեցնում են հրացանները , բայց  
ուրանները և կազակները հնազանդվում են հրամանին և սերտի  
քշում ամբոխին : Կան շատ վիրավորներ : Ընդհարման միջոցին  
նմադում և զինվորական յերաժշտախումբը :

«Դեպի Զեկոային պալատը տանող բոլոր փողոցները բռնված  
են գորքերով . . . 1 ժ . 20 ր . — Հենց նոր տեղի ունեցավ փորձ՝ Իր-  
վարցովի հրատարակը խուժելու : Գործադուլավորները մեծ թվով  
հավաքվեցին Արքանդուրովսկի այգում , Ծովակալութեան մոտ և  
փորձեցին կտրել հրատարակը տանող դռները : Չորքը կանգնեց-  
րեց նրանց . . .

«Հուզումն ու անկարգութեաններն ավերանում են ամեն կողմ :  
Յուցերը վտախկանի ոտարովում դարձան առանձնապես բուռն  
և սպանալից : Չորքը կրակում և : Ժողովրդական բազմութեան-  
ները փորձում են անցնել քաղաքի կենտրոնը կամուրջներով , վո-  
րոնք այդ կենտրոնը միացնում են կղզիների և վրբորգսկայա ստա-  
րախայի հետ : Տեղի յեն ունենում ընդհարումներ :

«Տրոյցկի կամրջի վրա հեծերագորը սերտով հարձակվեց տա-  
հազարանոց ամբոխի վրա : Գործադուլավորները գիմեցին փա-

խուսախի՛, հեծեկազորից՝ հետապնդվելով: Կամուրջն ալժմ փակ է յերթեկույթյան համար: Թողնում են միայն ընտրյախներին, վորոնց համար նույնպես անխտանդ չե մտախի՛ յերեկայր, քանի վոր քնդհարման ժամանակ վոչինչ է վոչ վորի չեն շոկում: Շարժման պոպոնորդները ճտուեր են ստում ժողովրդի հսկայական բազմությունների առաջ և կոչեր են կարգում՝ հրավիրելով բոլորին՝ զընայ դեպի պալատ և մեռնել այնտեղ: Կոչերն ընդունվում են ծափահարություններով:

«Յերբ Պուտիլովի բանվորների ճանապարհը՝ կորեցին դեպի պալատ, նրանք, մոտ 10,000 մարդ, հավաքվեցին Միության չենքի մոտ: Լուսամուտներից թափում են հեղափոխական կոչեր: Առաջնորդները կրակոտ ճտուեր են ստում, բողբեկով զինվորական ուժի գործադրության դեմ, մասնանշելով թագավորի վերաբերմունքը դեպի ժողովուրդը: Ճտուերն ընդունվում են ծափահարություններով և «կորչի՛ միապետությունը» բացականչություններով:

«2 ժ. 38 ր.—Ամբոխը և զորքը կոտում են պալատի շուրջը: Հրացանաձգությունը շարունակվում է, ամբոխը դուռում է՝ «Ուռա՛»: 30 մարդ վերափորված և արորբված և կազակների կողմից Շլիսելբուրգի տրակաի վրա: 2 ժ. 53 ր.—Ամբոխը Իվարցովի հրապարակից ցրիվ է արված: Չորքը հեռուում է նրան. կա 150 սպանված և վերափոր: Ամբոխը կատաղած է և սպանում է վշրեժխնդիր լինել: Սպանվածների մեջ կան շատ կանայք և յերեխաներ: Սպանված է մի թագային փոտսիկան (ОБОЛОТОВЫЙ) — 3 ժ. 35 ր.—ժողովուրդը կազմակերպում է զինված զիմադրություն: Սպանված է մի կազակ, վերափորված է մի սպա: Ամբոխը փշայարի ցանկեր է շինում Վասիլևիսկի ոստրովի փողոցներում. վորպեսզի խանգարի հեծեկազորի հարձակումները:—3 ժ. 40 ր.—Իվարցովի հրապարակից բշված ամբոխը նահանջում է Նեվսկով: Չորքը յերեք անգամ կրակեց նահանջողների վրա: Կա 30 սպանված և շատ վերափոր: Կատաղած ամբոխը սրկում է քարերը փողոցի ցորահատակից և նետում սպանների վրա: —4 ժամին.—Գործադրվածները Վասիլևիսկի ոստրովում բառիկազներ են շինում ընկած հեռագրասյուներից:—5 ժ. 30 ր.—Բառիկազները՝ Վասիլևիսկի ոստրովում յերկու տեղ վերջացան: Ամբոխը հրաժարվում է ցրվել, չնայած զինվորների համադարկերի կրկնության—6 ժ.—Ամբոխը փորձում է բառիկազներ շինել Նեվսկում:—9 ժ. 45 ր.—

Վասիլևիսկի ոստրովը ընկղմված է խավարի մեջ: Չկա վոչ էլեքտրական յույս, վոչ գազի:—11 ժ., յերեկոյան: Հրացանաձգությունը շարունակվում է Վասիլևիսկի ոստրովում: Բանվորները վառում են հեռագրաթեղերի սյուները:—1 ժ. 10 ր. գիշերվա.—Համադարկերի ձայնը Վասիլևիսկի ոստրովում լսվում էր դեռ կես գիշերին: Ձինվորները քանդել են բառիկազները՝ շինելուն պես, բայ վորում սպանված է 30 բանվոր»: Այս է արյունոտ օրվա կարճ պատմությունը:

ՍՊԱՆՎԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՎԵՐԱՎՈՐՆԵՐԻ ԹԻՎԸ

Սպանվածներին և վերափորների թվի նկատմամբ տեղեկությունները տարբերվում են: Ինքնին պարզ է, վոր ճիշտ հաշվի մասին խոսք լինել չի յել կարող, իսկ աչքով դատել—շատ դժվար է: Կտապարական հաղորդագրությունը 96 սպանվածի և 330 վերափորների մասին, պարզ է, սուտ է, և նրան վոչ-վոչ չի հավատա: Լրագրական վերջին տեղեկությունների համաձայն, ժուրնալիստները հունվարի 19-ին ներքին գործերի մինիստրին ներկայացրել են 4,600 սպանվածի և վերափորների ցուցակ, վոր կազմել են սեպարատյունները: Ի հարկե, այս թիվը ևս չի կարող լինել լիակատար, վորպէհետե ցերեկով ել (չխոսնեք արդեն գիշերվա մասին)—անհնար կը լիներ հաշվել բոլոր ընդհարումների ժամանակ ընկած բոլոր սպանվածներին ու վերափորվածներին:

Միապետության հողթանակը անդեն ժողովրդի վրա վոչ պակաս դոհեր արժեցավ, քան Մանջուրիայի մեծ ճակատամարտները. Ի զուր չի վոր, ինչպես ոտարերկրյա բոլոր թղթակիցներն են հաղորդում, Պետերբուրգի բանվորները սպաններին առում էյին, թե նրանք ավելի հաջող կավում են ուր ժողովրդի դեմ, քան յապոնացիների:



# ԴՎԱՐՑՈՎԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

## ԱԿՆԱՏԵՍԻ ՆՍՄԱԿԸ

Գերմանական սոցիալ-դեմոկրատական « Vorwärts » թերթը տպել և պետերբուրգցի մի փաստարանի հետևյալ մասնավոր նամակը. « Հունվարի 9 (22) — Ի առավոտյան յես Կեդեմիսի անցա դեպի Դվարցովի հրապարակը, ուր բանվորները համարվել էին իրան՝ թաղավորին պետիցիա հանձնելու: Բայց ինձ չաջողվեց հրապարակ հասնել: Սկզբում յես կանգնեցի գլխավոր շտաբի տան մաս, վորի ճակատը նայում է դեպի Նեվսկի և դեպի Դվարցովի հրապարակը: Ինչ էր կատարվում հրապարակում — յես չկարողացա տեսնել, վորովհետև իմ առջև կանգնած էր հեծելազորի մի վաշտ, վոր Նեվսկու վրա յեղած ամբոխը բաժանում էր Ծովակալութան հրապարակի և Ալեքսանդրյան այգու ամբոխից: Ժամանակ առ ժամանակ լսվում էին «ուռ» բացականչությունները, մեկ այս մեկ այն կողմից: Ընդհանրապես ամբոխն իրան պահում էր շատ հանդիստ և զուսուց: Ծառերը բողբոջում էին «ուռ» բացականչությունների զեմ, վորոնք կարող էին վորևէ բանության առաջացնել: Յերկու անգամ յես տեսա, թե ինչպես ձիավոր զորամասերը՝ մերկացրած սրերով, Դվարցովի հրապարակից անցան Ազմիրալ-տեյսիի փողոցը: Մենք լուր առանք, վոր բանվորների սրբազան Քափուրը՝ բահանա Գապոնի գլխավորությամբ, խաչն ու պետիցիան ձեռներին, ցրել է տրված, և վոր բանվորներն ամենուրեք յես են մղված: Ինձ մոտ կանգնած բանվորներն ասում են. «Այո, այժմ պարզ է, վոր թագավորից ոգնուք յուն չենք ստանա: Մենք հաց խնդրեցինք, իսկ մեզ գնդակներ ովին»: Դվարցովի հրապարակից և Ալեքսանդրյան այգուց վոչ մի ձայն չէր լսվում, բայց դա լուրթյուն էր միայն փոթորիկից առաջ: Հանկարծ Դվարցովի երապարակի վրա լսվեց համազարկ, յերկրորդը, յերրորդը: Մեր առջև կանգնած բազմության միջից սկսեցին վերցնել սպանվածներ և վիրավորներ: Յես սեփական աչքերով տեսա շատ սպանվածներ և վիրավորներ, ի միջի այլոց, սպանված Հահել աղջիկ, սպանված պատանի: Սպանվածներին և վիրավորներին տարան Նեվսկու: Մի աղջկա, բոտ յերևույթին ուսանողուհու, մեկը տա-

բանք հարեան տուեր և զրինք նստարանի վրա, վորը խկույն և ևթ ծածկվեց արյունով: Ծակառն վերք կար, բայց, հավանորեն, կար և մի ուրիշ վերք, վորովհետև նա պատկած էր յերեսը դեպի վեր: Վիրավորին մացրին մի բնակարան, վերքը լվացին, վիրահայտով փաթաթեցին, վորովհետև տակավին կյանքի նշաններ կային, և սպա նրան տարան: Մասնայի կատապուրյունն ու հուզումը հասավ բարձրագույն կետի: Ամբոխը, բառացի կերպով, գրավել էր Նեվսկի և Գոզուի փողոցների հարակից մասերը և անխնա ծեծում էր բոլոր զինվորականներին. վոր սանկաններով անցնում էին: Յես տեսա, թե ինչպես ամբոխը ձեռնարկով՝ արյունլիվ արավ յերկու ժանդարմական սպայի և հրետանու (արախիբրիայի) յերկու փաստարի ( ibranoportnik ): Մեկի թուրը խեցին և ուսադերները սոսկեցին, մյուսը՝ հաջողեց ազատվել փախուստով: Ամբոխը հարձակվեց մի հեռակային սպայի և մի գվարդիականի վրա, և նույնպես խեց նրա թուրը: Տարիքառ զենքայլը վիրավորվեց ճակատին նկատ չչով, ուսադերները սոսկեցին, իսկ գլխարկը, «ուռ» բացականչություններով՝ չղրտվեց: Մեծեցին մի ծովային կապիտանի: Այս բոլորը կատարվում էր գործին մոտիկ, վորը սակայն վոչինչ չէր կարող անել: Նեվսկու վրա, Մարսկոյ փողոցից վոչ հեռու, ամբոխը, առանց վորևէ պատրաստության, կազմեց ժողովրդական մեծ ժողով: Յես լսեցի յերկու կրակոտ ճառեր: Մեկը վերջացավ «կարչի՝ միապետությանը» բացականչությամբ, վորը ամբոխի կողմից բնույնովեց խանդավառությամբ: Մյուս ճառը վերջացավ բարձրագույն կոչով՝ «ի գեմ!»: Ամբոխը այս կոչն էլ բնույնեց մեծ համակրանքով: Բայց ահա հայտնեց հրացանաձիգների մեկ, սպա յերկրորդ վաշտը: Ամբոխը բաժանեցին յերկու մասի և բռնեցին դեպի Մոսկվայի տիր: Հրացանաձիգները գրավեցին Պալիցեյսի կամուրջը: Յես կանգնած էի մի կողմ, Բյազորոյնու Սպրրանիայի (Ազնվատոհմերի ժողովարան) մուտքի մոտ: Հանկարծ Մոսկվայի մյուս ասից լսվեց համազարկ, և մի քանի րպե անց վիրավորներ տարան արյան մեջ թաքսիված: Մյուս ասիին նույնպես կանգնած էր ժողովրդի մեծ բազմություն, վորը իրեն պահում էր միանգամայն հանդիստ: Նրան, ըստ յերկու վույթին, կովի վոչ մի ազմուկ չէր գրավում: Բոլորը ցնցվել էին տեսածի տաղավորությամբ և կանգնել տխուր: Բայց և այնպես այդ մարդկանց էլ չինայեցին: Համազարկը լսվեց կրկին: Դեղատանն մոտ մեկը մյուսից փոքրիկ հեռավորության վրա կանգնած

յերկու կանոնցից մէկը ընկալլ, առանց մի ձայն հանելու: Հրա-  
ջանածիգները, բառ յերևուցիին գիտմամբ եյին նշան բռնել այդ  
յերկու կանոնց: Մյուսը սորոսալիւի ճիշ արձակեց և կրացայ  
սոաջինի գիակի վրա: Մոյկայի և Նեակու անկյունում ընկած եյիս  
արդեն մի քանի սպանվածներ: Յերբ, փոքր հետո, յես անցա այդ  
տեղով—ամենուրեք և ամեն կողմ արշուն տեսա: Յերկույան  
ժամը 5-ին յես անցա Գորսխովայա փողոցով, վորը դարձրել եյին  
գինձորական բանակատեղիներից մեկը: Ի՛նչ կար մյուս տեղե-  
րում՝ յես շտեսա, բայց ինձ պատմեցին, վոր ել առաւել մեծ  
աքրսալներ են կատարվել վասիլևսկի ոստրովում: Բանձորները  
այնտեղ շինել եյին մի քանի բառիկապ:

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿՈՎԻ ԾՐԱՅԻՐԸ**

Առաջին հայացքից տարորինակ և խոսել կովի մասին, յերբ  
անդեն բանձորները խաղաղորեն գնում եյին պետիցիա ներկա-  
յացնելու: Իս սպանդանոց եր: Բայց կառավարութունը նկատի  
տներ անպայման կորիվ և գործել և, անկասկած, միանգամայն  
մտածված ծրագրով: Ես սպգմական տեսակեաից քննել և Պետեր-  
բուրգի և Չմեուային պալատի պաշտպանութունը: Ես ձեռք և  
տակ ուղղական բոլոր միջոցները: Ես յես և քաշել քաղաքա-  
ցիական ամբողջ իշխանութունը և միլիոն ու կես բնակիչ ունե-  
ցող մայրաքաղաքը հանձնել և ժողովրդի արշանը ծարավի գնե-  
րալներին (մեծ իշխան վլադիմիրի գլխավորութեամբ) արամադրու-  
թյան:

Կառավարութունը գլխամար պրոլետարիատին հասցրել և  
ապստամբության, անգնեների ջարդով, առաջացնելով բառիկապ-  
ներ, վորպետի այդ սպոտամբութունը խեղդի արշան ծովում:  
Պրոլետարիատը կը սովորի կառավարության այդ սպգմական  
դասերը: Յեկ պրոլետարիատը կը սովորի նաև քաղաքացիական  
կովի արվեստը, քանի վոր նա հեղափոխութուն և սկսել: Հեղա-  
փոխութունը պատերազմ և: Իս միակ որինական, իրավաչափ  
(*правомерная*), արդարացի, իսկապես մեծ պատերազմ և  
բոլոր պատերազմների մեջ, վորոնք ծանոթ են պատմության:  
Սյս պատերազմը տարվում և վոր թե մի խումբ կառավարող-  
ների և կեղեքողների շահախնդրական նպատակների համար, ինչ-  
պես բոլոր և ամեն տեսակի պատերազմները, այլ հոգուա ժողո-  
վորական մասսայի՝ ընդգեմ արանների, հոգուա միլիոնավոր

և տասնյակ միլիոն շահագործվողների և աշխատավորների՝ ընդ-  
դեմ կամայականության և բռնության:

Ամենակողմանի գիտողները այժմ միաձայն գտնում են, վոր  
այդ պատերազմը՝ Ռուսաստանում հայտարարված և սկսված և:  
Պրոլետարիատը բարձրանում և ավելի մեծ մասսաներով: Դեպի  
թագավորն յեղած մանկական հավատի մնացորդներն այժմ կը  
մեռնեն նույնպիսի արագութեամբ, ինչպիսի արագութեամբ Պե-  
տերբուրգի բանձորները պետիցիայից անցան բառիկաղների:  
Բանձորները կսկսեն զինվել ամենուրեք: Կարիք չկա տեսու, վոր  
վոստիկանութունը կը տանապատակի իր խստութունը գինա-  
պահեստների և գինավաճառանոցների հսկողության գործում:  
Վոր՝ մի խստություն, վոր՝ մի արգելք չի կանգնեցնի քաղաքային  
մասսաներին, վորոնք գիտակցել են, վոր անդեն՝ միշտ ել, վոր-  
քեկ առիթով կառավարութունը կարող և զնգակահարել իրանց:  
Յուրաքանչյուրն առանձին պետք և ամեն ջանք գործ գնի, վոր-  
պետի իր համար հրացան կամ գոնե աւրճանակ գանի, վորպետ-  
դի զենքը թաղցնի վոստիկանութունից և պատրաստ լինի ցա-  
րիդի արշունարբու սպասավորներին գիմադրավելու: Ամեն մի  
սիլիզը դժվար և—ասում և առածը: Բանձորների համար շատ  
դժվար եր՝ գիմել զինված պայքարի: Կառավարութունն այժմ  
ստիպեց նրանց այդ բանին գիմելու: Առաջին, ամենադժվար  
քայլը արված և:

Անդլիական թղթակիցը բերում և բանձորների մի բնորս,  
խոսակցութուն, վոր տեղի յե ունեցել Մոսկովայի փողոցներից  
մեկում: Բանձորների մի խմբակ քայարձակ քննում եր որվա  
դասերը. «Կացիններ», ասում և մեկը,—չե՛, կացիններով վո-  
չինչ չես անի թրերի դեմ: Կացինը նրան չի գորի, իսկ դանակը՝  
մանավանդ: Չե, աւրճանակներ են պետք, առնվազն աւրճանակ-  
ներ, իսկ ամենից լավը—հրացան»: Այսպիսի և նման գրույցներ են  
կատարվում այժմ ամբողջ Ռուսաստանում: Յեկ այդ գրույցները  
Պետերբուրգի «վլադիմիրովյան որից» հետո չեն մնա միայն վոր-  
պես գրույցներ:

Պետերբուրգի սպանդը զեկավարող թագավորի հորեգոր  
վլադիմիրի սպգմական ծրագիրը հանդում եր այն բանին, վոր-  
պետի արվարձանները, բանձորական արվարձանները չթողնեն քա-  
ղաքի կենտրոնը: Ամեն կերպ աշխատում եյին զինվորներին համոզել  
թե բանձորները կամենում են քանդել Չմեուային պալատը (որը-

բայտակարանները, խաչերի և պետիցիայի ոգնութեամբ) և սպանել Քաղաքներին: Ռազմազխտական խնդիրը հանդուժ էր դեպի Դվար-  
 քովի հրապարակը ամենոց կամուրջները և գլխավոր փողոցները  
 պահպանելուն: Յեկ «տաղմահան գործողութեանները» գլխավոր  
 զայրերը յեղան Տրոյցի, Սամսոնսկի, Նիկոլայսկի, Դվարքովի  
 կամուրջների մոտի հրապարակները և բանվորական թաղերից  
 դեպի կենտրոնը ամենոց փողոցները (Նարվոկայա Չաստավայի  
 մոտ, Շլիսելբուրգի արակտի և Նեվսկու վրա), վերջապես,  
 Դվարքովի հրապարակը, ուր այնուամենայնիվ, չնայած գորբէ  
 կուտակումին, չնայած նրանց գիմադրութեան, անցան հաղարա-  
 վոր բանվորներ: Ռազմական գործողութեանների խնդիրը, պարզ  
 է, շափաղանց հեշտանում էր նրանով, վոր բոլորը գեղեցիկ կեր-  
 տով գրեցին ո՛ւր են գնում բանվորները, գրեցին, վոր գոյու-  
 թեյն ունի միայն մի հավաքատեղի և մի նպատակ: Քաջ գեներ-  
 բայները «աջողութեամբ» կոչում էլին թշնամու գեմ, վոր գալիս  
 էր մերկ ձեռներով, վաղորոք ամենքին և յուրաքանչյուրին հայա-  
 նամ լինելով, թե ո՛ւր և ինչի՛ յե գնում ինքը... Դա անպաշտպան  
 և խաղաղ ժողովրդական մասսաների անարգ, ստանախրա  
 սպանութեան էր: Այժմ մասսաները յերկար պիտի խորհին և  
 վերադրեն կատարված անցացը՝ հիշողութեաններում և պատ-  
 մութեաններին մեջ: Այդ մասնումների միակ և անխուսափելի  
 յեղբակացութեանը, «Վյազիմիրի խրատներին», այդ յուրացումը  
 ժողովրդական մասսաների գիտակցութեան մեջ կը լինի այն  
 յեղբակացութեանը, վոր պատերազմում պետք է գործել սաղմա-  
 կան ձևով: Բանվորական մասսաները, նրանց հետ և գյուղական  
 շքավոր մասսաները կը գիտակցեն, վոր իրենք կոմոլ կոցմ են,  
 և այն ժամանակ... այն ժամանակ հետեյալ ընդհարումները մեր  
 քաղաքացիական կոմում չեն կատարվի միայն մեծ իշխանների  
 և թագավորի «ծրագրով»: «Ք գեն» կոչը, վոր լավեց հունվարի  
 9-ին, Նեվսկու, բանվորական մի բազմութեան միջից—այժմ չի  
 կարող անհետանաք անցնել:

**ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԻՒ ԴԵՄ**

Բոլոր թղթակիցներն ընդգծում են, վոր ամբոխը սպանելին  
 և գիմադրներին գիմադրում էր՝ «Դահիճնե՛ր, մարդասպաններ, ար-  
 քնախուճներ» բացազանչութեաններով: Հայանում են, վոր մի  
 ձեր գեներալ, վոր սահնակով գնում էր դեպի գորբը, կանգնեցրին:

Ամբոխը բացահանչում էր: «Դուք գնում եք նրանց հրամայելու,  
 վոր մեզ վրա կրակե՛ն»: Գեներալը կատապանին հրամայեց՝ ըչէլ,  
 բայց հարված ստացավ իր գլխին՝ ինչ—վոր մի լավ, հարուստ  
 մուշտակ հագած պարսկից: Ամբոխը գեներալին հանեց սահնակից  
 և սպանեց: (Այս հաղորդագրութեանը կատկածելի յե, վորովհե-  
 տե փոստիկանութեանը և կատավարութեանը կաշխատեցին հավա-  
 նորեն հոչակել մի այգպիսի ֆակտ, վորպեսզի ողտագործեն այն  
 գործողութեանների գեմ):

«Կիրակի, յերեկոյան ժամը 8-ին, կրթված հասարակութեանը  
 պատկանող 20 մարդ կանգնեցրին մի բարձրատեղի ման անձի սահ-  
 նակը: «Մարդասպան,—ասին նրան,—իջի՛ր սահնակից, շոքի՛ր և  
 թողութեան խնդրի՛ր»: Այդ անձը հրամարվեց յենթարկվել, և  
 յրջապատողները թքեցին նրա յերեսին»:

**«ՀԱՅՐ ԹԱԳԱՎՈՐԸ» ՅԵՎ ԲԱՌԻԿԱԿԵՆԵՐԸ**

Ընդհանուր հայացք դրելով արյունոտ կիրակի սրվա դեպ-  
 քերի վրա՝ ամենից ավելի պարմանում ես բանվորների՝ դեպի  
 թագավորն ունեցած միամիտ, նահապետական հավատի և սուրբ  
 ձեռներին թագավորի իշխանութեան գեմ տարած փողոցային կա-  
 տաղի կովի գուզակցելուն: Ռուսական հեղափոխութեան առաջին  
 սրբ պարմանայի գորութեամբ գեմ առ գեմ բերեց հին և նոր Ռու-  
 սաստանը, ցույց տվեց դեպի հայր—թագավորն յեղած գյուղա-  
 ցիական վաղեմի հավատի հողերը և հեղափոխական ժողովրդի՝  
 հանձննա բազաբային պրոխտարիտի, ծնունդը: Յեկրուպական  
 բուրժուական թերթերն իրար չեն ասում, թե Ռուսաստանը հուն-  
 վարի 10-ին արդեն այն չե, ինչ էր Ռուսաստանը հունվարի 8-ին:  
 Իրար չե մեր՝ վերե հիշած գերմանական սոց.—դեմոկրատական  
 թերթը հիշում, թե ինչպես 70 տարի առաջ սկսվեց բանվո-  
 րական շարժումը՝ Անգլիայում, ինչպես 1834 թվին անգլիական  
 բանվորները փաղոցային ցույցերով բողոքում էլին բանվորական  
 միութեանները արդեղելու գեմ, ինչպես 1838 թվին, Սանչեստրի  
 մոտ նրանք հսկայական ժողովներում մշակեցին «ժողովրդական  
 խարխտան», և պատույր Ստիվենսը հայտարարեց, թե «ամեն մի  
 ազատ մարդ, վոր չնչում և աստժո ազատ ողբ և ման և գալիս  
 աստժո ազատ հողի վրա, իրավունք ունի իր սեփական ողախի  
 վրա»: Յեկ այդ նույն պատույրը հավաքված բանվորներին հրա-  
 վիրեց դենք վերցնել:

Մեզ մոտ՝ Ռուսաստանում, շարժման դյուխ կանգնեց նույնպես քահանայ, վորը մի որվա մեջ՝ խաղաղ միջնորդութեամբ էրա թաղավորի մոտ գնալու հրաւիրեց անցավ հեղափոխութեան սկսելու կոչին: «Ընկեր ուսու բանվորներ, — գրել է քահանայ Գյորգի Գապոնը արշուեստ արից հետո, իր մի նամակում, վոր կարգացվել է իրերախների ժողովում, — մենք այլև թաղավոր չունենք: Այսոր արշան գեա անցավ նրա և ուսու ժողովորդի միջև: Ժամանակ է, վոր ուսու բանվորները առանց նրան սկսեն ժողովորդի ազատագրութեան պայքարը: Արհնում եմ ձեզ այսորվա համար: Վաղը յես կը լինեմ ձեր շրջանում: Այսոր ևս սաստիկ գրազված եմ աշխատանքով, մեր գործով»:

Սա քահանայ Գյորգի Գապոն չի խոսում: Սա ասում են, ուսու բանվորների և գյուղացիների այն հազարները, տասնյակ հազարները, միլիոնները և տասնյակ միլիոնները, վորոնք մինչև այսոր կարող էյին միամտորեն և կուրորեն հավատալ հայր-թաղավորին, իրենց անտանելի կացութեան թեթեացումը փնտուել «իրա հայր-թաղավորի» մոտ, բոլոր խայտասակութեանների, բանութեանների, կամայականութեանց և կողոպուտի մեջ մեղադրել միայն թաղավորին խորող շինովնիկներին: Մոռացված, վայրենացած, խուլ անկյուններում սպրող գյուղացիութեան յերկար սերունդներ ամբարցնել են այդ հավատը: Բանվորական շարժման վերջին տասնամյակը առաջ բերեց հազարավոր առաջավոր պրոլետարներ—սոցիալ-դեմոկրատներ, վորոնք միանգամայն դիտակցարար թողին այդ հավատը: Այդ շարժումը դաստիարակեց տասնյակ հազար բանվորներ, վորոնց դասակարգային բնագոր, ամբարցնված գործադուլային պայքարում և քաղաքական ազիտացիայի մեջ, խախտեց այդ հավատի բոլոր հիմքերը: Բայց այդ հազարների և տասնյակ հազարների յետև կանդամ էյին հարյուր հազարներ և միլիոն աշխատավորներ ու շահագործվողներ, ստորացված և վիրավորված պրոլետարներ ու կիսապրոլետարներ, վորոնց մեջ տակավին կարող էր այդպիսի հավատ մնալ: Նրանք չէյին կարող ապստամբութեան դիմել, նրանք բնգունակ էյին միայն խնդրել և աղերսել: Նրանց պայքարները և տրամադրութեանը, նրանց կրթութեան և քաղաքական փորձի մակարդակը արտահայտեց քահանայ Գյորգի Գապոնը և գրանում է կայանում պատմական նշանակութեանն այն դերի, վոր ուսուական հեղափոխութեան սկզբում խողաց մի մարդ, վորը դեռ յերեկ

բոլորովին անհայտ, այսոր դարձել է Պետերբուրգի որվա հերոսը, իսկ Պետերբուրգից հետո՝ ամբողջ յեվրոպական մամուլի:

Այժմ պարզ է, թե ինչո՞ւ Պետերբուրգի սոցիալ-դեմոկրատները, վորոնց նամակները մենք բերինք վերը, սկզբում Գապոնին վերաբերվել են և չէյին կարող չվերաբերվել անվստահութեամբ: Փարաջա կրող, աստված հավատող և Զուրատովի ու պահնորդական բաժանմունքի բարձր հովանավորութեան ներքո գանխող մարդը չէր կարող կասկած չներշնչել: Կեղծ թե անկեղծ նա պատուել է իր հագի փարաջան և անիծել իր՝ անարդ դասին պատկանելը, տերտերների դասին, վոր կողոպուտում և այլատերում են ժողովուրդը: Պա վոչ վոք չէր կարող հավատացած ստել, բացի այն մարդկանցից, վորոնք մոտիկից, անձնապես ճանաչում են Գապոնին, այսինքն՝ մի աննշան խուճր մարդկանցից: Դա կարող էյին լուծել միայն ծավալվող պատմական դեպքերը, միայն Փակտերը, Փակտերը և Փակտերը: Յեվ Փակտերն այդ հարցը լուծեցին հողուտ Գապոնի:

Կարո՞ղ է արդյոք սոցիալ-դեմոկրատիան ավրանայ այդ ստուրերային շարժման, — տաղնապով հարցրել են իրենց մեր Պետերբուրգի ընկերները, տեսնելով ընդհանուր գործադուլի անդիմադրելի, արագ աճումը, վոր ընդգրկում էր պրոլետարիատի անսովոր—լայն շերտեր, տեսնելով Գապոնի անդիմադրելի ազդեցութեանը այդ «գորչ» մասսաների վրա, վորոնք կարող էյին տարվել-գրավվել և պրավոկատորով: Ու սոցիալ-դեմոկրատները վոչ միայն չեն պաշտպանել խողաղ միջնորդութեան հնարավորութեան ցնորքները, նրանք վիճել են Գապոնի հետ, նրանք կտրակախապես պաշտպանել են իրենց բոլոր հայացքները և իրենց տակախկան: Յեվ պատմութեանը, վոր ստեղծեցին բանվորական մասսաները առանց սոցիալ-դեմոկրատների, հաստատեց այդ հայացքների և այդ տակախկալի ուղիղ յինելը: Պրոլետարիատի դասակարգային կացութեան յոգիկան ավելի ուժեղ յեղավ Գապոնի սխալներից, միամտութեաններից և ցնորքներից: Մեծ իշխան Վլադիմիրը, գործելով թաղավորի անունից և թաղավորի ամբողջ իշխանութեան հետ, իր գահճային խիղախութեամբ ուղեց բանվորական մասսաներին ցույց տալ այն, հենց այն, ինչ վոր սոցիալ-դեմոկրատները ցույց են տվել և պետք է ցույց տան նրանց՝ ազգված և բանավոր խոսքով:

Բանվորական և գյուղացիական մասսաները, պահպանելով  
 իրենց՝ գեպի թագավորն ունեցած հավատի մնացորդը—չեն կա-  
 չող ապստամբութեան գիծել, —ասում է յինք մենք: Հունվարի 9-էջ  
 հետո մենք իրավունք ունենք ասելու. —այժմ նրանք կարող են  
 գիծել և գիծեցին ապստամբութեան: «Հայր թագավորը» արյու-  
 նոտ դատաստան տեսնելով անգին բանվորների գլխին—ինքը գրգեց  
 նրանց գեպի՝ բառիկադները և տվեց նրանց՝ բառիկադների վրա  
 կովերու առաջին դասը: «Հայր թագավորի» գասերը իզուր չեն  
 անցնի:

Սոցիալ-դեմոկրատիային մնում է հող տանել՝ Պետերբուրգի  
 արյունոտ սրբերի լուրերը հնարավորապես ավելի լայն տարածելու  
 մասին, իր ուժերի ավելի խտացման և կազմակերպվածութեան  
 վրա և ավելի լայն պրոպագանդ անել վաղուց արդեն իր կողմէց  
 առաջադրված լոզունգը՝ —համաժողովրդական գիցված ապստամ-  
 բություն:

## Ն. ԼԵՆԻՆ

ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ .  
 ՊԵՏԵՐԲՈՒՐԳԸ ՀՈՒՆՎԱՐԻ 9-ԻՅ ՀԵՏՈ .  
 ՏՐԵՊՈՎԸ ՏԻՐՈՒՄ-ՏՆՈՐԻՆՈՒՄ Ե .  
 ՎԱՐՇԱՎԱ .  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԳՈՒՂ ԼՈՋՈՒՄ .  
 ԼԻԲԵՐԱԼՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ .

## Ն. ԼԵՆԻՆ ՅԵՎ Մ. ՈԼՄԻՆՍԿԻ

ՎՈՐՈՏԻ ԱՌԱՋԻՆ ԳՂԴՅՈՒՆԸ .  
 ՌԻԳԱ .

## ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Յարական՝ անգն ժողովրդի վրա առբաժ հաղթութեան պը-  
տուղը ինչպես և սպասելի յեր յեղավ ա յն վոր ինքը՝ բանվորական  
զորը մասսան սարսափելի կատաղեց թագավորի դեմ և կորցրեց իր՝  
զեպի նա՝ թագավորը ունեցած հալատը: Ահա ինչպես և արտա-  
հայտված այդ տրամագրութեանը Գ. Գաղտնի նամակում:

### ԳՍՊՈՆԻ ԿՈՉՐ ԿՈՏՈՐԱՅԻՅ ՀԵՏՈ

Հարգատ, արյունով շողկապված ընկեր բանվորներ:

Մենք հունվարի Ծ-ին խաղաղորեն գնացինք թագավորի մտա-  
արդարութեան: Մենք այդ մասին նախազգուշացրինք նրա բռնարար  
մինխտորներին, խնդրեցինք զորքը հեռացնել, չխանդարել մեր թա-  
գավորի մտա գնալու: Իրան՝ թագավորին յես նամակ ուղարկեցի  
Յարսկոս Սելո, խնդրեցի նրան զուրս դալ իր ժողովրդի առաջ՝  
ազնիվ սրած և արի հոգով: Մեր սեփական կյանքի դնով յերաչ-  
խավորեցինք նրա անձի անձեռնմխելիութեանը: Յեզ ի՞նչ յեղավ—  
հոսեց արգեն անձեզ արյունը: Գազան—թագավորը, նրա գանձա-  
չորթ—չինոֆնիկները և ժողովրդին կողոպտողները գիտակցարար  
կամեցան լինել և յեզան մեր անգն յեղբայրների, կանանց և յե-  
րեխաների սպանողները: Յարական գինվորների գնդակները, վոր  
միանգամից սպանեցին թագավորի պատկերները տանով 300 բան-  
վոր, գնդակահարեցին և այդ պատկերները ու գրանով սպանեցին  
մեր՝ զեպի թագավորն ունեցած հալատը: Այդպես և վրեժխնդիր  
լինենք, յեղբայրներ, ժողովրդից անխիժամ թագավորին և ցա-  
րական ամբողջ իժի սերնդին, նրա մինխտորներին և գժբախտ ուսու-  
չիչրի բոլոր կողոպտիչներին: Մա՛հ գրանց՝ բոլորին: Ո՛վ ինչո՛վ  
և ինչպես կարող ե, ով անկեղծորեն կամենում և ոգնել ոուս աչ-  
խատավոր ժողովրդին՝ ապրելու և ազատ չնչելու, — յես ոգնու-  
թեան կոչ եմ անում բոլորին—բոլոր մտավորականներին, բոլոր  
ուսանողներին և հեղափոխական բոլոր կազմակերպութեաններին:  
Ով ժողովրդի հեռ չե—նա դեմ և նրան: Յեղբայրներ, ամբողջ Ռու-  
սաստանը բանվոր ընկերներ, դուք աչխատասանքի չեք կանգնի,

մինչև վոր ձեռք չը բերեք ազատութիւն: Չեզ, ձեր կանանց և յերեսաներին կերակրելու համար ուտելիք թույլ եմ տալիս վերջնել ամեն տեղից, վո՛րտեղից կարող եք. ուսմբեր, ուժանակ-ամեն ինչ թույլատրում եմ: Մի՛ կողոպտեք միայն մասնավոր-աները և խանութները, ուր չկա վո՛չ ուտելիք, վո՛չ զենք: Մի՛ կողոպտեք միայն աղքատներին, խուսափեցեք անմեղներին բռնու-թյան յենթարկելուց. ավելի լավ է թողնել 9 կասկածելի սրիկա-քան վոչնչացնել մի անմեղ: Բառիկաղներ կանդնեցեք, ավերեցեք ցարական ապարանքներն ու սրախաները, վոչնչացրեք ժողովրդին-ատելի վոստիկանութիւնը: Իրենց անմեղ յեղբայրներին, նրանց կանանց և յերեսաներին սպանող զինվորներին և սպաններին, ժո-ղովրդի բոլոր նեղիչներին—իմ քահանայական անձը: Իսկ այն-զինվորներին, վորոնք կողնեն ժողովրդին՝ ազատութիւն ձեռք բերելու—մեր որհնութիւնը: Նրանց զինվորական յերգումը դա-վաճան թաղավորին, վոր գիտակցաբար թափեց անմեղ ժողովրդի-արյունը, չկամենալով անգամ լսել իր ժողովրդին, —նրանց զին-վորական յերգումը լուծում եմ:

Թանգագին հերոս ընկերներ, մի ընկճվեք հողով, հավատա-ցեք, վոր շուտով ձեռք կը բերենք ազատութիւն և արդարու-թիւն, —թափված անմեղ արյունը մեր յերաշխիքն է: Արտագրե-ցեք, արտատպեցեք բոլորը, սվ կարող ե, և ամբողջ մուսաստա-նում տարածեք այս թուղթը, վոր կոչ է անում բոլոր ձեռվածնե-րին, նվաստացածներին և զրկվածներին՝ վոտքի կանդնել իրենց-իրավունքների պաշտպանութիւն համար: Յեթե ինձ բռնեն, գըն-դակահարեն—գուր շարունակեցեք այս սլաքարը: Հիշեցեք միշտ-իմ հազար անգամ ձեզ տված յերգումը: Պայքարեցեք, մինչև վոր չը գումարվի հիմնադիր ժողով՝ ընդհանուր, ուղղակի, հա-վասար և դազանի ձայնավութիւն հիմունքով, վոր կը լինի ձե-րիս ընտրյալները, պաշտպանները ձեր շահերի, այն շահերի, վոր առաջագրեցիք ձեր պետիցիայում դավաճան-թաղավորին:

Կեցցե՛՛ ուսս ժողովրդի գալիք ազատութիւնը:

9 հունվարի, գիշերվա 12 ժամին.

Այս գրութիւնը ուղարկված է ուսսական բանվորական ըն-կերութիւն բոլոր տասնութեկ բաժանմունքներին:

Ի լրումն այս կոչի բերենք տեղական սոցիալ-դեմոկրատներին կարծիքները, վոր հաղորդել են մեզ հունվարի 10-ից գրած նա-մակներում: Մեկը, ի միջի այլոց, գրում է.

«Բանվորների տրամադրութիւնը սկզբում տարակուսական եր. չե՞ վոր մենք խաղաղ գնում էյինք և հանկարծ կրակեցին մեզ վրա. չե՞ վոր իշխանութիւնը գիտեր, վոր մենք պատրաստ-վում ենք գնալու, ինչպես թույլ տվեց այդ ամենը և հետո կրա-կեց»: Ծանր եր նայել այդ միամիտ, դրեթե մանկական դեմքե-րին: Դեպքերի նախորեյին յես յեղա նարվսկի գաստավի այն կողմը՝ բանվորների շրջանում, —նրանք ուղղակի մտքերովե անգամ չէյին անցնում, թե իրենց կը կրակեն, —այնպես հայա-տում էյին, վոր իրենց խաղաղ նպատակները ակներե են: Յե-րեկվա դեպքը սարսափելի ցնցեց բոլորին. թաղավորը սաստիկ վարկարեկվեց լայն մասսաների աչքում. այս ու այն կողմ բարձ-րաձայն հայհոյում են նրան. —«Մեզ պետք չի դա—եսպես—են-պետք»:

Ինձ տանող կառապանը հուզված պատմում էր, վոր կրակեց են սրբապատկերների վրա, խաչակիր թափորի վրա: «Թագավորի պատկերի վրա՞ յել», —հարցրի յես: «—Այո, նրա քթին էլ դիպավ: Ի՞նչ կա վոր, պետք է նրան պաշտենք, ի՞նչ է»: Մի ուրիշն ասում էր, վոր կառավարութիւնը հավասար դեմ է գնում». յերրորդը. «նրանք կըստովեն դրա համար. ես բանն եզպես չի անցնի. —բարձր իշխանութիւնից և մեծամեծներից շատերն եզ բանի կողմն են», և նա այնպիսի վոգեւորութիւնով սկսեց քարոզել, թե բոլոր մարդիկ յեղբայրներ են և թե ինչպես են սպրում բան-վորները ուրիշ յեղբայրներում, —վոր մյուս կառապանները ստիպ-ված ձայն էյին տալիս նրան. «ե՛յ, դու, «յեղբայր», անցի՛ր», և այլն: Կառապաններին խփում են, —ասում են՝ սպանել են մի քանիսին, և նրանք վախենում են կառք բանեցնել. չմթնած գնում են տները, բայց այնուամենայնիվ գործադուլ չեն անում: Կոնկաներն այսօր դրեթե չը բանեցին: Ժամը 5-6-ին ելեքտրական լույսը հանդցրին նեվսկում և Պետկում, փակված են և մինչև անգամ տախտակներով ամբացված են խանութների մեծ մասը: Վայր են դցում սպաների զլխարկները, իլում են նրանց թրերը: Մի պտտավ պատմում է, թե նեվսկու վրա քաջքում էյին ինչ-վոր մի սպայի վերարկու և բղավում. «Ցույց տուր մեզ, վորտեղ է Ալեքսեյ Ալեքսանդրովիչը. ո՞ւր տարավ նա հեծեկազորը: Յեթե միանգամից չե, գոնե մեկ-մեկ դրանց մեր ձեռքը կը քցենք»:

Մեր Կուսակցութիւն Պետերբուրգի Կոմիտեյի անգամը գրում է մեզ հունվարի 11-ից:

«Յերեկվա դեպքերի մասին ձեզ դրել են արդեն: Հուզումը չը դադարեց և յերեկոյան դեմ, բայց այլ բնույթ ընդունեց, վոր արտահայտից մի քանի տեղ խանութների թալանով և տների սպակիներին ջարդով: Ի հարկե, ավելի գիտակից տարբերը չեյին մասնակցում այդ բանին:

Դեռ ժամը 6-ին ամեն ինչ խաղաղ էր: Ամբողջ Պետերբուրգը նման էր գինձորական հսկայական բանակատեղիի (լազեր)՝ ամենուրեք զորք և զորք—կազակներ, հետեւի: Ելեկարականութունը չէր վառվում, կոնկաները չեյին բռնում: Փողոցների խառնածեման տեղերում խարույկներ են վառվում, վորոնց մոտ տեղավորված և «քրիստոսասեր զորքը»: Ամեն քայլափոխին կողիտ կանչ և յավում: «Մեր ես գնում: Այստեղից չեն թողնում»:

Նեվսկու վրա հուզումն ավելի մեծ չափեր ընդունեց.—բազմաթիվ սպակիներ ջարդվեցին Գաստիննի Դվորում: Կրկին հրաձանաձգութուն, կրկին գիակներ և արյուն:

Այսօր Նեվսկին դարձյալ լցված և ամբոխով, բայց այս ամբոխին արդեն չի միացնում մի վտոռչ նպատակ. յեկել են նաչերու, թե ինչ կպատահի: Դրանց մեջ կան շատ բանվորներ, վորովհետեւ քաղաքում չի աշխատում և վոչ մի դործարան, բացի գաղի 2-դ դործարանից: Զորքը յերեկվանից պակաս չի: Բանվորական քաղերում բացարձակ խոսում են, վոր այդ դատ ու դատատանի (расправа) ժառանակ հայր-քաղավարը ցույց տվեց իրա իսկական դեմքը. և վոր սպասուքյունը պետք է նվաճել, և վոչ թե խնդրել:

Հուզումը կառավարութան դեմ ահապին և հասարակութան բոլոր շրջաններում ու խավերում:

Իմ անձնական սպավորութունն այն և (ի հարկե, դա կարող և լինել չափազանց սուբիեկտիվ), վոր 2-3 օր հետո հուզումը կիջնի, բայց հոգը սոցիալ-դեմոկրատիայի համար հարթված և արդեն ամենայայն մասոսների մեջ»:

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳԸ ՀՈՒՆՎԱՐԻ 9-ԻՅ ՀԵՏՈ**

Յերկուշաբթի, հունվարի 10-ին, Պետերբուրգը հենց նոր թչնամու կողմից նվաճված քաղաքի տեսք ուներ: Փողոցներով շարունակ անցնում են կազակների պահակախմբեր: Այս ու այն կողմ նկատվում են բանվորների գրգռված խմբեր: Յերեկոյան շատ փողոցներ ընկզմված էյին խավարի մեջ: Ելեկարականութուն և դազ չկա: Արիստոկրատական տները պահպանում են

դոնապանների խմբերը: Լրագրական լուսավորված քիտսկները տարորինակ կերպով լուսավորում են ժողովրդի խմբերը:

Նեվսկու վրա ընդհարումներ յեղան ժողովրդի և զորքի միջև: Կրկին կրակեցին ամբոխի վրա: Անիշխովի պալատի մոտ յերեք համադարկ տվին: Վոստրիկանությունը փակեց գինավաճառանոցները և գենքը տեղափոխեց նկուղները, ձեռք առնելով, հաժանորեն, բոլոր միջոցները, վորպեսզի չթողնի բանվորներին գինվելու: Կառավարական հիմնարկների պաշտոնյաները իրենց ավելի ահարեկված էյին դդում, վախենալով հրդեհներից ու պայթեցումներից, և խուճապած փախան Պետերբուրգից:

Կիրակի օրը վառիլևսկի ոստրովում զորքի կողմից գրաված բառիկադները յերկուշաբթի օրը վերականգնվեցին նորից և կրկին գրավվեցին գինվորների կողմից:

Լրագիր չկա: Կրթական հիմնարկները փակ են: Բանվորները մասնավոր ժողովներում, բնության են առնում դեպքերը և դիմադրության միջոցները: Համակրողների խմբերը, առանձնապես ուսանողները պաշարում են հիվանդանոցները:

Հաղորդում են, վոր Կոլպինի բանվորները, թվով 20-30 հազար, յերեքշաբթի առավոտյան, պետիցիայով, շարժվել են դեպի Յարսկոե Սելո: Յարսկոե Սելոի կայազորը նրանց դեմ ուղարկել և մի հետեակ դուռը և դաշտային մարտից (батарей) : Կուլպինից հինգ վերստի վրա տեղի ունեցավ ընդհարում,—զորքը կրակեց և վերջնականապես յետ մղեց ու ցրեց բանվորներին ցերեկվա ժամը 4-ին: Կան շատ սպանվածներ և վիրավորներ: Բանվորները յերկու անգամ հարձակվեցին Յարսկոսելոյի յերկաթուղու վրա, բայց յետ մղվեցին: Յոթ վերստ յերկարությամբ ուղիները քանդել էյին, և գնացքներն առավոտյան չը բանեցին:

Կառավարութունը արշունոտ վրադիմիրի կիրակի օրվա գոհերը թաղում և գլխերը, թաղուն: Սպանվածների ազգականներին և ծանոթներին դիմամար խաբում են, վորպեսզի անհնարին դարձնեն ցույցերը թաղման ժամանակ: Ամբողջ վագոններով գիակներ են փոխադրում Պրեորբաժենսկի գերեզմանատունը: Մի քանի վայրերում, այնուամենայնիվ, ամբոխը չնայած վոստիկանության բոլոր նախազուլութուններին, վորձ և անում ցույց սարժել ի պատիվ ազատության համար ընկած մարտիկների:

Արատահամայն թերթերը, ականատեսների բերանից, հաղորդում են, վոր յերեքշաբթի, հունվարի 11-ին, Սեծ պրոսպեկտի



վրա կանգնեցրին բանվորներով լի կոնկան: Բանվորներէն մեկը բղավեց կազակներին, «Դահիճներ»: Կազակները կանգնեցրին կոնկան, ստիպեցին բոլորին դուրս գալ և թրերի ասփակ կողմով ձեծեցին նրանց: Ծեծի յենթարկվածներէն մեկը վերավազվեց այդ միջոցին: Հարեան տների բնակիչները բանում եղին լուսամուտները և բղավում կազակներին վրա. «մարդասպաններ. ավազակներ»: Հինգշաբթի, հեռագիրներէ մեջ կար մի լուր, թե այս միջադեպի ժամանակ կազակներէ կողմէն վազոնից դուրս է քըշվում և մի կին: Վախից նա յերեխան վայր է քցում, վորը և արորվում սպանվում է կազակներէ ձիերի վտանների տակ (The Times): Մեր գործի նման հաղթանակները բանվորներէ վրա—խիստապես Պիտոսյան հաղթանակներ են:

**ՏՐԵՊՈՎԸ ՏԻՐՈՒՄ-ՏԵՈՐԻՆՈՒՄ Ե**

Բոլոր դժգոհներին դաժանորեն ջարդելու ճնշելը, հունվարի 9-ից հետո, դարձել է կառավարութեան լողունգը, Յերեքշաբթի Պետերբուրգի գեներալ նահանգապետ նշանակվեց Տրեպովը՝ դիվանատուրական լիազորութեանն ընդ, ցարիցմի սպասավորներէն մեկը, վորը ամենից ավելի ատելի յե ամբողջ Ռուսաստանին և վորը հայտնի դարձավ Մոսկվայում իր դաժանութեամբ, իր կոպտութեամբ և զուրատովյան՝ բանվորներէ այլատեսելու վորձերին մասնակցելով:

Սկսեցին մասսայական ձերբակալութեաններ տենդակին թափով: Ձերբակալվել են ամենից առաջ լիբերալ պատգամավորութեան բոլոր անդամները, վորոնք շարաթ որը, ուչ յերեկոյան զընացին Վիտայի և Սվյատոպոլի—Միբսկու մոտ՝ կառավարութեանը խնդրելու, վորպեսզի բանվորներէ պետիցիան ընդունվի և վորպեսզի գործը կրակով չպագասխանի խողաղ ցույցին: Ինքնըստինքյան պարզ է, վոր այդ խնդրանքները վոչ մի հետեանք չունեցան. Վիտտեն պատգամավորութեանն ուղարկեց Սվյատոպոլի—Միբսկու մոտ, վերջինս հրաժարվեց նրան ընդունել: Երբին գործերի մինիստրի ողնական Ռեձեսկին պատգամավորութեանն ընդունեց շատ սառը, հայտնեց, վոր համոզել պետք է վոչ թե կառավարութեան, այլ բանվորներին, վոր կառավարութեանը շատ լավ տեղակ է այն ամենին, ինչ կատարվում է, և վոր նա արդեն բնորոշել է վորոշումներ, վորոնք վոչ մի միջնորդութեամբ չեն կարող փոխվել: Հետաքրքրական է, վոր լիբերալների ժողովը

այդ պատգամավորութեանը ընտրելով, հարց է հարուցել և այն մասին, վորպեսզի համոզեն բանվորներին՝ թափարով չը գնալ զեպի Չմեռային Պալատ, բայց ժողովին ներկա գտնվող Գալոսի բարեկամը հայտնում է, վոր դա անողուտ է, վոր բանվորների վորձիոն անդարձ է: (Այս տեղեկութեանները հաղորդում է Պ. Իլլյոնը, անգլիական «The Daily Telegraph» թերթի թրգթակիցը. գրանք հետո հաստատվեցին ուրիշ թղթակիցների կողմից)

Պատգամավորութեան ձերբակալված անդամներին՝ Հեստենին, Արսենին, Կարենին, Պեչետնովին, Մյակոտինին, Սեմեսկուն, Կեդրինին, Շնիտնիկովին, Իվանիչին—Պիտարին և Գորկուն (բռնվել է Ռիգայում և տարվել Պետերբուրգ) ներկայացրել են անհեթեթ մեղադրանք, թե նրանք նպատակ են ունեցել, հեղափոխութեան մյուս որը, «Ռուսաստանի ժամանակավոր կառավարութեան» կազմելու: Հասկանալի յե, վոր այդ մեղադրանքն ընկնում է ինքնին: Բռնվածներից շատերը (Արսենը, Կեդրինը, Շնիտնիկովը) արդեն արձակված են: Արատաստմանում կրթված բուրժուական հասարակութեան մեջ յեռանդուն կամպանիա յե տարվում հողուտ Գորկու, և նրան աղատելու համար թագավորին արած միջնորդութեանը ստորագրել են գերմանական շատ քիանավոր դիտնականներ ու գրողներ: Այժմ նրանց միացել են Ավստրիայի, Թըրանսիայի և Իտալիայի գիտնականներն ու գրականագետները:

Հինգշաբթի յերեկոյան ձերբակալվել են «Hama gazeta» թերթի չորս աշխատակիցները—Պրակտոպիչը՝ կնոջ հետ, Սիժինյակովը և Յակովչը (Բոգուշարսկին): «Hama dnu» թերթի աշխատակիցներից բռնվել է Հանեյդերը՝ շարաթ առավորյան: Վաստիկանութեանը յեռանգով վորոնում է արտաստմանից գործադուլավորների կամ սպանվածների այրիների ու վորբերի ոչնութեան համար ուղարկված դրամ: Ձերբակալում են մաստաներով Բոգուշարսկու ձերբակալութեան թղթի համարը յեղել և 53-րդը, իսկ Սիժինյակովինը՝ 109-րդ: Ծարաթ որը հիշյալ յերկու թերթի խմբագրատներում յեղել են խուզարկութեաններ, և վերցրել են, առանց բացատրութեան, բոլոր ձեռագիրները, գրանց թվում մանրամասն հաշվետվութեաններ ամբողջ շարաթվա ընթացքում կատարված դեպքերի մասին, հաշվետվութեաններ, վորոնք ստորագրված են վստահելի վկաների—ականատեսների կողմից, վորոնք գրել են ամենը, ինչ իրենք տեսել են, գայիք սերունդներին իր խրատ: Ամբողջ այս նյութը այլևս լույս աշխարհ չի տեսնի:

Չորեքշաբթի որը ձերբակալվածների թիվն այնքան շատ չինու՞մ, վոր հարկ ե զգացվում յերկու յերեք հոգու նստեցնել մի խցում: Եոր դիկտատորը բանվորների հետ նազ ու թուզ չի անում: Հինգշաբթի սրվանից նրանց բռնու՞մ են խմբերով և արտաբռում իրենց ծննդավայրը: Այնտեղ նրանք, պարզ ե, պեաք ե յուրեր տարածեն հունվարի 9-ի դեպքերի մասին և կոխի քարոզեն միապետութեան դեմ:

Տրեպոզը ձեռք ե առնում իր հին մոսկովյան քաղաքականութեանը—գրավել բանվոր մասնային անասական փողոցմություն տարով:

Չեռնարկատերերը հավաքվում են Ֆինանսների մինիստրի մոտ և միասին մտածում բանվորներին զանազան զիջումներ անելու: Խոսում են Գ ժամյա բանվորական որլա մասին: Ֆինանսների մինիստրը յերեքշաբթի ընդունում ե բանվորների պատգամափությունը, խոստանում ե անասական օեֆորմներ, նախապտույտացնում ե քաղաքական աշխատակցից:

Վոստրիկանությունը կաշից դուրս ե դալիս, վորդեպի անվատահություն և թշնամանք սերմանի ընդհանրապես արդարեւնակութեան և բանվորների միջև: Չորեքշաբթի որը արտասահմանյան թերթերին հաղորդում են, ամենավորոչակի ձեռով, թե վոստրիկանությունն աշխատում ե Պետրբուրգի բնակիչներին վախեցնել սենսացիոն պատմություններով, վոր գործազուլավորները կողոպուտներ են անում և պատրաստվում են իրր թե արյունոտ գործողություններ: Մինչև անգամ ներքին գործերի մինիստրի ոգնական Միձեսկին յերեքշաբթի որը հավատացրել ե մի այցելուի, վոր գործազուլավորները պատրաստվում են կողոպուտ, հրդեհ, ափեր և սպանություններ կատարելու: Գործազուլավորները, համենայն դեպս, նրանց զեկավարները հայանել են, ո՛ւր կարողացել են, վոր դա գրպարտություն ե: Վոստրիկանությունն ինքը ուղարկել ե պրոփակատորներ և դոնապաններ՝ ապակիներ կտտորելու, լրագրական կիսակներ վառելու և խանութներ կողոպտելու, վորպեսզի ասարեկի ազգարնակութեան: Իսկ բանվորներն, իսկապես, իրենց այնքան խաղաղ են պահել, վոր հարուցել են արտասահմանյան թերթերի թղթակիցների դարձանքը, վորոնք տեսել են հունվարի 9-ի սարսափները:

Վոստրիկանական գործակալներն այժմ գրազված են նոր «բանվորական կազմակերպութեամբ»: Նրանք ջոկում են հարձար բան-

վորներ, նրանց փող են բաժանում և քիս են տալիս ուսանողների ու գրականագետների վրա, գովում են «հայր-թագավորի ճշմարիտ ժողովրդական քաղաքականությունը»: Յերկու-յերեք հարյուր հազար անկիրթ, սովից նեղված բանվորների շրջանում զրժվար չե գտնել մի քանի հազար հոգի, վոր բնվին այդ կառթով: Այս վերջիններին ասա պիտի «կազմակերպեն», նրանց ստիպելու յեն անիձել «աղատամիտ խարերաներին» և հայտարարել բարձրաձայն, վոր անցած կիրակի իրենց խարել են: Այնուհետե բանվոր դատակարգի այս թափթիուկները կընտրեն պատգամավորություն, վորը կերթա «խոնարհարար խնդրելու թագավորին, վոր թույլ տա իր փոսներն ընկնել և զղջալ անցած կիրակի որը կատարած իրենց հանցանքների համար»: Իմ տեղեկությունների համաձայն, —չարունակում ե թղթակիցը, —այս բոլորն այժմ սարքում ե վոստրիկանությունը: Յերբ այս կազմակերպությունը գլուխ գափերջանա, նորին մեծությունը ամենավորմածարար կը բարեհաճի ընդունել պատգամավորությունը մանեծում, վորը հասկապես պատրաստվելու յե այդ նպատակի համար: Հուզիչ ճանով նա կը հայանի իր՝ դեպի բանվորներն ունեցած հայրախան խնամքի մասին և նրանց զրությունը բարեխափելու միջոցների մասին»:

P. S. Այս տողերը շարված եյին, յերբ մենք հեռագիրներեց իմացանք, վոր անգլիական թղթակցի գուշակությունները արգարացել են: Թագավորն իր մոտ՝ Յարսկոե Սելլում ընդունել ե պատգամավորություն՝ 34 բանվորից բաղկացած, վորոնց ջոկել ե վոստրիկանությունը, և ասել ե ամբողջովին կեղծ պաշտոնական ճառ՝ կատավարութեան հայրական խնամքի և բանվորների հանցանքները ներելու մասին: Այս գաղիբ կոմեդիան չի խարի, ի հարկե, ուսույրոթեատրիատին, վորը յերբեք չի մոտանա արյունոտ կիրակին: Պրոլետարիատը դեռ կը խոսի թագավորի հետ—ուրիշ յեզվով:

**ՎՈՐՈՏԻ ԱՌԱՋԻՆ ԴՂԴՅՅՈՒՆԸ**

Մոսկվա.—Պետերբուրգի դեպքերի վարտը արձագանք տվեց ամբողջ Ռուսաստանում: Առաջինը յերան Մոսկվայի բանվորները: Կիրակի հունվարի 9-ին, Պետերբուրգի փողոցները ներկվեցին արյունով, իսկ յերկուշաբթի արդեն գործազուլներ են սկսվում Մոսկվայում: Իշխանությունն աշխատում ե հայտարարություններ փակցնել, վորոնք նախազուլացնում են հատարակութեան՝ հետո մնալ ժողովրդի համախմբումներից: Այլ խոսքով ասած՝ զգուշա-

ցեք, մենք չենք ամաչի արյունով լցնել և Մոսկվայի փողոցները : Բայց բանվորները չեն յենթարկվում սպառնալիքների աղբեցութեան : Գործադուլին միանում են ժախտի, Շուստովի, Գիվարտովրսկու, Շլիխտերմանի, Բախրաւչինի, Միխայլովի, Յինդելի, Շրիդերի, Բրոմլեյի, Վեյսելտի Փարբիկները, կաշեգործարանների և սպարանական բանվորները : Յերեքշաբթի լուր և տարածվում, թե Գապոնը յեկել և Մոսկվա, վորպեսզի շարժումը ղեկավարի : Ազիտացիան աճում և : Բարի գործարանում ուղում էյին աշխատել, բայց կենսորոնական եյեքտրական գործարանից յեկան Բարի գործարանը և ալստեզի բանվորներին համոզեցին՝ միանալ գործադուլին : Նույնը յեղավ և Գոպնիերի գործարանում : Չորեքշաբթի գործադուլ եր արել արդեն մոտ քսան արդյունաբերական ձեռնարկութուն : Հինգշաբթի գործադուլին միացան Մոսկվա-Բրեստի, Կազանի և Նիժեգորոզսկի յերկաթուղիների արհեստանոցների բանվորները : Քաղաքի չրջակայքում կազակները դրավել են մի քանի գործարան վորպեսզի թույլ չտան յսխտատորներ մտնելու :

Շփոթված աներբ չգիտեն ի՞նչ անել : Նրանք հավաքվել են բորսայում, վորպեսզի քննեն, թե ինչ զիջումներ կարելի յե անել : Բայց ցափը նրանումն և, վոր բանվորներին կողմից առաջին չրջանում փոչ մի պահանջ չի հայտարարվել : Գործադուլները սկսվել են Պետերբուրգի բանվորներին համակրելուց միայն, Պետերբուրգի շարժումը պաշտպանելու համար : Չորեքշաբթի որը միայն առաջադրվել են պահանջներ : Վեյսելտից պահանջել են ութժամյա բանվորական օր, տուգանքներին վերացում, ավելի լավ վերաբերմունք և չորս վարպետի հեռացում : Բրոմլեյի բանվորները դրան ավելացրել են՝ գրադարան-ընթերցարան հիմնելու և ամբուլատորիան հիվանդանոցի վերածելու պահանջները : Նահանգապետն սկզբում գործադրել և մի տիմար և ստոր միջոց. նա հայտարարել և, իբր թե բոլոր գործադուլավոր բանվորները կաշառված են յապոնացիների և անդլիացիների կողմից : Այս սուտը, ի հարկե, ստիպված էյին թողնել մի կողմ, մանավանդ յերբ անգլիական դեսպանը բողոքեց : Այդ ժամանակ նահանգապետը հայտարարեց, թե ինքը կը քննի և հնարավորապես կը բավարարի բանվորների բոլոր պահանջները : Քաղաքային դումայում ստացվել և հայտարարութուն 60 իրավասուի կողմից, վորոնք պահանջում են դումայի արտահարդ նիստ՝ գործադուլից առաջացած դրությունը քննելու համար :

[Մոսկվայի գործադուլավորների թիվն առաջ հաշվում էյին 10,000 մարդ, յերկու օր հետո արդեն 30,000 մարդ : Հունվարի 18-ին տեղեկություններ յերեւացին գործադուլի ավարաման մասին, ըստ վորում գործադուլավորների թիվը յեղել և 43,000 բանվոր 125 արդյունաբերական ձեռնարկությունից, իսկ բանվորները ընդհանուր թիվը 170,000-և, Մոսկվայի 830 Փարբիկներում : Պարզ և ըստ ինքյան, վոր այս պաշտոնական տեղեկությունները դիտամբը նվազեցված են (Մոսկվայի առևտրա-արդյունաբերական բոլոր ձեռնարկություններում կան ավելի բանվորներ, քան 170,000), և մենք այդ մեջ ենք բերում միայն նրա համար, վոր մոտավոր գաղափար տանք շարժման ծավալի մասին : Հաղորդում էյին, վոր Պյատնեցկի փողոցում գործը կրակել և բանվորների վրա, բայց այդ լուրն առայժմ ճշտված չե :

Ահա ինչ են գրում Մոսկվայից, հունվարի 14-ից մի մասնավոր նամակում\* ]:

«Մոսկվայում բոլորը հուզված, ցնցված են Պետերբուրգի դեպքերից, և այժմ վրձանք վախով, վրձանք կայտառ սպասում են դեպքերի՝ նաև Մոսկվայում : Հեղափոխական շարժման սկիզբը այստեղ դրված և արդեն : Գործադուլ են արել Քաղմաթիվ Փարբիկներ և գործարաններ : Չորքն ու վոստիկանությունը բոլոր ժամանակ պատրաստ կանգնած են : Չամոսկվարիչեն չրջապատված և զորքերով, և այնտեղ, ժողովրդին ահարեկելու համար, հունվարի 10-ին թնթանոթներ տարան : Հայտնում են, վոր նորից գործ են կանչել Նիժնի-Նովգորոզից, իսկ այնտեղ, դրանից հետո, իբր թե, գործադուլ են արել :

Այսօր Մոսկվայում գործադուլ արին բոլոր յերդվայա-հավատարմատարները և նրանց ոգնականները, վորպես բողոք Պետերպուրգի սպանդանոցի դեմ և ի նշան՝ դեպի Պետերպուրգի բանվորները, ազատութեան մարտիկները ունեցած համակրանքի : Սյունեքին ու պատերին ամեն օր փակցվում են քաղաքապետի հայտարարությունները, վորոնք բանվորներին հրավիրում են «կարգի», սպառնալով նրանց պատիժներ չհնազանդվելու և ընդհանուր խաղաղությունն ու հանգստությունը խախտելու դեպքում :

\* ) Ուղիղ փակադձերում յեղած դիտողությունը պատկանում է ընկ. Լենինի գրչին :

«Տառայանի որը»\*) Մոսկվայում վոչնչով աչքի չընկալի և շատ շքեղ բանով եր տարբերվում նախկին «տառայանյան սրբերից»... «Երթիտաթում» և «Յար»-ում... ուսում, խմում և ճաներ էլին տուում... Բանկետը «Գրական-Գեղարվեստական ակումբում» (կրուժոկում) չկայացավ, ինչպես հայտնում են «վոչ թե վոստիկանուժյան մեղքով», այլ «ագատամխոների» կամքով, վորոնք վախենում էին, թե իրենց մոտ սոցիալ-դեմոկրատներ կը գան և գուրս կը գա «սկանդալ»... Տեխնիքական դպրոցում յեղավ ուսանողական մի շատ խղճուկ բանկետ: Այնտեղ բանվորներ չկային, թեև յենթագրքվում եր 400 մարդ: Նրանց չեր թողել վոստիկանուժյունը: Գրահիմ թողին միայն 150 մարդ, գլխավորապես ուսանողներին... Փողոցներում ցույց չեղավ»...

Մոսկվայի հետ միևնույն որը գործադուլ արին բանվորները կավնոյում: Այնտեղ ախշատանքը միանգամից դադարեց բոլոր գործարաններում, բոլոր մասնավոր և յերկաթուղային արհեստանոցներում: Չորեքշաբթի նահանգապետը հայտարարություն հրատարակեց, վորի մեջ փորձում եր ամբողջ գործը բացատրել շարձիսների ազդեցությամբ: Նա գրեց, վոր գործադուլը արգյունք է բանվորների մի փոքրիկ խմբակի սպառնալիքների: Խնչացի նահանգապետը խրատում եր, իբր թե գործադուլը յերբեք ոգուտ չի բերում բանվորներին: Բայց միևնույն ժամանակ նա խոստանում եր իր կողմից անել ամեն հնարավորը, վորպեսզի բավարարի բանվորների պահանջները: Փողոցային հուզումների զեպքում նա սպառնում եր գեներ գործադրել: Բանվորները չեն յենթարկվում վոչ սպառնալիքների, վոչ խրատների: Այն ժամանակ նահանգապետը հրավիրեց գործարանատերերին, վորոնք, ինչպես գրում են արտասահմանյան թերթերում, չնայած ձգնաժամին, համաձայնել են աշխատավարձը բարձրացնել: Խոսում են նույնպես, թե վորովչած է տերերի և բանվորների ներկայացուցիչներից մի հանձնաժողով սահմանել՝ նահանգապետի նախագահությամբ: Հանձնաժողովը միջոցներ է մշակելու բանվորների կացությունը բարելավելու համար: Գործադուլը շարունակվում է:

(Յերեքշաբթի, հունվարի 11-ին գործադուլ արին վիլնայի բանվորները: Արտասահմանյան թերթերը հաղորդեցին, վոր գոր-

\*) Մոսկվայի համալսարանի հիմնադրության որը, վոր տոնվում եր առանձնապես մեծ հանդեսներով:

ծաղուլավորները մի շարք ընդհարումներ են ունեցել վոստիկանուժյան հետ: Կան 30-ից ավելի սպանվածներ և վիրավորներ. դրանց մեջ կան շատ վոստիկաններ և ղինվորներ: Կան շատ ձերբակալվածներ:

Գումելում գործադուլ են արել արհեստավորները, գործակատարները, դեղատների աշակերտները, բանկային ծառայողները և սպասավորները: Հունվարի 18-ին վոստիկանուժյունը բացեց գործադուլավորների մի ժողով: Վոստիկանները կրակեցին: Սպանված է մի աղջիկ: Վիրավորված են չորս հոգի:

Այնուհետև գործադուլային շարժումն սկսեց անցնել դեպի հարավ և վորպայի շրջանը: Բրյուսևից, հունվարի 10-ից, հաղորդեցին, վոր գործադուլ են արել ապակու գործարանի բանվորները: Գործադուլ են սպասում ամբողջ Մալյեսկի ուսյունում և ուլյաների գործարանում: Կիևում գործադուլն սկսվել է հունվարի 17-ին Գրետտերի մեծ մեքենաչինական գործարանում, հարավ-ուսսական գործարանի արհեստանոցներում և Գրաների գործարանում: Հացթուխների մի մասը նույնպես գործադուլ է արել:

Յեկատերինուլայի մասին հեռադիրները հաղորդեցին՝ սպառանները կանգ են առել: Լրագիր չկա: Գործադուլ են արել Ալեքսանդրովսկի, Բրյուսևսկի, Դնեպրովսկի և Յուզովկայի գործարանների բանվորները):

Սարատովում գործադուլը գործարաններում և յերկաթուղային արհեստանոցներում սկսվել է չորեքշաբթի: Ֆրանսիական լրագրներում՝ «ցարիզը յերեխաների դեմ» վերնագրով հողվածում պատմված է, վոր դիմնադիստները և ուսալիստները միացել են բանվորների գործադուլին: Յերբ յերեխաները և պատանիները դուրս են յեկել դպրոցներից, կադակները մտրակներով ձեծել են նրանց: Գումայի իրավասուները և գեմստվոնները պատգամավորություն են ուղարկել նահանգապետի մոտ՝ պահանջելու քննություն կատարել, պատժել մեղավոր կադակներին և յերեխաների հետ վարվել ավելի մարդասիրաբար:

(Գործադուլ է սկսվել Թիֆլիսում: Նա անցել է արդեն (հունվարի 20-ին) Բաքում: Նարվում գործադուլ են արել մանարանի բանվորները: Սպասում են Ջինովյեսկու (?) մեքենաչինական գործարանի և մահուդի Փարբիկի բանվորների միանալուն):

(Ն. ԼԵՆԻՆ ՅԵՎ Մ. ՈԼՄԻՆՍԿԻ

## Ռ Ի Գ Ս

Ռիզայի գործադուլի մասին մենք ունենք մանրամասն տեղեկութիւններ չնորհիվ գերմանական թերթերին գրված թղթակցութիւններին: Ահա ինչ են գրել գործադուլի պատմութեան շուրջը:

«Պետերբուրգի աստամբուլութիւնից դեռ մի քանի շաբաթ առաջ արդեն այստեղի կառավարական նախաշինարանի (վորը, յերեկ, «քաղաքական» նկատառումներով սրահսանում է տակավին հին՝ «Լանդե և Վորդի» Փիրման) բանվորները հայտնեցին, վոր գործադուլ կանեն, յեթե իրենց աշխատավարձը չբարձրացվի: Դրանց միացան մի քանի ուրիշ Փարբիկների բանվորներ: Բանվորների առեւտրութիւնն ուղղված էր առանձնապէս վարպետների դեմ, վորոնց ձեռքին է այստեղ բանվորների ընդունելութեան գործը: Բոլորը և ամեն մեկը դիտեն, վոր վարպետները բանվորներից վերցնում են 10-15 ուրբլի կաշառք, գործարանում տեղ տալու համար: Այդ դուժարը հետո յուրաքանչյուր շաբաթ դուրս են գալիս աշխատավարձից: Հասկանալի չէ, վոր վարպետներին ձեռնառու չէ հաճախ բանվորներ արձակելը: Յեւ վ բանվորները, ըիչ չի պատահել, վոր գիշերները ծեծել են վարպետներին: Գործարանային վերատեսուչները հանգստացնում է յին բանվորներին՝ վարպետների վրա ավելի խիստ հսկողութիւն անելու խոստումով: Մի քանի որ առաջ Պետերբուրգից և Մոսկվայից եմիսարներ յեկան, վորոնք աշխատում է յին գործադուլ առաջ բերել Բալտիկ վագոնաշինական գործարանում, (վորն ունի մի քանի հազար բանվոր): Չորեքշաբթի առավոտյան արդեն բանվորները մեծ խմբերով, լիակատար կարգապահութեամբ, միանգամայն առանց հարբածների (վոր հաղվադեպ է Ռուսաստանում, — նկատում է գերմանացի թղթակցիցը), անցնում է յին փողոցից-փողոց և գործարաններին ստիպում՝ աշխատանքը դադարեցնել: Այսպիսով, 24 ժամվա ընթացքում նրանք դադարեցրին Ռիզայի և արվարձանների բոլոր գործարանները աշխատանքը: Բայց, նախկին գործադուլների տարբերութեամբ, շարժումը ունի այժմ դուռ-ճաղաքական բնույթ: Աս—մասսայական ցույց է: Գաղաքային թատրոնի ներկայացման ժամանակ մարդիկ յեկան պոլիտեխնիկումի ուսանողների կողմից

և ստիպեցին ներկայացումը դադարեցնել: Թատրոնն իսկույն փակվեց: Բանվորները կարմիր դրոշակներով շրջում են քաղաքում: Խոսում են հեղափոխական ճառեր»:

Ահա մի ակննատեսի նամակ, վոր գրել է բուրժուական-դեմոկրատական մի թերթի. «Այս բնագիւն, յերբ այս տողերը գրում եմ, թատրոնական բուլվարից, ձյունարուքի մոնչոցի հետ լավում են գրգռված ամբոխի բացազանչութիւնները: Հեռվից դժվար է զանազանել այդ ձայների բնույթը: Բայց, ինձ նման, Ռիզայի հագարավոր քաղաքացիները լսում են դրանք և ակամա կապում Պետերբուրգի և Մոսկվայի մասին յեղած լուրերի հետ, վորոնք տարածվել են արդեն ամբողջ աշխարհում: Յերեկվանից, վոչ պակաս քան 50,000 բանվոր, այսինքն այստեղի բոլոր բանվորները գործադուլ արին, Պետերբուրգից յեկած կաղամակերպիչների նախաձեռնութեամբ: Ուսանողները վոչ միայն միացել են նրանց, այլ նույնիսկ ղեկավարողի դեր են ստանձնել: Սոցիալ-դեմոկրատական միութեան լատիշերեն մի թոռցիկ, մյուս շատերի նման, վորոնք վերջին ժամանակներս այստեղ ձեռքից-ձեռք են անցնում, — բացատրում է գործադուլի պատճառները և առիթները: Ամբողջ թոռցիկից պարզ յերևում է բուռն ցանկութիւն ցարկովից ապստվելու, վոր ծանր քարի պէս ճնշում է բոլորին: Ամենից առաջ հայտնում են իրենց համերաշխութիւնը Պետերբուրգի առաջավոր մարտիկներին, վորոնք թագավորին տեսնելու յելք է յին փնտրում, քահանայի և խաչի գլխավորութեամբ նրա մոտ գնալով, և վորոնք, դրա համար, զնդակահարվեցին խմբերով: Այնուհետե հայտնվում են հետեյալ ցանկութիւնները—բանվորական կարճատե ուր, աշխատավարձի բարձրացում, լավ վերաբերմունք, սահմանադրութիւն և Մանջուրիայի պատերազմի դադարեցում: Թրոռցիկը վերջանում է «ուռա» բացազանչութեամբ՝ ի պատիվ հեղափոխութեան: «Բանվորներ՝ հառա՛ջ, հառա՛ջ»:

«Այս թոռցիկը գրված է, ճիշտ է, կրակոտ, կրքոտ, խտացած և ծանրակշիւ, բայց նրան այստեղ պակասում է լայն պատվանդան և սուր խայթ: Այստեղի բանվորները մեծ մասամբ չահարգուված չեն գործադուլով (? բայց 50,000-ը ? խմբ.) և կուգէ յին աշխատանքները շարունակել, իսկ, մյուս կողմից, քաղաքական ձգտումներն ընդգծված են անբավարար, և այստեղ չկան վոչ կայսր, վոչ միխիստրներ, վոր պահանջներ առաջադրվեն (? սարդոք բանագողութիւն չի նոր «Իսկրա»-ից—բանվորներին և

ի չլիանութիւնն ունեցողներին դեմ առ դեմ դնելու մասին. Սմբ.) : Փողոցների բոլոր խաչածնման տեղերում մի ժամ առաջ փակցվեցին նահանգապետի հայտարարութիւնները, վորոնք արդելում են ամեն տեսակ համախմբումներ՝ բանվորների հանցավոր մտադրութեան պատճառով և, փոքրիկ դիմադրութեան դեպքում, սպառնում են զինվորական ուժի դործադրութեամբ: Չնայած այս արգելքին, բանվորական բաղմութիւնները «ուռա» բացազանչութիւններով (ի պատիվ հեղափոխութեան) ցուցցեր են անում փողոցներում, իսկ տաճարի դիմաց արդեն հինգ անգամ կրակեցին հասարակութեան միջից այնտեղ կանգնած զորքի վրա: Բարեբախտաբար, վոչ-վոք չվիրավորվեց: Կրակողները թաքնվեցին:

... «Յերեկոյն Ձյունի բուքը շարունակվում է: Լուսամուտների ազակիները ծածկված են սառուցով: Քամու վտոնոցը լեցնում է ամբողջ տունը: Հարեան սենյակում պառկած է իմ ոռու տանտիրուհու գնդակահարված ամուսինը: Նրան բերին բարեկամները քառորդ ժամ առաջ: Վարի հարկն են բերված նաև յերեք ծանր վիրավոր ուսանող: Բուրվարի աղմուկն ու կանչերը, վոր քիչ առաջ լսեցի—գրանք սարսափի և կատաղութեան ճիչերն ելին այն ահավոր կովի ժամանակ, վորը կատարվում էր Դվինայի փերին և վորը մեծ թվով զոհեր էր տարել: Յես չեմ կաբողանում նստել գրասեղանի մեռ:

«Յես Դվինայի փերին եմ շատ շատերի հետ, վորոնց հետաքրքրութիւնը և դեպի մարտիկներն ունեցած համակրանքը ճնշել է անձնական յերկյուղի դգացումը: Մի տան առջև, վորի վարի լուսամուտները, դռները և պատերը գնդակակոծ են, դեռ ընկած են մի շարք սպանվածներ և վիրավորներ: Յեկան Կարմիր Սաչի սահնակները. և կենդանի և մեռել հավաքեցին տարան հիվանդանոց: Ինձ մոտ կանգնած է մի սպասավոր կին: Վտոքերը հրաժարվում են ծառայել նրան, և նա ընկնում է: Ձինվորները և հասարակութիւնը լուռ նայում են ձյունի վրա յերևացող արջան հետքերին: Մեզից յերեսուն քայլ հեռու, դեպի Դվինան տանող թեք փողոցով մի քանի տղամարդ և կին վազում են ցած, դեպի դետի սառուցը և ինչ վոր բանի մասին խոսում են տաք-տաք ու ձեռներ թափահարում:

\*) Այս ֆակտը մեր թղթակիցների կողմից չի հաստատվում:

«Հարցնում եմ—բանն ինչո՞ւմ է: Պատասխանում են՝ բանվորներից, ոտարերկրացիներից, անդործներից ու հեղափոխականներից կազմված հաղարավոր մի ամբոխ կամեցավ, ուսանողների առաջնորդութեամբ, շրջապատել զորքը. մի ժանդարմ սպանվեց բաղմութեան միջից արձակած կրակով \*). զորքը պատասխանեց համազարկով. դրան ի պատասխան հետեցին դարձյալ կրակոցներ ամբոխի միջից: Այդ ժամանակ սակավ շահադրովածների և վախկոտների ամբոխը փախավ ամեն կողմի վրա: Շատերը նետվեցին Դվինան, շատերին դետափից դեպի սառուցը քշեցին զինվորները: Ափի քարերի մոտ սառուցը բարակ էր և կտարվեց: Ժողովրդի ահազին բաղմութիւնն աներևութացավ սառուցի տակ և տարվեց դետի արագ հոսանքով:

«Յրվեցե՛ք: Չհավաքվել, յեթե վոչ կը կրակենք»—լսում եմ բացազանչութիւն: Այլ և ձախ կողմիս հարեանները փախչում են: Յես թոչում եմ տան դռներից մեկը, վորտեղից մարդիկ են մտնում ներս: Տաճարի դանդերը խփում են—ահազանդ է: Բայց բաղմութիւնը չվազեց դեպի հրդեհի վայրը, վորովհետև ուշ էր և յեղանակը վատ:

«Մյուս ոլը խաղաղ էր: Կազակների դալը, կատարված սպանելից հետո, տպավորութիւնն չթողեց: Գերմանական թատրոնի մոտ ժողովրդի բոլոր դասակարգերից մեծ բաղմութիւն էր հավաքվել, յերը պոլիտեխնիկումի ուսանողները սղահանդես սարքեցին ի պատիվ յերեկ ընկած ընկերների:

«Հայտնվեց հետևակ զորքի մի մեծ վաշտ: Վաշտապետը կրտրուկ պահանջեց՝ դրոշակը վերցնել (լուսամուտից կախված էր մի մեծ սև դրոշակ այս մակադրութեամբ. «Դու մեռար հայրենիքի համար: Փառք քո հիշատակին: Վրեժ քեզ սպանողներին».) . ուսանողները մերժեցին և, ընդհակառակը, սկսեցին յերկրորդ հարկի լուսամուտից դրոշակ ձոճել: Դեռ լույս էր: Ամբողջ Պոլիտեխնիկումը շրջապատեցին զորքով, և հրաման տրվեց դրոշակը վերցնելու: Ձինվորներն ուղղվեցին արդեն դեպի մուտքը: Ուսանողները հանեցին ատրճանակներ և դանակներ:

«Պոլիտեխնիկումի վերատեսուչը, սակայն, կարողացավ վերջին մոմենտին միջամտել և համոզել ուսանողներին, վոր դրոշակը վերցնեն սղահանդեսի վերջում: Սպաններն ու զինվորներն ստիպված յեղան կանգնել ու լսել, թե ինչպես հոետորները կրքոտ ճառերում, բաց դուրս կանգնած լսարանի առջև, «ուռա» բացազան-

չությունները և ծածանվող դերոշակները մեջ, «Հավերժ հիշատակ»-ի հանդիսավոր յերգեցողութայն տակ, —իսառարանում եյին հանգուցյալները խիղախությունը և յերդվում եյին վրեժխնդիր լինել նրանց համար: Սղահանգեսը տեկց յերկար: Հետո դերոշակը վերցրին:

«Այժմ ամեն ինչ խաղաղ է: Միայն բանվորները փոքրիկ խուճապներ, յերգելով, անցնում են փողոցներով»:

Մի ուրիշ ազատամիտ թերթի հաղորդում են հունվարի 18-ից: «Շարաթ որվա վարձավճարը ( ПОЛУЧКА ) հանդիստ անցավ: Յերկուշարթի սկսվում են աշխատանքները բոլոր գործարաններում: Այն յերկյուղը, թե նոր արյունհեղություն է լինելու մի ուսանողի թաղման առիթով, —չարդարացավ: Փողոցներում զորքը հուղարկավորութայն թափորին ուղեկցում եր հեռվից, իսկ գերեզմանատունն ամբողջ շրջապատված եր ռազմական գործողությունների պատրաստ կադակներով: Այդ պատճառով մարմինը հողին հանձնվեց առանց ճառերի և ցույցի: Դադարի առջևից դընում եր մի ուսանող, ձեռին մի մեծ պսակ, վորի կարմիր ժապավենը ցույց եր տալիս բոլոր կողմերին. իսկ այդ ժապավենի վրա վոսկե տառերով գրված եր. «Փա՛ռք քո հիշատակին: Մա՛հ քեզ սպանողներին»: Տարածվեցին բազմաթիվ կոչեր՝ ուսուերեն և լատիչերեն, վորոնք կամ ձեռքից-ձեռք եյին անցնում, կամ փոքրիկ, կապված ծրարներով՝ մեջը մի քանի հատ, նետվում եյին բազմության մեջ»:

Մի ուրիշ թղթակից գրում է նույն լրագրին, հունվարի 29 (16)-ից.

«Չնայած իրենց ամբողջ գաղանութայն՝ գործն ու վոստիկանությունը այստեղ անգոր գտնվեցին: Պատահեցին նույնիսկ այնպիսի գեպքեր, վոր մի քանի վողոցներում բանվորների բազմությունները շրջապատում եյին վոստիկաններին և ստիպում նրանց կարմիր դերոշակ տանել իրենց առջևից: Լուրջ գրամայում, այսպիսով, յեղան և յերգիծական եպիգրոներ:

Փողոցներից հավաքած սպանվածների թիվը հաչվում են 56 մարդ. վիրավորներից հիվանդանոցներում մեռել են ևս 17: Ահազին սպավորություն թողեց, Ռիդայում դեռ ևս չտեսնված, հետեյալ տեսարանը.—այն մեծ սայլերը, վոր սովորաբար հաց ու յերկաթեղեն եյին փոխադրում, փողոցներով տանում եյին չճածկրված գիակներ»):

Վերջապես, ահա դեպքերին մասնակցող մի կնոջ նամակ, վորը հասել է մեր ձեռը. «Ականջներս դեռ դժժում են զնդակների սուլոցից և հրացանների վորոտից: Ձեռս դողում է, և խոսք չեմ գրտնում արտահայտելու այն վրդովմունքը, վոր տիրել եր մեզ, խոսք չեմ գտնում նկարագրելու այն սարսափները, վոր սպրեցինք մենք: Հինգաշարթի յերեկոյան զինվորները մեզ շրջապատեցին և առանց վորևե նախազգուշացումի կրակ բացին: Սպանվածների թիվը մոտ 80 է, վիրավորներին՝ մոտ 300: Յեա ինչ-վոր հրաչքով ազատվեցի: Ինձ հանեցին ճյուղի սիջից, և յես աչքս բաց արի ինչ-վոր նրկուղում, ուր 25 վիրավոր կար: Յեա իսկույն և յեթ գործադրեցի իմ բժշկական գիտությունը. հետո հարկ յեղավ հիվանդներին փոխադրել տները: Չնայած գործի գաղանութայն՝ բանվորների տըրամադությունն առույգ է: Բոլորն գլում են, վոր սա սկիզբն է հեղափոխութայն: Թաարոնը՝ դպրոցները, խանութները—բոլորը փակ են: Ելեքորաքարչը չի գործում: Փողոցներով շարժվեց քան հազարանոց բազմություն, դրանց թվում և կուղնեցովի ֆարբիկի սուս բանվորները: Բանվորների լողունգն է. «կորչի միայնությունը: Կեցցե՛ հեղափոխությունը: Կեցցե՛ դեմոկրատական հանրապետությունը: Փա՛ռք Պետերբուրգի ընկերներին»:

Ռիդայի գործադուլավորները խիստ կարիքի մեջ են. ուտելու բան չունեն: Արտասահմանյան թերթերը հաղորդում են, վոր Ռիդայում մահացու վիրավորված են յերկու զինվոր և պրիստավի ոգնական Բիլևը:

Ռեվիլում գործադուլն սկսվեց Ռիդայի հետ՝ միևնույն օրը: Աշխատանքները կանգ առան բոլոր գործարաններում և յերկաթուղային արհեստանոցներում: Բոլոր խանութները և հիմնարկները փակ են, գորքը պահպանում է կայարանը: Ամբոխը փորձեց ավերել գաղի գործարանը, բայց գորքը չթողեց:

(Լիրավայում, վինգավայում և Միտավայում նույնպես բռնկեցին ընդհանուր գործադուլներ: Միտավայից, հունվարի 14-ին հաղորդում են. «Ռիդայից յեկած գործակալներն առաջ բերին գործադուլ: Բանվորների ամբոխը, վոր աճում եր հետզհետե, կանգնեցնում եր գործարան գործարանի յետևից: Չորք է կանչված: Բանվորները՝ յերգերով, դերոշակներով ցույց են անում, կոչեր են տարածում: Ձինվորական պահակախմբերը չըջում են քաղաքում:—15-ն հունվարի: Բանվորների բազմություններն անցնում են փողոցներով: Տակավին գորքի հետ ընդհարում չի յեղել:

17-ն հունվարի: Գործադուլը շարունակվում է: Կայազորը թուլացած է, վորովհետև մի վաշտ ուղարկվել է Վինդավա: Տեղի ունեցան անկարգություններ: Մի վոստիկան վերափորված է: Զորքը դեռ գենքի գործադուլի չի դիմել: Հետևակի մի գումարտակ է հրետանու մի մարտկոց (բատարեա) վիլնայից ուղարկված են Լիրավա:

Լիրավա, 28 (15) հունվարի:—Յերեկ յերեկո ցուցարարների բաղմուտները տապալեց հեռադրաթելի սյուները: Այսօր առավոտյան դրանք նորից կանգնեցրին: Հարձակումներ յեղան փոերի վրա, բայց զորքը Կովնոյից ողնություն ստանալով, ցրեց ամբոխը:

Վինդավա, 31-ն (18) հունվարի:—Գործադուլն սկսեցին ելեվատորների բանվորները, ներկայացնելով մի շարք պահանջներ: Այնուհետև միացան յերկաթուղային բանվորները: Բոլոր հաստատություններն ու բանկերը փակ են: Գործադուլավորներն իրենց հանդիստ են պահում, հավաքվում են չուկայի հրատարակում և այնտեղ քննում իրենց պահանջները: Ելեվատորային բանվորներն աշխատանքը վերսկսեցին նրանից հետո, յերբ նրանց խոստացան վորոչ զիջումներ):

(Ն. Լենին և Մ. Ոլմինսկի)

## Վ Ա Ր Շ Ա Վ Ա

Չորեքշաբթի և հինգշաբթի այստեղ տարածվեցին ուսական և հաստանի և Լիտվիայի սոց.-դեմոկրատիայի բաղմաթիվ թուրքիկներ՝ Պետերբուրգի դեպքերի առթիվ: Թուրքիկն ընդհանուր գործադուլի և լեհական բանվորների համերաշխ յեղութի կոչ է անում, պահանջելով հիմնադիր ժողովի անմիջապես գումարում, ուրբաթ և շաբաթ լույս տեսավ դարձյալ ընդհանուր գործադուլի հատուկ կոչ հետևյալ պահանջներով.—Ցամայա բանվորական՝ որ, կազմակերպել հասարակական աշխատանքներ գործադուլիկների համար, պատերազմն ավարտելու համար գումարել հիմնադիր ժողով և հուշակել հանրապետություն: Լույս տեսավ նաև մի առանձին կոչ, վորը ինտելիգենցիային հրավիրում է աջակցել բանվորներին:

Յերեքշաբթի տարածվեց նույնպես լեհական սոց. կուսակցության կենտ. կոմ.—ի կոչը, ուր, ի միջի այլոց, ասվում է. «Լիկերներ, այն, ինչ անհամբերությամբ սպասում եյինք, վերջապես, յեկել է: Քայքայվող ցարիզմի դեմ յեղած հարձակումներին, ավելացել է ամենագլխավորը—ուսա պրոլետարիատի հարձակումը»:

Ահա մի թղթակցի մանրամասն պատմությունները գործադուլի մասին:

«Վարշավա, 27-ն (14) հունվարի, առավոտ. 10 ժամին:—Հենց նոր Լեհաստանի ամենախոշոր թուրքաձուլական գործարանի («Լիպոպ Ռաու և Լեվենշտեյն») բանվորները զաղարկեցրին աշխատանքը: Առ այժմ կարգը չի խանդարված: Գործարանի բոլորքը շրջում եյին հեծյալ պահակախմբեր: Գաղի գործարանը և Ջրմուղը գրավել է զորքը: Աղաբնակուլթյունը նավթի, ածուխի, կենսամթերքների պաշար է տեսնում:

Յերեկվա ժամը 5-ին: Ինչպես և սպասելի յեր, գործադուլը դարձավ ընդհանուր: Կանգ առան բոլոր Փարրիկները, տպարանները և այլն: Կես որին մոտ աղաբնակուլթյունն ուղղակի պաշարեց փոերը: Այժմ քաղաքում մի կտոր հաց անգամ չես գտնի: Միտ-



լերի շողիով աշխատող փուռը՝ Վոլյա արվարձանում՝ բանվորնե-  
րը գրավեցին հարձակումով: Թերթերն այսօր, հավանորեն, լույս  
չեն տեսնի: Յես դնացի Վոլյա արվարձանը: Խլոզնայա փողոցում  
հանդիպեց մի կառք, վոր յերկու բանվորի դիակներ եր տանում:  
Քառորդ ժամ առաջ արյունալից ընդհարում եր տեղի ունեցել Խլ-  
լոզնայա և Վորոնսկայա փողոցների անկյունում: Կաղակները մըտ-  
րակներով հարձակվել են հավաքված բանվորների վրա: Բանվոր-  
ները Խլոզնայա փողոցի վրա նոր կառուցվող տնից քարեր են բե-  
րել և քարկոծել նրանց: Դրան հետեւել և հարձակում սառը զեն-  
քով, և սպա կրակոցների համադարի: Կան շատ վիրավորներ և  
սպանվածներ: Վերադարձիս տեսա, թե ինչպես բանվորները հա-  
վաքվում են նորից: Վրոնսկի փողոցով անցավ հեծելազորի և հե-  
տեակի մի վաչտ ևս: Փողոցային լապտերները վառված են,  
բայց բանվորները Խլոզնայա փողոցում դրանք հանդցնում և տա-  
պալում են: Քաղաքի միջով անցնում են զինվորական ուժեղ զս-  
րախմբեր: Բոլոր վոստիկանատներում պատրաստ կանդնած են  
հետեակն ու կաղակները: Դրոււթյունը չափազանց լուրջ է:—6  
ժամ, 20 րոպե: Լսեցի, վոր Խլոզնայա փողոցում կրկնվել են ար-  
յունալից ընդհարումները: Վարչապա—Լոճ հեռախոսը կտրված է:  
Գործադուրը Պրադայում\*) կատարյալ է:

15-ն հունվարի, ցերեկվա 5 ժամին:—Գիշերն անցավ համեմա-  
տաբար հանգիստ: Այսօր առավոտյան խանութների մեծ մասը  
բացվեցին, բայց հետո կրկին փակվեցին: Ներկա րոպեյիս փակ են  
բոլոր խանութները, անուշարանները և այլն: Հարկ յեղավ դե-  
ղատներն անդամ փակել: Կոնկան չի դործում: Յեղան մի քանի  
ընդհարումներ, բայց ասում են, առանց արյունահեղության:  
Ժամը 12-ին համալսարանի և պոլիտեխնիկումի ուսանողները,  
թվով մոտ 2,000, լուռ անցան Նովի Սվետ և Կրակովի փողոց-  
ներով: Թատրոնական հրապարակում նրանց ցրեցին: Ժամը 6 և  
կեսին Prosectorium-ում նշանակված է ժողով՝ բանվոր-  
ներին համաիրանք հայտնելու համար: Փողոցներն անսովոր կեն-  
դանացած են: Փողոցային լապտերները վառվում են դժգոլյն:  
Գալի գործարանի վարչությունը խնդրում է զազի հետ վարվել  
անտեսաբար, վորովհետեւ բանվորներին փոխարինող զինվոր-  
ները վատ են աշխատում: Հացը սպակաս է: Զինվորները փողոցնե-

\*) Վարչապալի մի թաղը:

րում տեղ-տեղ ծախում են իրենց փայտափինը ( пайки ): Մի  
կտորին, վոր արժե 16 կոպեկ, տալիս են 50—60 կոպեկ: Լեչնո  
փողոցի վրա վաճառքի մենաչնորհ ունեցող գինեատուը կողոպտ-  
ված է և հրդեհված: Այրվում է և այժմ:—7 ժամ, 50 րոպե.—  
Թատրոնները բաց են. նրանց մոտի հրապարակները դատարի են:  
Կառքեր չկան: կաֆենները փակ են: Թերթերը լույս չտեսան:  
Նա-  
մակներ չեն բաժանում:

29-ը (16) հունվարի. առավոտյան 10 ժամին: Յերեկվա նա-  
մակը յես կարողացա ուղարկել միայն այս նամակի հետ, վորով-  
հետեւ լապտերները Մարչալիովի փողոցում ջարդված են, և դեպի  
կայարան տանող ճանապարհը անվտանգ չէ: Գիշերը գորքը բա-  
նակեց Թատրոնական հրապարակում: Առավոտյան կողոպտվեցին  
մի քանի զինավաճառանոցներ: Զարդված—քանդված են մի քանի  
գինեատներ: Բնորոշ է, վոր ամբոխը ողին թափում է. հարեցո-  
ղություն չկա: Ամբողջ կայազորը մորիլիզացիայի յես յենթարկ-  
ված: Դրոււթյունը լուրջ է:

Յերեկվա 12 ժամին: Գիշերը, ասում են, յեղել են մի քանի  
արյունահեղ ընդհարումներ: Ներկայումս յես լսում եմ համա-  
գարկեր և թնդանութաճուլթյուն Վոլյա արվարձանի ուղղու-  
թյամբ: Խոսում են հարյուրավոր զոհերի մասին: Գործադուրը  
աճում—ծավալվում է: Քաղաքում հայտարարված է զինվորական  
զրոււթյուն:—30-ն (17) հունվարի: Յերեկվա զոհերի թիվը հայտ-  
նի չէ: Խոսում են, վոր կա 160 վիրավոր և սպանված: Բոլոր  
արդյունաբեր և առևտրական հիմնարկները փակ են»:

Սրանից հետո թղթակցություններ առայժմ չկան: Արտասահ-  
մանյան թերթերն ընդգծում են, վոր պոստային կապը Վարչապա-  
լի հետ գրեթե խզված է: Դա մասամբ բացտրվում է գործա-  
դուրով, բայց զլլավորապես, կառավարության ձեռք առած  
միջոցներով, վոր այժմ տասնապատկել է «սե կաբինետների»  
աշխատանքը, վորոնք նայում են Ռուսաստան ուղարկվող և Ռու-  
սաստանից յեկող նամակները:

«Варшав. Дневник»-ում տպվել է վոստիկանական մի  
հաղորդագրություն, վորը, պարզ է, սուտ փաստեր է հաղորդում  
և աշխատում է չեչտել խանութները ջարդելու վրա (վոստիկա-  
նական պրավոկատորների ձեռքով?):

Հուլիարի 15-ին փողոցում զորքի հարձակմանը յեն-  
թարկվեցին բրիտանական հյուպատոսը և փոխ-հյուպատոսը՝ Վար-

չավայում : Բրիտանական ղեկավարներ միջամտեց և ոսկո կառավարութիւնը ըննութիւն նշանակեց :

Յերբ բանվորները ուրբաթ օրը շրջում ելին գործարանները , տերերը հարցնում ելին .—ձեր դժգոհութիւնն ի՞նչու՞ն է : Բանվորները պատասխանում ելին . «Մենք գործադուլ ենք արել վոչ թե նրա համար , վոր դժգոհ ենք ձեզանից , այլ քաղաքական պատճառներով : Մենք ուզում ենք ցույց տալ , վոր ընդհանուր կարգերից դժգոհ ենք» : Այն գործարանատերերին , վորոնք չեյին կամենում իրենց գործարանները փակել , հայտնում ելին , վոր դա ամենավատ հետևանքը կունենա : Սպառնալիքը ազդեց , և բոլոր գործարանները շուտով փակվեցին :

Ռուս ուսանողները ժողով դուժարեցին՝ Պետերբուրգի մարտիկներին համակրանք հայտնելու համար : Լեհ ընկերները չմասնակցեցին այդ ժողովին : Զորքը շրջապատեց ժողովը և ուսանողներին առաջարկեց ընտրութիւն անել—ցրել կամ կալանավորվել : Շատերն ընտրեցին վերջինը : Կալանավորեցին նաև այն ուսանողներին , վորոնք կենսամթերք ելին բաժանում գործադուլավորներին :

Գերմանական սոցիալ-դեմոկրատական թերթին գրել են Վարչավայեց . «Ընդհանուր ճակատամարտ չի յեղել , բայց դահիճները ցերեկով ուղղակի վորսում են բանվորներին և ընդհանրապես հասարակութան , ժամանակ առ ժամանակ , առանց վորևէ նախազգուշութան , կրակելով անցորդների վրա : Դա շարունակվեց շաբաթ յերեկոյան և ամբողջ կիրակի օրը : Այսպես , Բրացկի , Վելսկի , Սմեթնի փողոցներում , կիրակի , առավոտյան ժամը 10 և 12-ի արանքում խփեցին մի քանի մարդ : Մլինարսկի փողոցում խփեցին յերկու կին : Կարմելիցկի փողոցում կրակեցին խաղաղ կանգնած բանվորների վրա : Սպանված են վեց հոգի : Անցորդներին կանգնեցնում ելին փողոցներում և խուզարկում : Ում մոտ թուղցիկ կամ ատրճանակ ելին գտնում , նրանց ձեծում , կխամեսով ճակի ելին հասցնում : Բանվորները թույլ չտվին իրենց ընդհանուր սպանդի յենթարկել և քաղաքի զանազան մասերում՝ ցույցեր ելին անում՝ յերգերով , գրոշակներով , առանձին խմբերով՝ 500-ից մինչև 1000 , մարդ : Սպանվածների և վիրավորների թիվը հաշվում են մինչև 1,800 :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼ ԼՈՁՈՒՄ

Լոճ , 29-ը (16) հունվարի : Յերեկ հայտարարվեց ընդհանուր գործադուլ : Աշխատանքը դադարել և բոլոր ֆաբրիկաներում , արհեստանոցներում և տպարաններում : Տրամվայը չի բանում : Թերթ չկա : Գործադուլավորները թույլ չեն տալիս Վարչավայի թերթերը ծախել փողոցներում : Նրանք ստիպեցին փակել կաֆեները , ըստօրանները և հյուրանոցները : Լուսամուտներին և խանութներին ցուցադրեցին տախտակներ են փակցնում : Փողոցներն անսովոր կենդանացած են : Բազմաթիվ գործադուլավորներ , գորբ , կազակներ , հրետանի , դրանց հետ և անցորդներ : Յերեկ Սասնովեցից յեկավ յերկու դուռդ . այսօր յերեք հարյուրակ կազակ և դրադուռ յեկան Վրոցլավսկից : Նահանգապետ Արցիմովիչը , վոր ազատամտի հռչակ ունի , հրամայեց՝ գործադուլավորներին ձեռք չտալ , մինչև կարգը չխանգարվի : Բայց հայտարարութիւններում նա սպառնում է զինական ուժով : Բանկերը , դաղի գործարանները և վոստիկանական շենքերը պահպանվում են զորքով : Զորքերը տեղավորվել են գլխավոր փողոցներում : Այստեղի առևտրական դպրոցից յերեք հարյուր աշակերտ յերեկ միացան գործադուլավորների խմբին և հարյուրներով թուղցիկներ ելին բաժանում փողոցում : Քաղաքի զանազան մասերում կայացան մեծ ժողովներ :

Այսօր , ճաշից հետո , Մազիստրատի հրապարակում հավաքվեց հազարավոր ամբոխ : Լսվում ելին «ուռա» բացազանչութիւններ ի պատիվ հեղափոխութան : Հանդես յեկան հոետորներ , վորոնք գործադուլավորներին կրակոտ կոչ ելին անում՝ ցարիզմի դեմ պայքարելու : Ներկա գտնվող վոստիկանութիւնը ձեռք չտվեց նրանց : Վոստիկանութան այս կրավորական վերաբերմունքը վատ նշան է : Յերեկ վոստիկաններն արդեն փորձում ելին ամբոխին հիս անել հրեաների վրա , լուր տարածելով , թե հրեաներն սպանել են մի քահանայի , բայց գործադուլավորները այդ վոստիկաններին ձեծեցին : Բանվորների ղեկավարներից մեկը բազմահազար ամբոխի առաջ հայտարարեց . «Թույլ մի տաք , վոր խարեբաները իրենց կառթին քցեն ձեզ : Հրեաները՝ մեր յեղրայրներն են : Նրանք մեր ընկերներն են իրենց տանջանքներով և համոզմունքներով , ձեռք մեկնենք ուրեմն նրանց—միապետութան դեմ ընդհանուր պայքար տանելու համար» : Լսվեցին բացազանչու-

թյուններ. «Կորչի՛ միապետութիւնը: Կեցցե՛ հեղափոխութիւնը»: Յերեկոյան կենտրոնից հեռու փողոցներում թեթև ընդհանրումներ յեղան զորքի հետ, վորոնիք, սակայն, անցան առանց արյունոտ զոհերի:

Հունվարի 17-ից հաղորդեցին, վոր այստեղի 150,000 բանվորներից դործադուլ է արել 100,000:—Հունվար 18.—Քաղաքն անճանաչելի յէ: Բոլոր հիմնարկները փակ են: Յուշգրիտները տախտակված են: Քաղաքը նման է պաշարված բերդի: Փողոցներում պահակախմբեր են շրջում: Տրամվայը չի բանում: Հացատների առաջ հարյուրավոր մարդիկ հացի յեն սպասում: Սպասում են ընդհանուր դործադուլ ամբողջ լեհական արդյունաբերութիւնն ուստի:

Հելսինգֆորս. Ֆինլանդական բանվորները նույնպէս արձագանք տվել Պետերբուրգի դեպքերին: Հունվարի 25 (12)-ից արտասահմանյան թերթերին հաղորդում են. «Յերեկվա (հունվ. 24) բանվորական ցույցին մասնակցում էր մոտ 10,000 մարդ: Հավաքույթը սկսվեց յերեկոյան ժամը 8-ին, Սենատական հրապարակում, յերգվեցին հայրենասիրական յերգեր և ասվեցին ճառեր՝ հողուտ ընդհանուր ընտրական իրավունքի և Ֆինլանդական սահմանադրութիւն: Այնուհետև բաղմութիւնը անցավ քաղաքով և ցույցեր արավ ժողովրդականութիւն չը վայելող սենատորների բնակարանների առջև, ղեներալ-նահանգապետի տան առջև և հին ֆինական «Vusi Suometai» թերթի խմբադրատան առջև: Լսվում էին բացականչութիւններ. «Կորչի՛ միապետութիւնը: Կեցցե՛ հեղափոխութիւնը»: Ժամը 11-ի մոտ յերեկվացին կազակների պահակախմբեր: Չերբակալվեց 23 մարդ»:

Հունվարի 25 (12)-ին ցույցերը կրկնվեցին: Յերբ ամբոխը հավաքվեց Henrick Esplanade-ում վոստիկանութիւն տեսուչ Կարլստեդտը դիմեց նրանց մի ճառով, հրավիրելով խաղաղ ցրվել և սպառնաց լուրջ միջոցներով: Այդ հորդորն սկզբում աղէց, բայց հետո ամբոխը հավաքվեց Ռունեբերգի արձանի մոտ: Յերգում էին ազգային յերգեր: Ապա կարմիր դրոշակ պարզելով, բանվորական յերգերով Ռունեբերգի եսպալանդով ղնացին դեպի Սենատական հրապարակը, ուր յերգերին հետևում էին «ուռա» բացազանչութիւնները: Չիավոր և հետևակ վոստիկանութիւնը ցրեց հինգ հազարանոց բաղմութիւնը: Կան սրերով և ատրճանակի ղնդակներով վիրավորվածներ:

Նման ցույցեր յեղել են նաև Ֆինլանդիայի մյուս քաղաքներում՝ Աբոյում, Բերնեբորգում, Լախտինում, Կոսկում, Վրբորգում, Տամմերֆորսում, Լովիգում և ուրիշներում:

### ԱԶԱՏԱՄԻՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Մեր կրթված հասարակութիւն և բուրժուական դասակարգերի ներկայացուցիչները, վոր քիչ ընդունակութիւն յերևան բերին ազատութիւն համար պայքարելու, սակայն, այսպէս թե այնպէս, իրենց համակրանքը հայտնեցին բանվորների պայքարին: Կիրակի յերեկոյան, ինչպէս հաղորդում է անգլիական «The Daily Telegraph» թերթի թղթակիցը, Կայսերական Ազատ Տնտեսական ընկերութիւն մեջ կայացավ ժողով, վորին ներկա յեր մոտ 1000 մարդ: «Վոչ մի ղեկավարութիւն չէր ղդացվում, չկար դործողութիւնց միութիւն: Ժողովի տրամադրութիւնը սպասողական և ֆատալիստական էր»: Հայտնում են, վոր կիրակի յերեկոյան, Ալեքսանդրինսկի թատրոնում, ներկայացման ժամանակ, մի փաստաբան ճառով դիմել է հասարակութիւն և ասել, թե զվարճանալու ժամանակ չէ, յերբ փողոցներում արյուն է թափվում: Այս ճառը և մի քանի հեղափոխական բացազանչութիւններ, վոր հարուցեց ճառը, առաջ բերին այնպիսի հուզմունք, վոր վոստիկանութիւնը չը համարձակվեց միջամտել:

Յերեքշաբթի մի քանի փաստաբան հրաժարվում են դատական նիստերին մասնակցելուց և խնդրում են դատաքննութիւնները հետաձգել: Առում են, վոր դատավորները մեծ մասամբ բավարարեցին այդ խնդրանքները և, ըստ յերևույթին, համակրում էին ժողովրդական շարժման: Նույն յերեքշաբթի որը կայացավ ժուրնալիստների ժողովը՝ դրաքննութիւն դեմ բողոքելու համար, և չորեքշաբթի մի պատգամավորութիւն ղնաց Սվյատոպոլկ-Միրսկու մոտ՝ մի պետիցիայով, վոր հետևյալ բովանդակութիւնն ուներ:

«Պետերբուրգի որաթերթերի խմբադիրների ժողովը պընդում է, վոր անհրաժեշտ է, գոնէ, մեր ապրած, ծանր և փոթորկալից ժամանակ, մամուլին տալ լիակատար ազատութիւն՝ հասարակական կյանքի ղեպքերն ու պատճառները հաղորդելու և քննելու: Սրա հետ միաժամանակ խմբադիրներն իրենց

պարտքն են համարում նշել, վոր իրենց խորին համոզումով միակ յեւրը ներկա դրությունից այն է, վոր դումարվի Զեմսկի Սաբոր ( Земский Собор ) ուսական պետութեան մեջ կարգ հաստատելու համար: Այդ ժողովը պետք է կազմվի ազգաբնակչութեան բոլոր դասերի և դասակարգերի ազատ ընտրված ներկայացուցիչներէից և պետք է ունենա խորհրդակցութեաններէ և վորոշումներէ անսահման ազատութեան: Այդ ժողովի նիստերը պետք է լինեն անպայման հրապարակային»: Մտորագրել են հետեյալ թերթերի խմբագիրները —

«Право», «Наши Дни», «Сын Отечества», «Биржевая Газета», «Новое Время», «Новости», «Гусь», «Пет. Газета», «Свет», «Пет. Листок», «Peterburger Zeitung», «Пет. Ведомости», Սովորինը ճառասաց բոլոր խմբագիրներէ անունից և նախագլուխացից, ասում են, թե հետեյալ անգամը անկարելի կը լինի հուլիս զենել սպաների և զինվորներէ վրա, վորոնք կսկսեն անցնել ժողովրդի կողմը: Ինչպես հայտնում են, Սվյատոպոլկ-Միրսկին պատգամավորութեանն ընդունել է շատ սառը, նկատել է, վոր նախ և առաջ գործադուրը պետք է վերջանա և հեղափոխական շարժումն իջնի, իսկ ուղղակի պատասխան տալու մասին արված խնդրանքին — քրթմնջացել է ինչ-վոր, թե անհրաժեշտ է իմանալ զենեւալ-նահանգապետ Տրեսպոլի կարծիքը:

Յարական դահիճներէ զոհերի նկատմամբ հասարակական համակրանքի արտահայտութեանը յեղով ուսանող Սովինիկնի թաղումը: «Նա սպանվել է, — հաղորդում են արտասահմանյան թերթերը, — Դվարցովի հրապարակի մոտ, հինգ զնդակով: Թաղմանը ներկա յեր պոլիտեխնիքական ինստիտուտի վերատեսուչ Դադարինը և բոլոր ուսանողները: Դադաղը տանում էյին ուսանողները, նրանցից մեկը զերեզմանատանը մի ճառ ասաց հետեյալ բովանդակութեամբ. «Մենք թաղում ենք մի ընկերոջ, վորի անմեղ արյունը թափվել է միապետական կառավարութեան հանցանքով: Նա մեռավ, բայց նրա վոզին կենդանի յե մեր մեջ և կոչ է անում մեզ՝ շարունակել անչեղ պայքար՝ ազատ ապրելու և մտածելու իրավունքի համար»: Դադաղին դրված էյին շատ պաակներ: Այդ սրը ճեմարանը վակ եր:

Սրա հետ միասին թերթերը հաղորդեցին Սիմբիրսկի նահանգական զեմստովոյի 14 անդամի բանաձևը: Բանաձևում ասվում է, վոր անհնարին է լուել այժմ, վոր ժողովուրդը հասցվել է ստրկա-

կան գիճակի և վոր անհրաժեշտ է հրավիրել ժողովրդից ազատորեն ընտրված ներկայացուցիչներ: Ժողովի նախագահը թույլ չի տվել այս բանաձևը քննելու: Տավրիկյան զեմստովոն միաձայն ընդունել է նման բովանդակութեամբ մի ուղերձ թագավորին:

Չորեքշաբթի, հունվարի 12 (25) —ին Պետերբուրգի քաղաքային դումայի նիստին իրավասու Նարոկովը ներկայացրեց հետեյալ բանաձևը, վորի տակ ստորագրել են 15 անդամ: «Պաշտոնական տեղեկագիրը հաստատում է այն, ինչ մայրաքաղաքի բոլոր բնակիչները և մենք տեսանք, այն է, վոր հունվարի 9-ին դորքը կրակեց բանվորներէ վրա, վորոնք պետիցեյալով զնում էյին զեզի Զեկոային պալատ, թագավորի մոտ: Պետերբուրգի դուման, խորապես վրդովված դրանից, հայտարարում է, վոր նման խտութեանը խախտում է հասարակական կյանքի գլխավոր հիմունքները, այն է՝ քաղաքացիներէ կյանքի ապահովութեանը, և իբ պարտքն է համարում ոչնել տուժողներին՝ հասակացնելով 25,000 ուրբի հոգուտ սպանվածներէ ընտանիքներէ և վիավորներէ»: Նախագահ դուբնովոն թույլ չտվեց այդ բանաձևի քննութեանը: Այդ ժամանակ իրավասու բարոն Կորֆը առաջարկեց, վորպէնզի Դուման, վոչ մի խոսք չասելով տուժողներէ արդարացի և մեղավոր լինելու մասին, ուղղակի այդ դումարը հատկացնի հոգուտ նրանց: Այս առաջարկն ընդունվեց զգալի մեծամասնութեամբ:

Մոսկվայի քաղաքային դուման մի շարք վորոշումներ և ընդունել է զեպո Մոսկվայում լինելիք բռնկումներէ: Ի միջի այլոց, վորոշված է՝ խնդրել իշխանութեան — զենք չգործադրել կանանց, յերեխաների, ուսանողների և բանվորներէ զեմ, քանի զեռ նրանք ոտհամառփակվում են խաղաղ ցույցերով: Վորոշված է՝ միջնորդել, վոր բանվորներին իրավունք տրվի ազատորեն խաղաղ գործադուլ անել իրենց կյանքի պայմանները բարելավելու նպատակով, նաև՝ բանվորական միութեաններին տրվի ժողովներէ իրավունք: (Մի քանի խելոք կապիտալիստներ սկսում են զետակցել, ըստ յերեութեան, վոր բանվորական միութեաններէ վոտիկանական արգելքը և անհեթեթ է, և անգոր):

Գյուղատնտեսական ընկերութեան ժողովը Մոսկվայում ընդունել է մի բանաձև, վորը դատապարտում է հունվարի 9-ին, Պետերբուրգում, կառավարութեան ձեռքով կատարված ժողովրդի տրյունհեղութեանը:

Հունվարի 16-ին Պետերբուրգում կայացավ փաստաբանների ժողովը, վորը քննեց վերջին դեպքերի ժամանակ վնասված աղաքանակութանն ոգնելու միջոցները: Ընդունվեց մի բանաձև, թե միակ յեւքը ներկա զրությունից այն է, վոր հրավիրվի ժողովրդական ներկայացուցչութուն բոլոր դասերից:

Անդրիական թերթերը հենց նոր հաղորդեցին, Խարկովի Զեմսկի ժողովի ընդունած ուղերձի բովանդակությունը:

Ազատամիտների լեզուն հետզհետե համարձակ է դառնում, քանի շարժումը զարգանում է և պրոլետարիատը դիմում է ուղղակի պայքարի: Ուղերձը խոսում է յերկար տարիների բյուրոկրատական ճնշման, բռնության, կամայականության, ավերածության և ժողովրդի իրավազրկության մասին և այն մասին, վոր անհնար է պահպանել իրերի այս կարգը: «Այս պայմաններն անխուսափելիորեն առաջ կը բերեն զայլք փոթորիկը, և վորտե՞ր առաջին զորքյունը լավում է արդեն: Այդ փոթորիկն իր հետ բերում է քաղաքացիական կռիւ արյունոտ վտանգը և դահի տապալում: Թագավոր, փրկեցեք հայրենիքը այդ աղետից, քանի դեռ ուշ չէ»: «Լսեցեք սուս ժողովուրդի ձայնը՝ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով և հրավիրեցեք նրանց որենսդրության մեջ մասնակցելու: Մի հավատաք ծուլլ և չոգսքորթ սպասաւորներին, վրատահություն ցույց տվեք ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչներին, շտապեցեք հրավիրել նրանց և ստեղծել նրանցից պալատ, որենսդրական իշխանությամբ ոժտված»... Ուղերձն ընդունվել է 66 ձայնով ընդդեմ 4-ի:

Վլադիմիրի նահանգից, հունվարի 12-ից, մեզ գրում են. «Յերեկ, հունվարի 11ին, բացվեց նահանգական զեմստվային ժողովը, վորն անցավ փոթորկալից և այժմ հետաձգված է յերկու շաբաթով: 26 իրավասու հայտարարություն տվին, խնդրելով նիստը հետաձգել, նկատի ունենալով, վոր հանդիստ աշխատել անհնարին է «այն ժամանակ, յերբ Պետերբուրգի վոլոցներում հոսում է քաղաքացիների արյունը»: (26-ից չորսը տվել են նույն վոզով հայտարարություն, բայց առանց այս վերջին Փրադի: Ժողովի նախագահ իշխ. Գալլիցինը հրաժարվեց հարցը քվեարկության դնել, գրան՝ հասարակությունը վոր լցրել էր սրահի պատշգամբները և մասամբ դահլիճը, պատասխանեց բարձր սուլոցներով և բացազանչություններով՝ «կորչի», «հեռացիք» և այլն, իսկ 26 իրավասու (գրանց թվում է վարչությունը) հեռացան դահլիճից: Նախա-

դահը հեռացրեց հասարակության և հայտարարեց ընդմիջում: Այդ ժամանակ տեղի ունեցավ իրավասուների մասնավոր խորհրդակցություն, իսկ հասարակությունը, սրահից հեռացված, խմբվեց դահլիճներում: Ընդմիջումից հետո դահլիճում մնացել էին 27 իրավասու (ժողովին յեկամ 52 հոգուց): Վարչության նախագահը և անդամները, վոր 27-ի թվում էին, հայտնեցին, վոր դահլիճում ներկա յեն ի պաշտոնե, վորպեսզի հաշիվ տան իրենց գործունեյության մասին, վորպես վարչության անդամներ, բայց շարունակում են համերաշխ լինել հայտարարությունը ստորագրողների հետ:

Կարճ վիճարանություններից հետո նախագահը ժողովը հետաձգեց յերկու շաբթով. «մի շաբթ դորձնական իրավասուների բացակայության պատճառով»: Առանձնապես, նիստը շարունակելու կողմնակից էին Կուրսեզով և Յելազին (յերկուսն էլ դավառապետներ), «վորպեսզի չվարվեն այնպես, ինչպես ցանկանում են հայտարարությունն ստորագրող իրավասուները»...

... Ժողովի այս յեւքը Վլադիմիրի համար անսովոր բան է, և սրա ու կատարվող դեպքերի շուրջը ահագին զրույցներ կան...

Պետերբուրգի, Մոսկվայի և այլ քաղաքների դեպքերը խորապես հուզում են թուրքին, անգամ այնպիսի տարրերի, վորոնք մինչև այժմ բոլորովին մի կողմ են կանգնած յեղել հասարակական, քաղաքական շահերից: Մոմենտի վեհությունը բնազդաբար զգում է դիտակցում են բոլորը: Յեռանդուն հանդանակություն է կատարվում «հոգուտ՝ ազատության համար սպանված և վիրավորված մարտիկների ընտանիքների»: Այսոր (հունվարի 12-ին) յենթադրվում էր մեծ ծրագրով քաղաքական բանկետ, բայց ադմինիստրացիայի ճնշման ներքո՝ բոլոր շենքերը մերժվեցին:

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ 1905 Թ.

ՋԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ

1905 թ. անժողովանալի որերից 20 տարի յե անցել, յերբ լեւնացած ալիքներով հորդացավ նախ բանվորական, ապա նաև նախապետական, զինվորական ու գյուղացիական ապստամբությունը:

Մինչև 1905 թ. ել յեղել էյին գյուղացիական հուզումներ, գյուղացիները կռիվներ էյին ունեցել կալվածատերերի հետ, յիշել էյին բանվոր դասակարգի ընդվզումներ ցարական ծառաների և կապիտալիստների հետ, գնդակահարվել էյին բանվորներ, կալվածատերերի դեմ կռիվու համար տեղի էյին ունեցել գյուղացիների ցույցեր ու գործադուլներ: Սակայն 1905 թ. հունվարի 9-ը սկիզբ դրեց նոր, իր ծավալով ու խորութեամբ մինչ այդ չբուսնամբ բանվորական ու գյուղացիական մասսաների շարժումների, մանավանդ՝ բանվորական շարժումներին քաղաքներում: Դուք բոլորդ շատ լավ գիտեք, վոր կապիտալիստների, ֆարքիկանների ու գործարանների տերերի ձեռքին Պետերբուրգի տանջված բանվորությունը, այն բանվորությունը, վոր իր ծանր աշխատանքի չնչին վարձատրութեամբ սովամահ լինելու յեր գատապարտված, վոր իր դրութեամբ միանգամայն իրավազուրկ էր, վոր ուսուցանական պատերազմի հետևանքով հուսահատութեան գուռն էր հասել, մի պատերազմ, վորը նյութել էյին կալվածատերերը, կապիտալիստներն ու մեծ իշխանները, վորպեսզի ել ավելի գուլեն ու հափշտակեն, վորպեսզի ուրիշների յերկրները գրավեն: Դուք այդ բոլորը գիտեք: Դուք գիտեք նաև, վոր այդ բանվորները 1905 թ. հունվարի 9-ին լսելով քահանա Գյորգի Գապոնին, խաչ ու խաչվառով, թաղավորական պատկերներով, «Տեր փրկյա զժողովուրդս ք» յերդելով, իրենց կանանց ու յերեխաների հետ գնացին դեպի Չմեռային պալատ, կայսեր աղերսելու, խնդրելու, վոր նա փոխի այդ ժամանակվա գոյություն ունեցող իրավահարգը, բանվորներին ու գյուղացիներին ազատություն տա: Դուք բոլորդ գիտեք, թե բանվորները կայսրի կ'նչպիսի պատասխան ստացան: Կայսրն իր հավատարիմ հպա-

ուակներին, իրեն վստահացած ու հավատացած բանվորներին, կապարի սրտեռանակներով հյուրասիրեց: Հաղարավոր գիւղի- ներ և հաղարավոր վիրավոր ծերունիներ, յերեսաներ, կանաչք ու տղամարդիկ փովեցին ձյան վրա: Թագավորական պատկեր- ները մտնատակ յեղան, խաչ ու խաչվառները արյունաշաղախ ու ցեխաշաղախ յեղան: Յեվ բանվորները միայն այդ ժամանակ հասկացան, թե վորքան արդարացի էին բալչեիկներին խոսքերը, վորոնք բանվորների այդ գնդակահարումը գուշակել էին, վորոնք նրանց խորհուրդ էին տվել հետ կենալ առ կայսեր շքերթի գնալու մտադրությունից, վորոնք նրանց մասնանշել էին կովի իրական ճանապարհը, — գինոված ապստամբություն ընդդեմ կայսրի, կա- պիտալիստների ու կալվածատերերի:

Արյունաներկ կյուրակիի, հունվարի 9-ի լուրը տարածվեց բոլոր քաղաքներում, նա հասավ նաև ամենախուլ գյուղերը, վո- րովհետև մեր քաղաքների բանվորների մեծ մասն գյուղերում ազ- ցականներ ու հարազատներ, — հայր, մայր, յեղբայրներ, քույ- րեր — ունեն, կան նաև տնտեսություն ունեցողներ էլ: Այդ ժա- մանակ գյուղն սկսեց մտածել, մտածել սկսեց նաև գին- վորը, վորին սոցիալիստ պատրաստակամությամբ դուրս էին բերում փողոց և ասում, վոր նա այդ անդեն մարդկանց հա- մար փամփուշտ չիմայրի: Այո՛, գինվորը պետք է մտածեր, վո- րովհետև նա գիտեր, վոր այդ ժամանակ հեռավոր Արևելքում, Թանջուրիայում, հարյուր հաղարավոր գինվորներ կոտորվում են միայն այն պատճառով, վոր նրանց փամփուշտների և ումբրերի փոխարեն փառանքներով սրբերի պատկերներ են ուղարկում: Զին- վորը գիտեր, վոր այնտեղ, Արևելքում գինվորին խորհուրդ են տալիս փամփուշտը խնայել, իսկ այստեղ նրան ասում են՝ բան- վոր դասակարգի գեմ փամփուշտ մի խնայիր:

Վլադիմիր Իլյիչ Լենինը այդ ժամանակ ապրում էր արտա- սահմանում: Նա այնտեղ ապրում էր մեր կուսակցության վորոշ- մամբ: Կուսակցությունը գտնում էր, վոր նա բանվորական շարժ- մանն ու հեղափոխությանն ավելի ոգուտ կտա, յեթե ապրի ժան- դարմաներին անմերձեանալի վայրում և այնտեղից ոգնի մեկ իր խորհուրդներով ու ցուցմունքներով: Այդ ժամանակ Վլադիմիր Իլյիչը հրատարակում էր « Вперед » լրագիրը, վորը՝ ծածուկ կերպով սահմանից անց էր կացվում, տարածվում էր քաղաք- ներում և ընկնում էր մեր բանվորական խմբակների ու կազմա- կերպությունների ձեռքը: Այդ « Вперед » լրագրում Վլադիմիր

Իլյիչը ցուցմունքներ էր տալիս թե այդ կովին ինչպես պիտի տանել հեռաղայում: Գլխավորը, վորի վրա նա այդ ժամանակ փասնացույց էր անում, այդ բանվոր դասակարգի և գյուղացիու- թյան սերտ կապի անհրաժեշտությունն էր, բանվորների ու գյու- ղացիների միասնական պայքարի դաշինքը: Այդ բանն այն այն ժա- մանակ շատերը չէին հասկանում, չէին հասկանում մենչեիկնե- րը, չէին հասկանում և՛ տրոցկիստները, այսինքն՝ ընկ. Տրոցկու- կողմնակիցները: Յեվ միայն բալչեիկներն էին, վոր ուղիղ գիծ էին տանում, ի նկատի ունենալով, վոր առաջիկա հեղափոխությանը պրոլետարիատն ունենալու յե միայն մեկ հավատարիմ դաշնակից է այդ գաղնակիցն էլ լինելու յե գյուղացիությունը, և վոր նա այդ հեղափոխության ժամանակ իրականացնելու յե հեղափո- խական իշխանությունը — այսինքն՝ բանվորների ու գյուղացիների դիկտատուրան:

Լենինի այդ հայացքներն այդ ժամանակ մեծ վեճեր հարու- ցին: Մտեղծված մեծ շարժման ընթացքում շատերը չկարողա- ցան հասկանալ թե վորոնք են հեղափոխության մեջ գործող ղլխավոր ուժերը: Վլադիմիր Իլյիչ Լենինի և ամբողջ բալչեիկ- յան կուսակցության ծառայությունը հենց այն էր, վոր նրանք ճշտորեն նշել էին հեղափոխության շարժիչ ուժերը, վորոշել էին բանվոր դասակարգի ուժ հեռ լինելու և ինչպես կովելու ուղղությունը:

1905 թ. ամառը Սև ծովի նավատորմի « Потемкин » նավի վրա բռնկվեց ապստամբություն: Մեր պատերազմական նավատորմի գրությունն այդ ժամանակ շատ վատ էր: Գոտե- բազմական նավատորմից ուղարկված էր հեռավոր Արևելք, վոր- տեղ և նա համարյա ամբողջովին խորտակվեց, շնորհիվ հրամանա- տարության անկարողության ու անշնորհքության, շնորհիվ մեր նավատորմի վատ դրության ու պատերազմի համար անպատ- բաստ լինելուն և վերջապես, իհարկե շնորհիվ ճապոնական նա- վատորմի դերազանցության: Նավատորմի խորտակումը ցա- վառինս անդրադարձավ Սև ծովի նավատորմի գիտակցության վրա: Յերբ Սև ծովի նավատորմի վարժությունների համար բաց ծով գուրս յեկավ, այստեղ մի փոքրիկ պատմություն տեղի ունեցավ, վորը և առիթ ծառայեց նավատորմի ապստամբու- թյան սկզբնավորության: Յերբ նավատորմից մեկը, Ռմեյովը, դանդաղակց վատ կերակրի համար, — նավի սպաներից մեկը նրան




ապաստակեց, ու յերբ նախաստին այդ վերաբերմունքը չտանելով նույն ձևով նրան պատասխանեց, սպան նրան գնտակահարեց: Այդ ժամանակ նախաստինները մի քանի սպաներ բռնեցին ու ծովը նետեցին և « **ПОТЕМКИН** » նավի իշխանութիւնն իրենց ձեռքը վերցրին, նրա վրա կարծիր դըռշակ բարձրացրին ու գնացին **Ռդեսսա**: « **ПОТЕМКИН** »-ին միացան մի քանի ուրիշ նավեր էլ: Լենինն այդ մասին տեղեկանալով հեռագիրներով, իսկույն բնկ. Վասիլյեով-Յուժինին ուղարկեց, վորպեսզի նա նախաստիններին ողջն այդ ապստամբութիւնը կատարելու համար: Նա, ընկ. Վասիլյեով-Յուժինին ուղարկելով խորհուրդ տվեց, վորպեսզի մեր բոլշևիկյան կազմակերպութիւնն ամուր կերպով կազմի ապստամբված նախաստինների հետ, իսկ վոր դիտարկեն և, կապվի շրջակայքի գյուղացիներին հետ, բացատրելով նրանց, ինչպես հարկն է, թե ինչ է կատարվում, և աշխատել միաժամանակ վորքի հանելու բանվորներին ու գյուղացիներին: Սակայն շարժումը խեղդվեց. մնացած նավերը չմիացան ապստամբներին: « **ПОТЕМКИН** »-ը ստիպված յեղավ Ռոսիինիա գնալու և ապստամբված նախաստիններին այնտեղ ափ հանելու: Այս բոլորն ապագայի դասերի համար Լենինը հաշվի առավ:


1905 թ. աշնանը, յերբ Ռուսաստանում մի փոքր ազատութիւն տիրեց, Վլադիմիր Իլյիչը արտասահմանից յեկավ: Չնայելով, վոր ցարական մատնիչներով ու ժանդարմներով նա զեռ թագնովում էր, ուրիշի անցադրով ապրում, սակայն շարունակ Պետերբուրգ էր գալիս, հավաքում իր ընկերներին և խորհուրդներ տալիս, թե ինչպես պիտի գործեն: Բոլորի համար պարզ էր, վոր առանց հաղթական ապստամբութեան, ցարական իշխանութեան գոյութեան ժամանակ, վոչ մի ազատութիւն հաստատուն չի կարող համարվել, կայսեր տված բոլոր խոստումները մնում էին գատարկ խոսքեր: 1905 թ. հոկտեմբերին կայսրն այնքան էր վախեցած բանվորների ընդհանուր գործադուլից, վոր մի մանիֆեստ հրատարակեց, վորով ամեն տեսակի ազատութիւն էր խոստանում. սակայն այդ միայն առյերևութ էր: Այդ իսկ ժամանակ կարվածատերերը, վաճառականները, կապիտալիստները, Փարբիկանտներն ու գործարանատերերը կազմակերպում էին սև հարյուրակայնիւթներ, աջակցում կայսրին՝ բանվորներին ու գյուղացիներին ճնշելու, նրանց արյունխեղդ անելու:

1905 թ. դեկտեմբերին բանը հասավ բացարձակ զինված ապստամբութեան, Մոսկվայում ութ որ շարունակ տեղի ունեցավ իսկական ճակատամարտ. փողոցներում քարերից, գերաններից և այլ նյութերից բառիկադներ չինվեցին, վորոնց հետևում կանգնել էին զինված բանվորները, վորպեսզի զորքի շարժումը խանդարեն: Սակայն Մոսկվայի զորքի վրա կայսերը վստահ չէր, զորքեր ուղարկվեցին ուրիշ քաղաքներից, վորոնց թվում նաև լեյք-գոլարդիական Միմյոնովյան դուճը, վոր այդ ժամանակ հայանի յեր իր խստութիւններով. բանվորների համար այդ ժամանակ փամփուշտ չեյին խնայում: Նույնիսկ յեկեղեցիների դանդախանքում, ինչպես որինակ՝ Մոսկվայում Կուզրինի հրապարակի յեկեղեցու, ցարական դահլճները հրետանիներ էյին դրել և այնտեղից հրացաններից ու հրետանիներից կապարի սրհնութիւն էյին թափում հեղափոխութիւնը պաշտպանող բանվորների գլխին: Հարյուրավոր բանվորներ բանտ նետվեցին: Ցարական զինվորները վորոնք զորջ չինէին հազան նույն գյուղացիներն էյին, սակայն տակավին ցարին հլու հնազանդ, — հաղթեցին: Իսկ գյուղը շարժվում էր շատ դանդաղորեն: Յերբ բանվորական շարժումն իր գագաթնակետին՝ զինված ապստամբութեան հասավ, գյուղը նոր միայն սկսեց ինչպես հարկն է շարժվել, իսկ բանվորութիւնն արդեն միանգամայն ուժասպառ էր յեղել այն արյունառումներից, վորին յենթարկել էր նրան կառավարութիւնն իրեն հնազանդ զորքերի միջոցով: Այդ ժամանակ շատերը, մանավանդ մենչևիկները, սկսեցին բանվորներին դատափետել, դատապարտել, ասելով, ինչո՞ւ զենք վերցրէք, մի՞թէ դուք չեյիք տեսնում, վոր ձեզ սպանում են:

Սակայն 1905 թ. զինված ապստամբութեան այդ պարտութեանը Վլադիմիր Իլյիչ Լենինն այդպես չէր նայում: Նա այն ժամանակ ասում էր՝ «Չենք պետք էր վերցնել. սխալներ յեղել են, իսկ ամենամեծ սխալն այն է, վոր մենք բավականաչափ կապված չենք յեղել գյուղացիութեան հետ, յեթե մենք ավելի լավ կապված լինէինք գյուղացիութեան հետ, այն ժամանակ զորքն էլ բանվորների վրա հրացան չէր արձակի»: Յեվ մեր առաջ նա մի խնդիր դրեց — պայքար զորքի նվաճման համար, այսինքն՝ նրա համար, վորպեսզի զինվոր գյուղացին հասկանա, թե ով ինչի համար է պայքարում: Մենք այդ դասն ըմբռնեցինք ու յուրացրինք. — 1917 թ. մեզ հետ ունենալով զինվորական և գյուղացիական մասսան, — մենք







ԳԻՆՆ Ե 35 ԿՈՊ.

« Ազգային գրադարան



NL0178837

